AP
4-42

891.99-192
G-42

Cumpuglé - Cumpuglé jeck

ՔԵԱՐ

ՊԱՏԴԽՏԻՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Գ-42
42 գր.
841
91.99-192
Ս-42

ՔՆԱՐ

ՊԱՆԴԽՏԻՆ

ՏԱՂԵՐԳԵԱՑ

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐՊԷՅԵԱՆ

Հ. Ս. Գ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊԻՆ
«ՏԱՄԱՍՅԱՆ» ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԳԱՇԻՐԻ - ՀԱՄԱՐԵԱ 1942

«Վ՞ա՛յ ինձ զի ընդ երկար եղեւ պանդխտութիւն իմ.» ՍԱՂՄ

Le seul bien qui me reste du monde
C'est d'avoir bien souvent pleuré

A. DE MUSSET

ԿՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐԱՐԱՆ ԱՐԱՔԵԱՆ
1868 — ԱՌՕՅԼԻ

Архивно-Исследовательское при Сов. Мин. Арм. ССР
Научно-Справочная Библиотека
Инв. №
841

Գրադարան
ՀԱՍԱՐ
Հայաստանի Պետական

2220-2009

2011-05
1977

ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԵՒ

ԱՌԱՔԵԼԱՇԵՆՈՐՀ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Դ

ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍԻՐՈՂ, ԵՒ ՊԱՇՏՊԱՆ ԻՄԱՍՏԻՑ

ԵՒ ՀԱՅՐ

ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ՀԵՂԱՅԱԲԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՄԱՍՆԱՂՈՒՄԱՆ
841

ԱՌ ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻՍ

—

Զառաջիկայդ հաւաքածոյ՝ կամ եղեւ մեզ յորջորջել ԳՆԱՐ ՊԱՆԴԽՏԻՆ. քանզի թէպէտեւ յայլեւայլ ժամանակս եւ խտեղիս ոգեալ են տաղքդ, բայց առհասարակ արտաքոյ իցանկալի ափանց անտի Հայրենեաց, իպանդխտութեան մերոյ ժամանակս երգեցան, ընդ օտար աստեղօք, ուրանօր չգոյր մեզ այլ ինչ մխիթարութիւն՝ բայց պնդել երբէք երբէք զտամուկ լարս քնարին, եւ հնչեցուցանել զամոյիս ի ձայն ողբոց մերոց եւ հառաչանաց։

Ոմն ի հնումն՝ քնարաւն քաղցրութեան զվէմս երաստոյս, ասէն, խանդաղատեցուցանէր։ Պանդխտին քնար՝ թէպէտեւ զիրկ ի քաղցրութենէ անտի, թէպէտեւ միշտ ի դառն ողողեալ արտասուս, այլ ոչ սակաւ մխիթարութեան էր նմա տեսանել զի յողբաձայն իւր նուագս հառաչանաց՝ է երբէք զի եւ յաչս անդ օտարաց պղպջէին կայլակք արդահատանաց ընդ հայրենակորոյս որդիս Մայր Հայաստանի...

Բազմաց ի Տաղիցդ թարգմանութիւն ի Կա-
ճառս անդ Փերթողաց Գաղղիոյ վերծանու-
թեան հանդիպեալ բաղդի, եւ խրախուսական
դրուատեօք պատուեցան, եւ յօրագիրս անդ
տեսանելով գլոյս։

Եթէ յաջողեսցին Տաղքդ ներողամտութեան
եւ Հայ ընթերցանելեացն հանդիպել՝ ուրախ լի-
ցի սիրտ պանդխտին։ Այլ երանելի՛ եւս ապաքէն
զանձն իւր համարեսցի՝ եթէ դէթ ոմանք ի տաղից
յայսցանէ շարժեսցեն զպանդխտակից Եղբարց
իւրոց զսիրտ՝ խրտուռուչ յիշատակս Հայրենեաց,
եւ շիթս ինչ Հայրենասէր գորովանաց խառնեա-
ցեն յարտասուս անդ . . .

Այս լիցին իւր վարձք, սոյն միսիթարութիւն։

Ի. Ե. Ն.

ՅԱՆԿ ՏԱՂԻՑ

ՏԱՂ Ա. Օրհնեա՛լ որ սիրեն զհէգ Հայասաան 1
» Բ. Ո՛հ, յիշեցէք զՀայասաան 15
» Գ. Տէ՛ր, կեցո՛ զՀայասաան 19
» Դ. Հայկազն մօր Օրորք 23
» Ե. Վահան Մամիկոնեան 31
» Զ. Ցիշատակ Սիրելեաց 35
» Է. Իգերեզմանս 39
» Ը. Ցոյս 45
» Թ. Մատնիչն 53
» Ժ. Ցառաջին Մանուշակն 61
» ԺԱ. Գարուն 66
» ԺԲ. Այգ եւ Մանկուրիւն 73
» ԺԳ. Հողմիկն ամարան 77
» ԺԴ. Ցեսիցք տարոյն 81
» ԺԵ. Հայր, տէր երկնից եւ երկրի 85
» ԺԶ. Առ Լամարթին 95
» ԺԷ. Պանդուխտ Նահատակ 103
» ԺԸ. Խուրբն Դաւիթ Դունեցի 113
» ԺԹ. Առ Ցորդանան 121
» Ի. Ինախաւկայն 125

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԱՂ. ԻԱ. Գիտեր 135
» ԻԲ. Թռչունք 153
» ԻԳ. Ցարեմն Աստուած 153
» ԻԴ. Տայր ոք ինձ թեւս 161
» ԻԵ. Առ Մարիամ 165
» ԻԶ. Եղերք 174
» ԻԷ. Աւուրքն առաջին 185
» ԻԸ. Վարդ ծմեռանի 193
» ԻԹ. Ազգատեացք 195
» Լ. Ո՞վ իցէ նման քեզ յԱստուածս Տէր 201
» ԼԱ. Քո է տիւ 052
» ԼԲ. Սէր 209
» ԼԳ. Սաղմոսանուագ 229
» ԼԴ. Ապազայք 239
» ԼԵ. Արուսեակ 245
» ԼԶ. Իմաստ ազգասիրի 251
» ԼԷ. Առ Նախահայրն 263
» ԼԸ. Առ կանգեղն 269
» ԼԹ Առ ազատս Հայոց 275
» Խ. Արփին 283
» ԽԱ. Թախծութիւն 297
» ԽԲ. Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք 303
» ԽԳ. Առ աստեղս 309
» ԽԴ. Աւմայութիւն 315

ՏԱՂ. ԽԵ. Իմաճ հոգեհարազաս եղբor 319
» ԽԶ. Թագուհին երկնից 327
» ԽԷ. Ինա ուրախ եղիցին սիրտ մեր 339
» ԽԸ. Տէ՛ր, Երբ տեսցես 349
» ԽԹ. Բնութիւնք, կամ Մեծութիւն մարդոյ ... 353
» Ծ. Երգ Վարդանայ 369
» ԾԱ. Առ սիրողն Քնարիս 371
» ԾԲ Դասիարակն 375
» ԾԳ. Առ մահճաք հեռն 377
» ԾԴ. Հանճարն 379
» ԾԵ. Աստղն երեկոյի 385
» ԾԶ. Առ Վիքor Հիւկոյ 389
» ԾԷ. Ի տապան Իսահակայ Պարբեւի 399
» ԾԸ. Առ դաշտս Արտազու 403
» ԾԹ. Հառաչանք 405
» Կ. Հմայեակ Մամիկոնեան 409
» ԿԱ. Աստղն Բեւեռական 415
» ԿԲ. Սուրբ Էջմիածին 421
» ԿԳ. Երգ Ակռոբելոյն 423
» ԿԴ. Հայաստան 427
» ԿԵ. Ոգի տխուր 433
» ԿԶ. Առ խրճիթն 437
» ԿԷ. Առ Լուսին 441
» ԿԸ. Քնար Պանդխտին 445

JH

Թիւ 42 Գր.

ՓՆԱՐ

ՊԱՆԴԽՏԻՆ

ՀԱՅ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԳԱՀՀՈՅ

ՅԱՂ ԱՌԱՋԻՆ

—

ՕՐՇՆԵԱԼ ՈՐ ՍԻՐԵՆ ԶՇԷԳ ՀԱՅԱՍՏԱՆ.

Ամենայն զարդք նորա զերծաւ ինմանէ. փոխանակ ազատութեանն մատնեցաւ խստրկութիւն : (Ա. Մակ. Բ. 11)

Եւ ասէին.

«Ըզհայրենեացդ ասա մեզ բան, ով քերթող.
«Հայաստանեայց եմք սիրող : »
— Օրհնեալ էք դուք, ասպնջականք իմ պատուական,
Օրհնեալ որ սիրեն ըզհէգ Հայաստան : » —

Եւ հեծեցի, և զընային արտասուք...
Եւ ասէին. «Հիմ քերթողին այսքան սուգ : »

***

Ա.

Հիմ քերթողին այսքան սուգ . . .
Թողէք. յորդին Հայկայ են դիւր արտասուք . . .
Թող լայցեն աչք որ վեհ բարձանցն Հայրենեաց
Ձեղեն ժաման տալոյ զողջոյնս անձկայրեաց .
Լացցեն որ ոչ զայն կենսախառն հող ծանեան
Ուր կեցին հարքս, երկիր պագին, եւ անկան . . .
Այր ոչ յայն օդ՝ աքսորելոյն իղձ և ուխտ՝
Սիրտ մեծամեծքս բաբախեաց՝ սիրտ պանդուխտ.
Եւ ոչ շերթունք կարօտակէզ հովացան
Իկենասաբուխ ջուրց և յաղբերց Հայաստան:

Ո՜հ . ջուրք անոյշ՝ որ զդրախտին հին զափունս
Ծանեայք և ուսիս և գերգեցէքն ըզծաղկունս,
Ջուրք Եդեմայ, ձեր զի վիժակք քաղցրութեան
Անդէն յաղի աչաց աղբիւր դառնացան.
Զի պաղպաջուն պերտորեցաւ ձեր բիւրեղ
Խառնեալ իմարց մեր արտասուս յորդազեղ . . .
Ոչ՝ ևս իձեզ ցոլան կապոյտ մեր երկինք,

Ադինասերմ ծաղկանցն իձեզ ոչ այլ ծինք.
Ոչ ևս իձեր կարկաջ՝ խառնի ծանօթ ձայն,
Այլ օտարաց՝ ոյց ոչ առ ձեօք էր որրան . . .
Իսկ մեր տրխուր սրրտատոչոր հառաչանք՝
Բնաւ այլուր՝ 'ւ ոչ յեմակսդ ունին արձագանգ . . .

Բայց դուք օրհնեալ, ասպընջականք իմ պատուական,
Օրհնեալ որ սիրեն ըզհէգ Հայաստան:

Հէգ Հայաստան. ո զքոյդ զարդի տեսեալ զօր՝
Զանցեալն իմիտ առնուցու բաղդ քո հրզօր.
Ո՞ յանկելոյդ՝ Թէ էր երբէք բարձրաձէմ
Գլուխ տանէիր հանգոյն Լերին քո վրսեմ:
Իբր արշալոյս փոթորկածին յառաւօտ՝
Եւ ճակատուդ սահեցաւ փայլ անաղօտ.
Ոչ՝ ևս ես դու. և փառք քոյին մեծ և կեանք՝
Արդ յիշատակք են լոկ անշունչ անկենդանք:
Արդ ուղևորն առ քեզ անցեալ զընալով
Մեծ է Թէ քեզ տացէ ակնարկ մի զքթով.
Մեծ յոյժ՝ Թէ զքայլն հաշուէ կասել արժանի
Յերկիր ուր Փառք հանգեան ընդ դարս այնքանի.
Եւ ոչ գիտէ Թէ յոր հային արհամարհ՝

Դա լաւութեանց և բաջութեան էր աշխարհ.
Եւ թէ փոշին զոտիւքն իդէզ սիգապանձ՝
Աճիւն է դա երկրաղբղորդ դիւցազանց,
Որ իգահոյս փրշրեալ ազգաց հիւսիսին՝
Յաստեղս ըզգահն Հայաստանեայց վերառին:
Անդուստ արքայք քոյին՝ իշխանք աշխարհաց,
Արևելից տային ըզձայն պատգամաց.
Անուն քո՝ ահ յոտին, էր յոյս դաշնակցին,
Եւ նիւթ վրսեմ երգոց իքնար քերթողին.
Արդ զայն՝ օտարն հրնչէ իհեգն անպատկառ,
Եւ Փնարս՝ իսեաւ քոզ հեծեծէ զայն թրշուառ...

Բայց դուք օրհնեա՛լ, ասպընջականք իմ պատուական,
Օրհնեա՛լ որ սիրեն ըզհէգ Հայաստան:

Ձերկիր՝ յարփւոյն զբրգեալ իշողս անդրանիկ,
Ուր բընութիւն՝ ցանգ նոր և ցանգ գեղեցիկ,
Մահու կարծէք զայն անյարիր գերեզման.
Ոչ՞ դա կենաց տրւաւ երկիցս որորան:
Ձերկիր՝ ուր բաղդն ապաւինէր մարդկութեան՝
Կարծէք բաղդին այցելութեան անարժան,

Իբր ըզփապար իխորշ լերանց խորասոյզ
Ցորմէ իդող սրացեալ փախուստ առնու լոյս:
Զի յայպն և ոչ կարեկիր ակն արկանել
Ցայն որ չունի արդ բայց աւերս ցուցանել.
Իսկ մոռացին ըզհայրենիս իւրեանց Փառք
Զի ոչ ևս յայն տայք մեծարանս, ով օտարք.
Զի դըշխոյին կորզեալ է քոզ մեծապանձ՝
Մերկ կարծիցէք ըզզլուխ նորուն յաւիտեանց.
Պիշ զակն յառէք, դեռ ևս Ցազին լուսահատ
Հետք շողշողեն վեհադիտակ յայն նակատ,
Ճակատ՝ որ հետ ըզհետ պըսակըս չորիս
Աբկաւ զինքեամբ մի բան ըզմին լուսալիս . . .
Ո՜հ՝, մինչ ազգաց դու բաշխէիր Ցազ և բարձ,
Եւ Ցազադիր գըլուխս յաՑոռս գերամբարձ,
Հայաստան, այս նակատազրեալ էր քեզ, մայր . . .
Բաղդ՝ դաշնակից հաւատարիմ քեզ յամայր
Իպողոտայն փառաց՝ նենգեալ քեզ յանկարծ
Սրանայր՝ տըւեալ ոչ ողջոյն ոչ յոյս իդարձ,
'Ի անունդ՝ որոյ եզր և կամ վերջ չերևէր՝
Զերդ բոց ՑեՑև իգերեզմանս՝ շիջանէր:
Ոչ, քոյին ոչ յայլ ինչ եղեն կեանք երկայն՝
Բայց զի զգայցես երկարազոյն զմահդ յապայն.

Զի զմէն մի քո զանցեալ պատիւ եւ հրբնուանս
Դու բաւեցես յմյաքան արտօսր և ձաղանս,
Զի զքոյդ տեսցես փրշրեալ մական երկնատուր
Իբր ըզշուշան մի երէոց առաթուր.
Լայնածաւալ և ըզսահմանս քո փառաց
Տեսցէս զերդ դաշտ ուր մահ ըզթև տարածեաց.
Մահ իմոգիս, մահ իսիրտ, մահ յամեն կոյս,
Անմահ՝ անէծք լոկ, վիհ յոր կամք խորասոյզ...

Բայց դուք օրհնեա՛լ ասպընջականքդ ազնըւական,
Օրհնեա՛լ որ սիրէքդ ըզհէգն Հայաստան:

Ասէք սիրել. բայց սակայն սէր իմն է դայ
Զոր հէգ թըշուառ իձէնջ յօճան իւր կարդայ.
Եւ Հայաստան՝ տայ ձեզ աւուր գաղափար
Որոյ հագիւ ծընեալ՝ ունի զայն խաւար:
Ո՜հ, որ յերկար զոլոր ձրգեալ ունի մեր
Երբէք իլոյս ոչ փարատի այս գիշեր...
Տեսցո՛ւք և մեք զելս խոստացեալ թըշուառաց,
Մեք՝ որ չուտեմք բայց թըշուառին դառն ըզհաց...
Ցարեւելից ցանգ տարածի յաշխարհ լոյս,
Արփին յետ մըտից դարձեալ գելիցն այցէ կոյս.

Արեւելից մեք անդրանիկք հարազատ
Ցերբ յաղջամուղջ դանդաչիցիմք միգապատ.
Հրատն որ իզլուխ Մասեաց վառէր բոցալիր
Եւ ոչ մի տարր անվոտիցէ կենսակիր ,
Ոչ՞ մի կայծակն՝ որ ոստնուցու նորախանձ
Դարձեալ ըզսիրտս հրդեհել Հայկազանց,
Ցորժամ իդոյն շիջելափառ սեաւ մոխիր
Մերձեսցի Մատն այն այցելու կենսաձիր:
Որ յանէիցն իխաւարէ հան ըզբոց ,
Եւ սերմանեաց զայն անսահմանն ընդ միջոց,
Հայաստանեանց աջն այն իցէ միայն ուիշտ ,
Թէ լոկ արդեօք իցուս առատ և իվիշտ . . .

Մի դուք,ոհ, մի՛ ոյց աչքդ իլոյս պարարին՝
Իբրև ըզմարդ յառուս որ ոչ նըւազին ,
Քառեակ դարուց զակնկալիսն , ոհ զերկար ,
Մի՝ մեր սըրտից մի զայն բառնայք մըխիթար:

Բայց դուք օրհնեալ ասպընջանք իմ պատուական,
Օրհնեալ որ սիրէքդ ըզհէգն Հայաստան :

***

Բ.

Ողջոյն քեզ ով աստուածայինդ, ողջոյն յոյս,
Այր Թանձր ըզքող յաչաց հերձեալ ծագէ լոյս.
Ողջոյն որ յիմ շողաս քրնար դողդոջուտ
Ձերդ արուսեակ աւետաւոր զառաւօտ.
Է՛ջ ոհ ազգի մոջ յաղերս խոստանալ
Նորոյ աւուր իմն արշալոյս գեղափայլ.
Բիբք որ յարտօսբր մրԹագնեալ են խաւար՝
Ողջունեսցեն անձկաւ զայգոյդ նոր ըզվառ,
Իբր ըզնախնին զաստուածալար եօԹնարփի՝
Որ իՄասեաց ետ աւետիս աշխարհի . . .

Տէր, Թէ բազուկդ յողորմուԹեան ևս հրզօր՝
Դարձեալ զԼերամբ մեր սուրբ ըզնոր ցուցցէ զօր,
Երդնումք զի քեզ զուխտից սեղան ամբարձցուք
Անդ՝ ուր յետ Ձուրցն հոտոտեցար անուշիւք.
Եւ ողջակէզ՝ ոչ խոյք այլ սիրտք վըշտամեռ՝
Որ՝ւ խիորձոյդ բով պահեցին զկնիք քո, Տէր:
Բայց Թէ դեռ ոչ ճակատագիր մեր լրցաւ,

Դեռ ոչ երկնից՝ չափ ողբքս և վիշտն ամբարձաւ,
Երդնում եմ Հայք ուխտ աղի՝ կընքեալ յաղի լաց.
Երդնում եմ իգլուխ տապանակիր սուրբ Մասեաց,
Երդնում եմ իհող՝ ուստի նախկինն առաւ մարդ,
Եւ ուստ նախկին գարուն ըզշնորհն առ և զվարդ.
Իհող՝ որ զհարց մեր ամիսոիկ սուրբ զոսկերս —
Ակօսք՝ ուստի զկենդանութիւն յուսամք մերս. —
Երդուեալ յո դեհ և անկցի Հայն իբաղդէ՝
Հիմալայայ սարս, յԱլպս, իԱէն, յԱփրիկէ,
Մի՝ զժառանգեալն իհարց անտի մոռացի
Զազնըւարար սէր իյատակն հայրենի.
Մի ըզփառացն աւուրս, մի զտօն տարեկանս՝
Ցոր հարց մեր սիրտք բաբախեցին իհրճուանս.
Եւ զաղետից մի՝ յոր արկին աչաց զուխս՝ —
Մըկըրտութիւն՝ իւ լըւացին ըզմեր գլուխս —,
Մի զօրն՝ ըզմեզ իմօրէ հար վըտարակ
Ո՛ զիտէ ցոր վայր և ցո՛ ձիգ ժամանակ.
Ի՛ իմէնջ՝ նըժդեհս արար յաշխարհս ամենայն,
Նըժդեհս՝ և առ քեզ Թէ զառնամք, մայր Հայաստան.

Բայց դուք օրհնեա՛լ, ասպընջակունք իմ պատուական,
Օրնեա՛լ որ սիրեն ըզհէքն Հայաստան:

Լրաւայ ուստեք. «Հրէից այդ ազգ նրմանի .
«Յանեալ ցբրուեալյն և շանուն յոյս տանի . . .»—
Անգութք. դուք զի զՔշուառութիւն և զոնիր ,
Զանէծս և հեծս ինոյն դընէք մի կշիռ:
Իբրև զեղբարսն Յուդայ և Հայ դատապարտ՝
Ո զդրօշ Խաչին լրաց յարիւն իւր անպարտ ,
Ոյր Քաղ՝ նախկին եկաց վրսեմ պատուանդան
Յոր աստուածեանն յետ Գողգոթայ ել Նրշան :
Ահ՝ , մեր անգէտ լերուք ըզփառս և ըզվէպս,
Ժրխտեալ ըզբաջս մեր ծաղրեցէք զերաշխէպս ,
Մոռացարուք զերկիր՝ ծընող մարդկութեան,
Զերդ ապաշնորհ որդի զարգանդ մայրական ,
Այլ զէթ Քողէք զի ընդ լրման ըստուերաւ
Հանգչիմք զերդ ծառ յերկիր զոր մարդ ոչ ծանեաւ,
Անէ, և վեհ դիտակ յերկին ամբառնայ,
Զի անյագուրդ ոչ մերձեցան ձեռք ինայ:
Այո, յածիմք գլուխ խոնարհեալ ակընկոր,
Եւ հարցանեմք. «Որ՞ արի տայ լոյս մեզ այսօր.»
Բայց ոչ Քէ վատ շահ մեր քայլիցն է լուցկիք՝
Այլ աղէտք մեր, անհաս ոյց զոն ՀԱՅՐԵՆԻՔ.
Ո զմեզ պանդուխտս առնեն յաշխարհս ամենայն ,
Պանդուխտ Քէ դարձ՝ ւ իբնիկն առնեմք Հայաստան:

Բայց դուք օրհնեմ՝ ասպընջականք իմ պատուական,
Օրհնեմ՝ որք սիրեն ըզհէզն Հայաստան:
Եւ հեծեցի, և զընային արտասուք.
Եւ չասացին. «Զի քերթողին այսքան սուգ:»

***

Գ.

Սակայն իզուր. իզուր աղէտք մաքառին.
Սուր, բրռնութիւն և թշնամանք օտարին...
Աւանիկ չիք երկիր, 'ւ ոչ կայք հանգըստեան,
Եւ ոչ անդորր յուսամք ունել մեզ տապան.
Բայց Է մեր է՝ որպէս իթոք՝ ինչ մի լոկ
Ում չիք հրաման զի կորզեսցէ և ոչ ոք.
Անուն մի սուրբ, ժառանգութիւն մեր միակ,
Զոր ոչ աղէտք, ոչ կապանք, ոչ ժամանակ
Բառնալ ի մէնջ ոչ բաւեսցեն յաւիտեան,
Ոչ՛, ոչ, մինչչեւ կորզեալ սըրտից հայկական.

Անուն մի վեհ, որ զի կապտեալ մեր և գանձ՝
Դեռ ճոխ Ցբիմք մինչև չունել յոր նախանձ.
Անուն մի քաղցր, որ մեզ զանցեալ փառս և կիրս
Սէր, զիղձս ունի, զակընկալիս և ըզձիրս.
Որ իցբրուեալ բազմահազար սիրտս իսփիւռ՝
Ունի ըզգանգ իմն անթարգման զգացմանց բիւր.
Անուն որ զհարսըն մեր վառէր նահատակ
Իվեհ հանդէս յաղթանակաց յաղթանակ.
Զոր՝ առաջինք մեր զոչեցին անձկայրեաց՝
Երբ քարշ ընդ դուրս վարէին քաղցր Հայրենեաց.
Զոր՝ ուսուցին յաքսորսն երկնից ամենայն՝,
Զոր՝ հեծեցին յոր սեաւ մերոյս ծընընդեան.
Ցո զմեզ իգիրկսն առեալ լալով վարժեցին,
Դողդոջ մատամբ ցուցանելով ուր Ադին.
Եւ իվերջին շունչ՝ իցաւոց յետին պահ
Ըզդէմսն յայն մարգ ուղղեալ յոր քաղցր էր և մահ՝
«Ո՜հ, Հայաստան, Հայաստան»
Կողկողեցան և մեռան :

Զքեզ ամփոփեալ ով սըրբազան հարց մեր շունչ,
Զքեզ սիրտքս հընչեն, շրթունք կրկնեն մշտառունչ,
Ո՜հ, Հայաստան, Հայաստան . . .

Եւ ուխք Վոլկայ, Գանգէս, Ուրալ և ալիք,
Վոսփոր և Սէն . . . ընդ մեզ հեծեն ցաւալիք
Ո՜հ, Հայաստան, Հայաստան . . .
Եւ հեծեսցեն ընդ մեզ, աւաղ, յաւիտեան . . .

⁂

Ցոգւոց հանի ... — իղող մատանցս անկաւ քնար,
Եւ յարտասուացս՝ ինչ ոչ տեսի յայն խաւար,
Բայց հառաչմանցս ողբակից հեշտ լքեալ ձայն,
«Ո՜հ, Հայաստան, Հայաստան:»

Թիվ 42 Պ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԱՂ Բ.

ՈՉ ՑԻՇԵՑԷՔ ՉՀԱՅԱՍՏԱՆ

Յորժամ յազգային համախումբք իտոն՝
Սիրոք առ սիրտ հրպեալ, յաղօթք, յիղձ ու ձօն,
Ոգիքդ ի հրբռնուանս և իսէր եռան,
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան :

Յորժամ սրգաւոր կարկամին շրթունք,
Կամ զետայորդոր պաղպաջին աչկունք,
Յորժամ սիրտ լքեալ հեծեծէ անձայն՝
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան :

Յորժամ ըզնորեկ ծիծռան լսէք ճիկ՝
Պանդխտին անհոյշ քան բնաւ դայլայլիկ.
Եւ զարնան իսիւռ աւետիք զբնան՝
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան :

Թորժամ ըմպէք ջուր՝ որ ոչ Հայ յերկնից,
Եւ ոչ յԵրասխայ գըլեալ սառն ուղխից,
Կամ ոչ բըխեալ սուրբ յաղբերց Իննակնեան,
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Թորժամ հեշտարար շընչիցէք սրդոխ՝
Որ ոչ անց ընդ ձեր հայրենախառն հող,
Կամ վարդ՝ որ ոչ հարց փրթթեալ խտապան՝
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Թորժամ լուսացայտ յայգն ըզսար դիտէք
Կամ զբստուեր լերանց ձըգեալ ընդ երեկ՝
Պանդուխտք, որ Մասեաց չէ ստուեր 'ւ արտեւան,
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Թորժամ ոք խօսի ձեզ զիւր հայրենեաց,
Եւ սիրտն ինորուն բաբախէ փառաց,
Օտարամեծար մի շըլանայք յայն.
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Թորժամ հայրենի յատակին խոես
Հալի ոք անձկաւ, կամ դրդայ սիտակէզ,
Ասէ, «Հայրենիք [illegible] քաղցր են մարդկան . . .»
Ո՜հ, յիշեցէք [illegible]:

Թուշ երբ զառագաստ ոք պարզէ յայն դեհ՝
Թորմէ անջատեալ՝ 'ւ իմանաս եմք նըժդեհ,
Եւ մաղթէ զերկինս՝ անդ դիպել մահուան.
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Իսկ յորժամ իձեր յերկրէն ոք օտար
Դարձ ընդ հարց ձերոց առնէ սուրբ նըշխար,
Երջանիկ քան զձեզ, որդիք տրտմութեան .....
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Թուշ, ո՜հ, յուշ յաւէտ երբ ոք ձեր եղբայր
Ձեզ պանդըխտակցել գայ լալեացդ իվայր,
Մի 'նդ նա արկանել զաչքս ցըրտութեան,
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Օն՜, փարէք տարփմամբ, տուք զիրկս ըզնովաւ,
Երանի ում մեր 'հայրենիս ծընաւ,
Այր բիրք յեղեմին արև փըթթեցան,
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Ո զնոյն երկնիւք՝ [illegible] խօսեալ է զձեզուն,
Նըստեալ ընդ [illegible]՝ ուր հարք կան իբուն,
Եւ տըւեալ հանդոյր յոր [illegible] հրան.
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Архивная Справочная Библиотека Инв. № Армянской ССР
Հանրագիտարան Հատոր 12

(2967-62)
2220-2004

Որ ինոյն կանխեալ սուրբ եկեղեցիս,
Եդ ճակատ՝ նոցուն յարտասուաց տեղիս,
Եւ զխոր կամարօք՝ լրաւ ձայնս հեծման.
Ո՜հ, յիշեցէք ըզՀայաստան:

Թուշ, ո՜հ, յուշ... հարցէք ուր է Հայաստան,
Ի իվայրէդ յոր կեայք՝ բանի բացական,
Ո՜հ, բայց 'ւ իսըրտէդ նոյնքան հեռաստանն...
Հա՛յք... դուք յիշէք ըզՀայաստան:

ՏԱՂ Գ.

ՏԷՐ, ԿԵՑՈ ԶՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԳ



Ա.

Տէր, կեցո՛ զՀայաստան,
Լ՛ուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր, կեցո՛ զՀայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Յերբ, Աստուած հրզօր, Աստուած Գրիգորի,
Աստուած զոր կարդամք ի խորոց սրտի,
Թողուցուս զի զմեր հայրենիս Թշուառ
Սուր, հեռ և հերձուածք առնուցուն յաւար:

Բ.

Տէր, կեցո՛ զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր, կեցո՛ զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Տեա՛ս, օտարք անզուգ այպն զմեօք առնեն,
Եւ զսրբութեամբք մեր Ցշնամանեն.
Բայց մեք երբ իքոյդ հովացաք իսէր.
Ո՞չ և իմահու զքեզ պաշտեմք իստուեր:

Գ.

Տէր, կեցո՛ զՀայաստան,
Լուր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր, կեցո՛ զՀայաստան,
Ցարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Տէր, Տէր, դու զմերս օրհնեա՛ զուղղութիւն,
Որ իԳրիգորի սրբեալս եմք արիւն.
Դու զնորուն պահեա՛ հաւատս անսասան,
Եւ զԱԾոուն իւր սուրբ իՀայս յաւիտեան:

Դ.

Տէր, կեցո՛ զՀայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր, կեցո՛ զՀայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Իբր զզարնանի ցող խսիրտ եղբարց
Ծաւալեա՛ զսէր, հեղ զոգի մեր հարց,
Եւ իջա՛ ի լուսոյ նոցա տա՛ր զմեզ,
Իբր զիօտ յարօտս քո ի կաղէս:

Ե.

Տէր, կեցո՛ զՀայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէր, կեցո՛ զՀայաստան,
Յարո՛ զնա նոր յիւրն աւերս:
Ո՜հ, շատ իսկ աղէտք ծանրացան իմեզ,
Շատ իսկ մահ իմեզ հաշուէ ողջակէզ .....
Տէր կենաց, յերկիր մեր՝ անբա՛ւ տապան՝
Ա՛րկ զշունչդ՝ և կեա՛նս առցէ Հայաստան:

***

Թիւ 42 Պ.

ՏԱՂ Դ.

ՀԱՅԿԱԶՆ ՄՕՐ ՕՐՕՐՔ

ԵՐԳ

Ելնջեան դու քաղցրիկ իմ հրրճուանք և սէր,
Ով՛ իմ անդրանիկ երկնատուր նուէր.
Դու իմ երազոց կէտ յոյս դու բիւրից,
Քոյին մօր պարծանք և բերող օրհնից.
Իմ սիրուն մանկիկ,
Ով՛ մօրդ հրեշտակիկ:

Քեզ ես սիգապանծ իկանայս Հայոց,
Ոչ ես յանծաղիկ յիմ շիկնիմ ինոց.
Ոչ ես ընդ այլ մարց բաստ բերեմ նախանձ,
Ով՛ զոր ես այնչափ լալով զբտի զանձ,
Իմ սիրուն մանկիկ,
Ով՛ մօրդ հրեշտակիկ:

Դու յանձուկ այդ քո և քընքոյշ իրան՝
Զամէն պարփակես իղձս իմ, ով Միհրան.
Աստեղք են մանունք աչք քո լուսահուր
Որ յիմ անդ գիշերս ծագեցին տըխուր,
Իմ սիրուն մանկիկ,
Ով մորդ հրեշտակիկ:

Ո՜հ, զայս մայրենի համբոյր սըրտազեղ
Զոր քաղել ուսայ նախ յայտ քո անմեղ,
Երբ՞ և ճակատուդ տամ սարդինազարթ,
Ուռոգեալ յիմ ցող ըզփառաց սաղարթ,
Իմ սիրուն մանկիկ,
Ով մորդ հրեշտակիկ:

Երբ՞ սիրունդ ըզգլուխ խոնջ իքիրտն և հոգ
Արկցես զերդ այսօր հանգչել մորդ իզոգ.
Եւ որպէս զերկին երազէ սերկեան՝
Անդ հոգիդ առցէ ճախր ի Հայաստան,
Իմ սիրուն մանկիկ,
Ով մորդ հրեշտակիկ:

Տես ըզնա առ քեզ աչօք խընդամիտ
Եւ ըզքաղցրագոյնն արձակել ժըմիտ,
Տես զոր ինորուն սըրբեա յայտից շիթ
Ակունք ցոլան վառ ինիւս պըսակիդ,
Իմ սիրուն մանկիկ,
Ով մօրդ հրեշտակիկ:

Պըսակ . . . ոհ այո զայն ըղձամ պըսակ
Զոր Հայրենեաց ձեռք բոլորեն, որդեակ.
Զի այն է ևեթ ծաղիկ մըշտակեաց՝
Որ իբուրաստան ծաղկի Հայրենեաց,
Իմ սիրուն մանկիկ,
Ով մօրդ հրեշտակիկ:

Ոհ՝, թէ կայծ իկայծ այդ քո սեաւ աչեր
Ունին շըլանալ իլոյս մըթաբեր,
Թէ յօտար յառել գեղ փառս և երկին՝
Եւ ոչ անձկանօք իդրունս Եդեմին,
Իմ սիրուն մանկիկ,
Ով մօրս հրեշտակիկ.

Թէ շըրթունք քո թերթք վարդից քաղցրաշունչ՝
Նախկին արձակեալ, որդեակ իմ, մըրմունջ՝
Ոչ ըզհետ անուան երկրի 'ւ երկնից Հօր
Ըզ Հայաստանի հընչէ՝ զՄ՚օր քոյդ մօր,
Իմ սիրուն մանկիկ,
Ով՛ մօրդ հրեշտակիկ.

Թէ սիրտ քո զեփիւռ՝ որ նընջէ խաղաղ՝
Զարթուցեալ երբեմն յաշխուժից իխաղ,
Ցայլ բաբախէ սէր, ոչ Հայաստանեաց,
Ի ոչ վազէ ընդոստ յանուն Հայրենեաց,
Իմ սիրուն մանկիկ,
Ով՛ մօրդ հրեշտակիկ.

Թէ դաստք քո փափկիկ և ողորկ ծըղիք՝
Կան անշարժ՝ յորժամ կարդան Հայրենիք.
Կամ ըզսուրբ պարտուցդ ըսպաս սիրալիր
Թ՚ըշնամեաց նորա մատուցանեն ժիր,
Իմ սիրուն մանկիկ,
Ով՛ մօրդ հրեշտակիկ.

Ոհ՜, լաւ ես զի քո և իմ բիբք փակին՝
Չի մի այն աւուրք հասցեն խաւարին,
Լաւ ես զի մի այդ շըրթունք անարժան
Մի բընաւ ուսցին զանուն մայրական.
Իմ սիրուն մանկիկ,
Ով՜ մորդ հրեշտակիկ.

Լաւ ես զի այժմէն սիրտ այդ ապերախտ
Թալկասցի զերդ վարդ որդնաքանց իդրախտ,
Եւ բեկտին բազկիկքդ այդ անփառունակ՝
Որ արդ զուլամբ մորըդ պատին իմանեակ.
Իմ սիրուն մանկիկ,
Ով՜ մորդ հրեշտակիկ.

Եւ այս սիրտ որ կեանս ետ՝ և ուր ըզգլուխ
Արդ դընես սիրոյն ըմպել զանոյշ ուխ,
Լաւ ես զի աստէն սառնուցու յանկարծ՝
Քան ջեռուցանել զիժ մի Հայրենեաց,
Իմ սիրուն մանկիկ,
Ով՜ մորս հրեշտակիկ . . .

Բայց քո զի երկնից ամբոխի երազ . . ,
Փախեաւ քո ժըպիտ . . . ոհ յարտօսր իմ լաս . . .
Ոչ, Մինրան, մի ևս այլ այս բանք տըխուր.
Ահա լըռէ մայրդ յայս անհոյշ համբոյր.
Իմ սիրուն մանկիկ,
Ով մորդ հրեշտակիկ:

***

Ներնջեան դու քաղցրիկ իմ խընծիդ և սէր,
Ով իմ անդրանիկ երկնատուր նըւէր.
Իմ երազոց կէտ, լիցիս և յուսոյն,
Պարծանք 'ւ օրհնութիւն դու մորդ ինոր բոյն.
Իմ սիրուն մանկիկ,
Ով մորդ հրեշտակիկ:

Բայց և Հայրենեաց յաւելցիս դու փառս,
Եւ ես Հայկազանց օրհնեցայց իմարս,
Ի քոյդ անուն՝ ոչ լոկ իմ սիրտ ինինդ՝
Այլ Հայոց ողջոյն տացեն Թինդ ինինդ,
Իմ սիրուն մանկիկ,
Ով մորդ հրեշտակիկ:

Եւ օտարք ուսցին զանունդ՝ իքեզ պիշ,
Եւ օտարուհիք՝ իմայրդ մատնանիշ
Հրծծեսցեն. «Որդի սա զայս ծընանի.
Երանի՜ Հայկազըն Մօր, երանի՜ . . .
Ո՛վ սիրուն մանկիկ,
Հայոց հրեշտակիկ:»

Գր. Հ2 Գր.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՂ Ե.

ՎԱՇԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ.

ԵՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ



« Իմայն փողոյ տագնապաւ իդաշտին Գերանայ » :

ՍԵՐԷՈՍ

Որդիք Հայկայ, որդիք փառաց,
Զարթիք..... կոչէ զձեզ Աստուած.
Տեսէք Մասեաց իզլուխ ազատ
Ըզբաղդ Հայոց նորահրատ.
Աչք ձեր իդոյն լուսացին բոց,
Սիրտք վառեցին սիրտք Հայոց.
Եւ մբխեցին բազուկք կուռ,
Քան զեղարդունք բոց իհուր.
Յազատութեան ասպարէզ
Թափել շանթիս երկնակէզ:

Օն՛ փողեցէք, ելէք իղղորդ,
Ատուած է ձեր առաջնորդ.
Լրա՛յք. Փառք ձեզ կարդան հրաւէրք . . .
Տեսէք անդուստ հարց ըստուերք
Անվրէժք առ ձեզ կարկառեն ձեռս.
Որդի՛ք, խնդ հարցդ էք յաղերս . . .
Արի՛ք, ընդ ձեզ դաշնաւոր
Արդարութիւնն է հրզօր,
Եւ զլայնալիճն առեալ Հայկ
Էջ քաջորդւոցն իբանակ:

Օն՛. . . ոյք ի Հայս մըտին զերդ Բէլ՝
Ուսան սա վայր է անել.
Ըզսուր մահու ած շուրջ պահպան
Տէր յԵդեմեանն Հայաստան.
Ասէ. Ո զսոյն կոխէ սահմանս՝
Մի ողջ դարձցի յիւրն իվանս.
Որ վասն Հայոց ած երկաթ՝
Ինք պընդեսցի յայն կաշկանդ.
Եւ զոր կոխել զայր անսահ
Համբուրեսցէ Թոպամահ:

Արիք իմ բաջք, որդիք Հայկայ,
Վրիժուց ձեր օր հասեալ կայ.
Երկինք զինեալ են դատել հուրբ
Պըղծողսն ըզձեր երկիր սուրբ.
Թէ զձեր խնդրեն սուր, տէգ, աղեղ,
Տուք, Ծաւիեցէք կարկտի տեղ:
Ցասումն արդար է ձեր Հայք,
Անցեալն գոչէ. «Մի դըլայք».
Ազատութեան օր սա ձեր,
Նոցա՝ անտիւն հաս գիշեր:

Արիք, ծաւալ տուք բարձր յայեր
Խաչապըսակ ըզդրօշ ձեր.
Զէնք ուր Փրկչին փայլի նըշան
Մի ևս անկցի տըրտմական:
Օն՛ զաջդ իվեր ձըգէք յերկին՝
Հայք, տուք երդումն ահագին.
Մի ձեռքդ իջցեն, մի սուսեր
Դարձցի հանգչել իյազդեր,
Ցորչափ դեռ շիթ մի վերջին՝
Մընայ յերակս ոտոխին:

Հանպա իմ քաջք, ծն անդր յառաջ,
Զեզ հովանի կայ սուրբ խաչ,
Բրթեսցին յայն տէգք և փրքին
Զոր ձեզ հարցէ Թշնամին:
Վաշ, ոյց հասցեն փառք՝ յայն վրսեմ
Թրռչել զահէդ ամպաճեմ.
Անեակ ոտամբ՝ զլուխս ոտխս
Թոպել Թափել իդրժոխս.
Մուծանել զաջն յերկնից սահման
Ազատ Թողեալ զՀայաստան:

Թիւ 42 Գ.

ՅԵՂ. Զ.

—

ՅԻՇԱՏԱԿ ՍԻՐԵԼԵԱՑ.

ԻՆՆԱՐ ՏԱՐԻ.

Տիւ որ այսօր ըզմեր ծագէ դեռ զընտով
Նորեկ, զբարթ, մանկականաւ խայտալով.
Նոր-անցելոյն՝ հրեշտակ, ապայց՝ կարապետ,
Ով Սիրելիք, ըզձերդ ինձ յուշ ածէ զկէտ:

«Աւետիք նոր,— զոչեն—, բարեաց վերբերող».
Ես՝ անջրպետ նոր զայդ զիտեմ, նոր կոծող
Որ ընդ պատկերդ եւ յիմ անկեալ սիրտ տրխուր,
Կըտրել զաստեաց լոկ մընացեալ զոդ՝ զաւուր:

Այսուհետև գայցեն նոր տիւք և գարունք,
Տերևք գայցեն, նոր ոճ և քիստ և ծաղկունք,
Եւ չըզուցէ ինձ խափանս տըխրագին
Ասել. «Զայդ այգ, փըթիթ՝ ետես սիրելին»:

Ո՜հ, անց համայն յոր հըրճուեցաք թև ի թև,
Անցին դաշնակք, զեփիւռ, բուրմունք և տերև...
Ուր՝ քաղցր ըստուերն այն ընդ որով հեշտալիր
Ըղձանայաք երկնի՝ թ՝այսքան հեշտ երկիր:

Այլ հեշտ՝ ցորչափ հեշտացուցիչ սիրելիք.
Նոքա զընան. զինչ ևս իսմին տարփելիք.
Գարնանաբեր ծաղկամբն է հեշտ բուրաստան.
Այլ ո՛ զաձուն այցէ թէ տունկք զօսացան:

Ո՜հ, մոռացման է լոկ այս վայր, մոռացման...
Զերդ ըզճըչիւն առ խինդ կամ սուգ հէգ ծիծռան՝
Զոյր ոչ ևս օդք մայրիք տան զանգս յերեկի.
Եւ մեր ո՛չ ևս անուանք յաւուրն երկրորդի:

Տիւք անընդհատ հոլովեալ սուր ընդունելեամբ,
Մահկանացուին Թրին ծաղու գալ զանկմամբ.
Էրուսալեմ խընդալ. այս օր, ամիս, այս նոր ամ
Ըզսիրելիս կորգէ ծածկէ մէն մ՝ իժամ:

Թանցելոյն զինչ առեալ՝ յուսայք յապառնոյն.
Ինա՝ Թողէք զոր ոչ ձեզ ոչ տացէ սոյն.
Թէ ժամիտք՝ անցին. անցցէ անգամ յիշատակ,
Եւ սուգք ևեթ աթկցեն զանանց նըշանակ:

Ատ՝ ուր ընձայն զոր ախորժեմք սիրելոյն
Անդէն իխռան կորուսանեմք անցելոյն,
Ուր՝ ժամանակն ոչ այլ իւիք գայ մեզ յայտ
Բայց շուք Թափեալ ծառոյ, զսըրտից՝ հարազատ,

Ուր՝ զոր ազահ աչովն իւրով ընձեռէ՝
Միւսովն հանեալ կըրկին ըզվէրսըն դընէ.
Եւ զըրկապինդ յերկուց սըրտից սիրաւաչ՝
Փեցեալ՝ զմին յետ վանէ, վարէ զմիւսն յառաջ.

Ասա՝ մի լոկ ձիր իքէն ցանկամ, ժամանակ.
Ըզցամաքեալ ոսկերքք իմ վէմ մ'անհարթակ,
Յոր՝ Սիրելիքս արտասուագին հանգչիցին,
Մինչ ըզնոքօք Քեւածիցէ իմ ոգին:

Pb-42 Ֆ.

ՅԱՂ Ի.

—

ԻԳԵՐԵԶՄԱՆՍ.

Սիրտք նանրեալք (ՍԱՂՄ.)

Սիրտք որ կենաց իհեթեթանս
Յառեալ յաժեալ կաթոգին,
Եւ իխընծիղդ անդ և տրուփանս
Ալեկոծիք խընդագին.

Ո զցանկացեալդ երանութիւն,
Ըզբընաժին զայդ փափագ,
Աղբիւր կարծէք՝ խիրելւոյն
Ծոցոյ բըխել անապակ.

Որ սուրբ բաստին զօրէնա և յոյս
Հայիք սիրուն յաչս եբկու,
Ցոյց նբւաղիլ կամ իտալ լոյս՝
Նբմին հաշուէք զոլ հասու.

Որ չիմանայք բան զհեշտութեան
Իցեն տրոփմունք սբրտալիր,
Մինչ ինորուն 'ւ անզբաւական
Մաշիք վայելն և խբնդիր.

Որ ըզձերոցդ ոգւոց խարիսխ՝
Արկեալ իծուփս անդ պբղտոր,
Իդառնութեանց յուսայք խորիսխ,
Եւ զծանծաղուտ՝ կարծէք խոր.

Որ ըզհրապոյրսբն վարդագոյն
Իբրու զիսկ տայք 'ւ ողջունէք,
Եւ ոչ գիտէք՝ շոգւոյ հանգոյն
Զի ցբնպեսցին ջեր յարեգ.

Որ իմի բան վառ և ախորժ
Սիրոյն՝ իմի բիծ համբոյր,
Ոչ ինչ խիթայք առնուլ բիծ զորշ
Յոգւոյն ճակատ լուսաթոյր.

Որ չըգիտէք թէ քան ըզգիրկ,
Քան ըզբազկաց թոյլ կապանս՝
Դուցեն կապանք փափուկ և պիրկ,
Կամ բաղցրագոյն ապ հեշտանս.

Որ զակն ասէք լոկ իվայել,
Եւ խտրոփել առեալ սիրտ,
Ձերթ փրթթեցաւ վարդն՝ իրուրել,
Ալիք՝ ճօճել իխըլիրտ.

Որ համարիք սին 'ւ արհամարհ
Զայն՝ յորում չիք կերպ ցընոր,
Կամ որ գնացիցդ իճանապարհ
Ծաղիկ մի ոչ՝ սրսիռէ նոր.

Որ զտենչ բաղձից կարծէք լինուլ
Հասեալ յոր նա ձրկտի պինդ.
Ի ահա մերձեալ ունել՝ անդուլ
Վախից իվախ վարէ Թինդ.

Ո զկարկառեալ բաժակս ամեն
Տանիք առ շուրթըն վակժոյժ,
Բայց Թէ անհոյշ՝ լեղիք անդ են
Ծարաւաիք՝ ոչ հոգայք յոյժ.

Որ յամենայն տունկ՝ ծաղկաքաղ
Ցուսով՝ տայք ձեռս անբզգոյշ,
Եւ ոչ խիթայք զի յայս կենցաղ
Քան զվարդ յաճախ դիպի փուշ.

Որ ժամանակ զմյն լոկ հաշուէք
Ցոր զբզուիցիք կամ շլանայք,
Ի ոչ ձիւն ջերոյ գիետ զանգիտէք,
Եւ Թէ՝ ջինջ այգ յանկի 'ցայգ.

Միրտք նանրեալք 'ւ ասա զամ մի արկէք
Ըզհեշտալից զայդ նըկատ.
Ուր՞ ձերդ իցէ զիշեր՝ տեսէք,
Որ՞ ընդ ոտիւք խորխորատ.

Զեզ հանդերձեալս ոչ խոկայիք,
Յաշխարհ յառեալ երկրապիշ.
Աշխարհի՝ ասա արկանէ սիք
Ըզձեզ ընդ ոտն ձեր լըպիրշ.

Ասա՝ իփակել ուր կափարչիդ՝
Կըրկին բանին ապազայք,
Մին իբեթկրանս կենսափրթիթ,
Միւս պարուրեալ 'յաւէժ վայք.

Զեզ՝ որոց այս ծաւալ բնութիւն
Զկարաց յառել անդր ըզբիրս
Քան զհաճոյից ծիր անձկազոյն,
Քան զըզգալեաց թանձր ըզտիպս.

Ձեզ՝ այս անձուկ պարզեցէ վէմ՝
Ասպարէզ նոր անուանման,
Եւ յենիցեմ յայն հայեցիք դէմ
Երբ կայ խրատոց Յաւիտեանն։

Թիւ 42 Գ.

ՅԱՂ Բ.

—

ՅՈՅՍ.

Զրգեալ էր քոյ գիշերին,
Եւ լրումթիւն տիրէր յերկիր եւ յերկին,
Սաղիմ եւեթ Թըւի իշխոթ և խըռովս.
Եւ պողոտայք իւր շառաչեն իբր ըզծովս.
Գուցէ արկածք ինչ յիսրայէլ, կամ տաճար
Հեթանոսաց ըսպառնասցի յոտընհար:

Հասեալ է տօն պասեքին,
Բայց ոչ տօնուտ այս կազմութիւնք երեւին.
Կայիափայ անդուստ ջանիւք շողան վանք.
Ժամ այս դատի ոչ է. իսկ հիմ բաց ատեանք.—
Այլ մահացուին որ ժամ անդէպ Թըւեցաւ
Իթըշնամանս Տեառն և խըղճին իւրում դաւ:

Իբր ըզգազան գիշախանձ
Արիւնբռուշտ հեղեալ զորսումն էր նախանձ,
Դատողքն՝ համայն եւ դատախազք եւ վրկայն,
Իսկ դատելին՝ անդ ապազէն և միայն.
Լռութիւնն ահեղ ևեթ խօսող ընդ նորա,
'Ի անմեղութիւն՝ պաշտպան իխիղճս անդ նոցա:

Ոհ, և ուստի երկընչիք,
Յորժամ Աստուած ինքնին ըզնա ձեզ ելիք.
Շուինդ այս ամբոխ ժողովրդեան և պետաց
Ոչ ոմանոնայն է, այլ մահու լուտանաց.
Ամենուստեք ծաղր և զոռան ապառնալիք,
Թուք, կռուփ, շրթունք և ձեռք շարժին Քրիստոսիք:

Իսկ սիրելիք. — հոսեցան.
Գայթակղի սէր անկայ, լեզուք կարկեալ կան.
Կարկեալ... լցիւ, երկինք, յաւէժ Քէ կային...
Փախիր, Պետրէ, ոչ այս ոչ ժամ է քոյին.
Ոչ՝ հարսանիք այս Կանայ, ոչ Վերնատուն,
Սերտ լոկ սիրոյ զոն արժանի կիրք մահուն:

Յայնչափ իցաւան և իվէր՝
Իւր սիրելեաց լոկ սուր՝ Փրկչին պակասէր.
Զայն նըմին ո տացէ հարուած դառնադէտ.
Ոչ Երկուորեակն, այլ եռանդնոտն աշակերտ.
Աշակերտ. նա ժըխտէ 'ւ իսուն իսկ հարցուած,
Մինչ խօսքն՝ ըզնա մատնեն, նա՝ խիղճն իղիմաց:

« Ոչ. չեմ նորա. ոչ, կին դու ».—
Եւ ոչ աղջկան միոջ ժուժէր ճակատու.
Ներզովէր զանձն 'ւ իճըշմարիտ զամբաստանն,
Եւ զՏէր՝ յուրմամբ լոկ յեղյեղէր իւր բերան.
Շուրթն որ օծեալ ճըշմարտութեան դաբիրայ՝
Արդ դըժոխոցըն կայ բարոզ և վրկայ:

Գրլուխ ծածկեալ Յիսուսին,
Հարուածք ինա և Ծըշնամանք տեղային.
« Մարգարէանց, Գալիլեացիդ, ով ենար »:
Այլ յաշակերտն Ամենատեսն անդ խոկայր.
Եւ իսքողեալն այն աչաց ցողք ինչ ծածուկ՝
Հէգ զանկելոյն բաւէին մեղս չարաշուք:

Ով արտասուացն երկնաւոր
Այր մէն մի շիթ անմահութեան է շընորհ.
Ո զքառօրեայն իկեանս ածէն ըզմեռեալ՝
Իբր ամարան տարափք ըզտունկ զօսացեալ.
Ո զՅաղիմաւ ցողեալ՝ սըրբէ զնա երկին.
Եւ ըզվիմաւ՝ և կայկայի հիմնովին:

Ի ահա անդուստ խօսէր հաւ,
Իքնոյ մահուն Պետրոս յանկարծ ընդոստեաւ.
Զայն՝ որ շըրթամբ Մովսիսի հերձ զապառաժ՝
Հաւուն իշունչ ըզվէմն հերձէր սիրահրաշ.
Եւ յանջըրդին այն և նըսեմ անապատ
Յանկարծաբուխ աղբերացան ուխք առատ:

Իմորմոք անբաւ
Եւ ջերմ արտասուս՝
Դարձաւ հայեցաւ
Առ տէրն իւր Յիսուս:
Ով սիրոյն անճառ.
Անտես իւր վըշտաց
Կանխեալ Նա մընայր
Ժըխտող զինքն աչաց.

Բիրբ դիպին յիրեար
Մեղաց և Քաւչին.
Արտօսր՝ յայն ծրփայր,
Ցայս՝ սէր կաթողին.
Ցայն մի նայեցուած՝
Որ՝ զեղջ սիրտիոյթ.
Ցայս մի հայեցուած՝
Որ՝ ներումն և զութ:

Եւ զայն գործեալ հրաշ մեծ՝ իւ Կրօն ըսփոփեցաւ՝
Գընայր Յիսուս իմահ, Պետրոս՝ դառն յապաշաւ:

***

«Հայր երկնաւոր, Հայր, ում մեղայ սոսկալիս,
Հայր, Թող ինձ, Թող, զՈրդւոյդ անուն տանիմ յիս.
Մի զքո զայրոյթ շարժէ Անունդ կենսացող
Յիմ այս շըրթանց ուրացող:

«Ո՜հ, հէգ շըրթունքս՝ երբեմն իքոյդ այցելոյ՝
Զաստուածութիւն աւետեցին Որդւոյ քոյ.
Յուշ, Հայր, շնորհիդ լոյս. մի Թողուր զի անդ դեւ
Զիւր արդ սրփռէ սևաթեւ:

«Հայր, տես ըզքեզ Օծելոյդ յիմ արտասուս.
Մեծ իմ մեղանք, այլ մեծ և ես հանգէտ յոյս,
Եւ մեծագոյն ողորմութիւնդ քան զնոսայ.
Հայր, Քոզ ինձ, Քոզ որ մեղայ:

«Թոզ, մինչ Որդիդ գիրկս արդ բանայ իխաչին
Մեղաւորաց յոյս՝ իշանքելդ անդ քոյին,
Ես՝ նոցին գլուխ, ահ, մի՝ շնորհացըն նոցայ
Զըրկիմ՝ զի, Հայր, քեզ մեղայ» . . .

***

Հեծէր Պետրոս հարեալ խիրտ կարեվէր.
Դէմք գետնամած ողբայր իվիշտ տիրասէր.
Լայր, և մեղաց ոչ մի հնարեալ չըքմեղանք,
Ոչ զարտաքուստ լոկ կեղծելն, ոչ զայն վըտանգ:

Զերդ մարդկութեան խարդաւանեալ Նախահայր՝
Եւ Հաւատոյս նորոյ և այս նախկին այր,
Ներմին հանգոյն գըքեալ և սոյն իկնոջէ,
Այլ սա ըզմեղս յանձըն՝ 'ւ ոչ յայլ ոք հանէ:

Քան Դատողին՝ նորուն զընալ ըզկնի՝
Ինք վազէ յոտան և ըզմեղաց կողկողի. —
Ըզյանցուածոյն մուրհակ յարտօսըր լուացիկ
Տես Տէրն՝ և հար զիւր Թողութեանն անդ կընիք:

***

Բայց հեծութիւնք յոյսիմաստ՝
Ոչ յայն շրրթանց 'առ դադար
Որ Թերացան զալ յուրատ
Զիւր Վարդապետ բարերար:

Բայց արտասուք փարելի
Ոչ յայն աչաց ցամաքին՝
Որ յերաշխէպս Յիսուսի
Զիւրոց ետես մեղաց զին:

ԸզՍիրելւոյն բազմառատ
Յիշեալ առ ինք շնորհ և սէր՝
Եւ զոր դարձուածս անհաւատ
Կըշռեաց նըմին՝ արտասուէր:

Լայր յայգս այգուն նա՝ գիաւուն
Բարբառ խօսից մինչ լըսէր,
Աւետ ծագման արևուն՝
Նըմին յարտօսր էր հրաւէր:

Լայր՝ մինչ բարոզ յատենի
Կայր Յիսուսի քաղցր անուան,
Մեղանաց յոյս քաղցուենի,
'Ի առհաւատչեայ Թողութեան:

Թողութեան . . . վանդ նըմա տըւեալ էր զայդ երկին,
Այլ սիրտն ըզգայր յոր Թերացեալ ինչ էր սըրտին.

Եւ ըզպըղծեալն յուրացութիւն անդ ըզշըրթունս
Թէպէտ սըրբեալ իբրև ոսկի՝ 'հուր հեծութիւնս,
Բայց հառաչմամբ իդողդոջել ոչ դադարեաց՝
Մինչև խաչին ևս յաթոռոյ ոչ դաւանեաց.
Եւ արտասուք աչացն իզեղջ ոչ կասեցին
Մինչև զարիւն ոչ լացին:

Թ-42 Ֆ.

ՏԱՂ Թ.

ՄԱՏՆԻԶՆ.

Ճակատ կընճռեալ, դէմք դալկահար, յօնքն իկախ,
Ականոջիք պըղտոր յարեան իմբեթար,
Ձերերական շարժելով քայլ սրտաբախ
Իտանարէ դրանց ոմն ելեալ զայր մոլար:

Հազիւ Թէ խուն մի հեռացեալ էր անդուստ՝
Ձերդ ոք յերկար Թէ հատանէ ճանապարհ,
Իբարձրաւանդ ինչ որ դիպեալ իւր մօտուստ՝
Խոնջ բազմեցաւ, սևեռեալ զակն իտանար:

Արդեօք զատկանն է սա սրբոց ուխտաւոր,
Եւ արդ զորդւովք աղէկիզի հեռաստան.
Կամ յԱստուծոյ տուն ոք դիմեալ սրգաւոր՝
Ըզդիւր խընդրեաց, կամ իկարիան օգնական:

Ոչ. — դէմք նորա չունի ըզխինդ զայն տրխուր՝
Զոր յիշատակ սիրոյ հեռուստ ներգործէն.
Զիք յակն անդ իւր փայլ ըսփոփմանցն այն մաքուր՝
Զոր ոք ըզգայ Թափեալ ինչ բեռն խըրտէն:

Ժամս եկաց ձիգս այնպէս, 'ւ ոչ նոր խորհրդոյ
Տիպք յաջորդեալ յայն ճակատ սառն անցանեն,
Թըւին հրաժեշտ տըւեալ նըկատքն այն յուսոյ,
Եւ ինչ ոչ այլ տեսանել բնոյց իխըղճէն:

Խընդրեաց արտօսր, այլ նըմա բիրք ժըխտեցին.
Զի և ոչ ունմ էր ըսփոփման արժանի . . .
Ըզձեռս իզլուխ յայնժամ եհար նա ուժգին,
Դառն իխորոց սրտին հառաչ հատանի:

« Անէծք աւուրն յորում ծընայ, վայրք անբաւ.
« Անէծք որ-յայս եհան զիս լոյս մըշտասեաւ.
« Անէծք երկրի, անէծք երկնից 'ւ որ ինմա.
« Անէծք քեզ, Ցուդա »: —

Եւ կրկնեցին երկիր, կամարն աստեղեայ,
« Անէծք քեզ, Ցուդայ »:

Եկաց յայն ձայն, յանկարծ իվեր նա վազեաց.
« Ոչ՛. ոչ Ցուդայ են լոկ անէծք » մրընչէր,
Եւ իտաճար դէմս հաստատեալ մըթազգեաց՝
Թըւէր յոսին յայտսըն ծաղու ինչ ըստուեր:

« Եւ զձեր, ով վնտք, որ զիս մերժէքդ անազան,
Այս ձեռք զընեաց յարծաթդ ըզձեր դատակնիք.
Ոչ՛, Ցուդա ոչ իձէնջ զատչի յաւիտեան,
Իրժոխս յաւէժ ըզնա սատան վարձեցիք:

« Արիւն անմեղ իպիղծ հարեալ ձեր ճակատ՝
Ներշան անջինջ կացցէ իսուր Սատակչին,

Եւ զայդ յանշէջ բոցոյն տեսեալ խորխորատ՝
Տաց աւետիս թէ աւանիկ են հասին:

» Անէծք իզլուխըդ ձեր, անէծք սեաւ յոգին.
Անէծք յեփուտ անդ ձեր, անէծք տաճարին.
Անէծք յօրէնադ և ում էիք պաշտօնեայք,
Անէծք ձեզ, Ցուդայք » : —

Եւ կրկնեցին դըժոխք և վիհք հինօրեայք.
« Անէծք ձեզ, Ցուդայք: »

***

Անդ իյաւէժ մահուն սուզեալ յիշատակ,
Եւ յառաջեալ մըտօք՝ յոր հուպն էր գնալոց,
Կարծեաց թէ երբ յերկրէ խուսէ ինքնարձակ՝
Աջն իդըժոխս ոչ ծանրի նմա վրիժաբոց:

Հէք, ոչ գիտէր թէ Հզօրն ըզնա ըբեռնել էր
Համբուն յանձին իւր անդ իձեռս և իկամս.
Թէ՝ վայ ուստի զաջ միանգամ բառնայ Տէր,
Զի գոյ Նորա 'ւ իշանթ մահուն վառել կեանս:

Բայց սոսկալին յայն անբրջից մահազգեաց՝
Անյուսութիւն զոր ընծայէր ցանկալի՝
Զարթեաւ յանկարծ զինուց իշող ճօճընթաց,
Զայն հարաւ յունկն որոտընդոստ. « Խաչեցի » :

Սարսափեցաւ. . . ամբոխ ետես իստորեւ.
Ծանեաւ ըզգունդ, դրպիրս և ծերս բանսարկու.
Եւ ընդ բեռամբ սեաւ գերանի քառաթեւ
Ծանեաւ ո Այն որ իմահուն հեծէր չու :

Ծանեաւ. . . ահեղ ծանօթութիւն, սուրբ զարիւն՝
Հոսեալ, կոխեալ, զոր ինք եհանն իվանառ.
Որ աշխարհի մեղաց՝ ըզՀօր զբթութիւն,
Մաղթէր, և դարձ, ոհ, մատնըչին այն թշուառ :

***

Իբր ըզվարազ՝ զոր իկող
Հաստաբազուկ հար նետող,
Ցահ և զայրոյթ ոխաթափ
Ընդ ձոր, ընդ վախ զընայ թափ :

Ցուդա վազէր ահափետ՝
Անգէտ, աւանդ, Թէ յոր կէտ.
Խոյս իխըղճէն հրնարէր,
Այլ զոսոխ յանձրն տանէր:

Որչափ և յո դիմէր նա՝
Իձայն պակչէր ցանգ նորա.
Եւ նոր ինոր ցանգ հարուած,
Եւ չարաթոյն էր խայթուած:

Անց նա ընդ դուրս Սաղիմայ,
Սա յուշ եբեր զՈվսաննայ.
Ընդ Կեդրոնի անց հովիտ՝
Զհամբոյրն յիշէ նենգամիտ:

Այլ ընթանայր խելացնոր
Դանդաչելով Կայէն նոր.
Կարծէր իվրէժ Արդարոյն
Բնութիւն զինեալ էր ողջոյն:

Ըզկայ էառ իխաւարին ինչ ծըմակ,
Ետես գերբուկս, և ոսկերց Թանձըր կուտակ.
Թըշուառութեան անուն իձորն այն կոչէր,
Զարագործացն յոսկերաց մըթեր:

Անդ սեւաստուեր նըստաւ ծառոյ մի 'նդ բընով,
Վեր հայեցաւ, երկին պատի նման միգով.
Եւ հայհոյանք՝ զոր պատրաստի էր ժայթքել՝
Մեռան՝ շըրթանց իւր իկափկափել:

Զդատապարտեալ լըսաւ զիւրև ծաղր ըստուերց,
Եւ իհոգոյն ետես կայտռել զարշ զոսկերց.
Դըժոխք զոտիւք փեռեկէին բոցաշունչ
Ախոյենին՝ անձկալով իմռունչ:

«Չի կաս Յուդա». — ձայն իմն յականջ իւր հարաւ,
Եւ իբր իձայն ինչ բաջալեր նայեցաւ. —
«Չի ևս կայ քո 'ւ երկրի ոյր ես դու սոսկումն.
«Դըժոխոց քո ծընունդ և կոչումն»:

«Դրժոխք»... գոչեաց, եւ սարսեցին զանգք ամայք,
«Առէք զաւարդ, եթէ եւ դուք ոչ սոսկայք» . . .—
Վազեաց լընուլ վրճիռ զոր ետ անսուտ խիղճ,
Ինքն ոճրագործ, դատող և դահիճ:

Զգոտին կախեաց անուր ընդ ոստ մի ծառոյն,
Ընդ պարանոցն արկ խեղդ . . . ճօճէր մէջ օդոյն . . .
Եւ մինչ կենաց բանայր խաչիւ ըզմուտ Տէր՝
Սանն ընդ մահուն դըրունս Թաւալէր:

ՏԱՂ Ժ.

ՅԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒՇԱԿՆ.



Սիրուն մանուշակ,
Հոտ քո անոյշ, եհաս ծանօթ ինձ քո հոտ,
Ձերդ որ ում սիրտ մընայ յանձուկ իկարօտ.
Բայց զի չըքնաղ քո դիմակ
Քողածածուկ Ցաքչի իծերպ և յեմակ:

Ո՜հ, գիտես չեմ. եւս,
Զինչ է գարուն ո զքեզ յըղէն աւետիս,
Քանի ախորժ ծընուցանես տենչ յոգիս,
Ի ակընկալիս հոգեթեւս
Ցաղուդ իդէմս ածես դալար՝ւ իտերեւս:

Դու՝ զլետ ձրմերան՝
Ա՛յն որ ինչ շող նախկին է զլետ խաւարին,
Ցանապատի՝ խոխոջ զոտիւք պանդրխտին,
Հազագ մ'իխոր լրռումեան,
Ցուսոյ զբրոյց իյուսաբեկ մրթումեան:

Պարկեշտ մանուշակ,
Դու Ք՝ և ընդ հոյլս գայիր ծաղկանց գեղաթոյր՝
Ոյց կարապետ և անդրանիկ ես դու քոյր,
Բայց գոյիր ցանց անուշակ,
Ցանց սրբտառուչ իմն էր անուանդ յիշատակ:

Զի յայդ գողտր իմոյն
Ամօթազեղ փայլէ կրնիք կուսական,
Եւ հեշտասփիւռ քո շունչ՝ նախկին շունչ զարնան,
Նախկին այն իղձ է հոգւոյն՝
Ցանմեղումեան որ գբրգի սիւք հեշտագոյն:

Բայց անցցէ այս օր.
Եւ դու վաղիւ յայդ փայլեսցես գոյն և բոյր.
Վաղիւ ևս ինձ ժըպտիս մինչ տամ զայս համբոյր,
Եւ ցողքս աչաց սիրածոր
Այգուն ընդ ցողս խառնին յայտից քոց շընորհ,

Թէ՝ մահագուշակ
Ըզքեզ յարփուոյն զըտից իճեմս յանդաստան,
Հանգոյն աւուրցս իմ գեղազարդ մանկութեան:
Ո՜հ, այն աւուրցս անուշակ՝
Որ վաղ սրացան զերդ քո կեանք, ով մանուշակ:

ՏԱՂ ԺԱ.

ԳԱՐՈՒՆ.

Որ իսուզդ էք՝ դուն մի բացէք զակն իմբրճեանս,
Թէ զձեր ոգիս կալեալ տրխուր է մրթուութիւն.
Բացէք ըզսիրտ իսրրբազոյն արդ իսփոփանս.
Քան զամենայն ըսփոփիչ մեծ է բրնութիւն:

Որ իբաղդի վայելս զբրգեալ և յափրացայք,
Իձեռակերտ զարճմունս՝ լրցեալ զբնութեան Թերի,
Բացէք ըզսիրտ, տեսէք որ այն հեշտք առօրեայք
Իկշիռ զայցեն ընդ որս զարուն բաշխէ ձրրի:

Որ իմահիցս անդ տանջեցայք տառապանաց,
Եւ զցաւս ունիք վրկայս՝ ցաւոց զոլ այս երկիր,
Բացէք հիւծեալ զակն իտեսիլ յայս կենաազգեաց,
Եհան Գարուն, Գարուն բաշխող կեանս բրռնալիր:

***

Արփւոյն նըշոյլք լուսավարդ
Իքաղցուենին իւր ծագել,
Հեղուն զոգւով մեր զբուարթ
Ըզգացմունս ցարդ անընտել:

Ըզբիրա յածեալ շուրջ իխինդ՝
Ցոր նա կանխէ լուսատու.
Իմէն մի տես սրբտաթինդ
Տամք ըզմայլմանց ալէլու:

Կենդանութեանն արդ խիւզ
Խայտան ոգիքս իմեծ յոյս՝
Եթէ դարձցին համազոյգ
Եւ մեր վայելք՝ նորաբոյս:

Առ մէն մի բայլ՝ դաշտ, ծործոր,
Իզարդ, իգեղ և բուրմունս՝
Զակն իհրբնուանս յածեն նոր,
Կամ ամոքեն ըզռընգունս :

Ուր՞ իցեն ոստքն այն յերեր
Որ իբր ոսկերբս տրմոյն,
Մահու՝ իմարգս անդ՝ ըստուեր,
Եւ հեծէին ընդ հողմոյն;

Արդ ազազուն այն ուղէշք
Իծաղկերանգ կանաչ քող՝
Քան ըզհարսունս գեղաղէշք
Պրճնին ակամբք զոր տայ ցող :

Նոցին իծաղ կամ իծոց,
Իբր զխայրիս կանխահաս,
Որբին փափկիկ բոյնք Ցրուչնոց
Ցուսոյ կենաց իդարպաս :

Բնութեան իմէն գեղ և զարդ,
Մէն մի 'խոխոջ ցայտ յառուակ,
Մէն մի 'փրթթեալ փայլ կամ վարդ՝
Նոր գայ աւիւն յասպուճակ:

Ցոստոց իյոստ սաղարթուն
Զայգն եւ զարուն ողջունէ,
'Ի իդայլայլիկ իւր զարթուն՝
Բնութեան ըզտօնս յաճախէ:

Տըրտում զայն վանգ և քընքուշ՝
Զոր մայրք կըրկնեն Լ. հովիտ՝
Լըսէ նըժդեհն, և իյուշ
Սիրեցելոյն Թընդայ սիրտ:

Դալար իդիւրն ըղձական
Սլացեալ աղուն աղաւնի,
Եւ յիւր ձայնէ վարուժան
Թողուլ ըզյարկն ընտանի:

Նորաբողբոջ յարտորայն
Եւ ընդ վիժանս ջուրց աբտուտ՝
Թեւածէ նուրբ ածեալ ձայն,
Եւ ընդ եղտիւբս խնդրէ բուտ։

Եւ երդասէր ծիծեռնիկ
Թողեալ ձագունս՝ ոչ ըզհոգ՝
Փութայ իդարձ յիւր բունիկ։
Թեթեւագոյն՝ աւարօք։

Լընուն այերք իհընչիւն,
Մերթ իբառաչս անդ նախրաց,
Մանր իզառանց մերթ պոչիւն՝
Ցայթիւռ հովուացն ընդ որդեաց.

Եւ մերթ իճռինչ արօրոյն
Ընդ կորդ անդ դաշտ յերթեւեկ,
Ցոյր հապա հունձ ոսկեգոյն
Խնդայ մրշակ յուսաբեկ։

Կենդանութեանն հանրազգեաց
Մասնաւորեալ և ծանր ուխք,
Սրանան կայտռեն խընդազգեաց
Ծաղկափրրփուրս, յորդաբուխք:

'Ի իհեռուստ՝ ծով կապուտակ
Ըզշաչն իմեղմ զբսպէ շռինդ.
Ուր զերդ խաշինք ըսպիտակ
Առազաստք խառն առնուն թինդ:

Անդ մերթ իզոգս ու զկայմիւ
Խաղապատի սիւք կայտառ,
Եւ մերթ վազէն ըզդրօշիւ՝
Պատիւ զոտիւք իւր պաստառ:

Զալեացն երբեմն ըզխօշիւն
Հեղու զափամբք մերթ ընդ մերթ,
Է զի փրրփրոյն մերթ փաղփիւն
Խառնէ զծաղկանց հոտ և թերթ:

Ցանոյշ յայն սիք զայգ և ցայգ՝
Քանի՛ խիրտս ըզմայլմունք,
Զաւուր նախկին երբ ըզվանգ՝
Մըթանն ածեն կամ զիրնչմունք.

***

Բնաբէ, քանի՛, քանի՛ զգացմունք սիրաւարժ,
Քանի՛ ընդ քեզ, Աստուած իմ, փառք ոգեշարժ.
Մինչ այսքանի ըզմեօք ախորժ փոփոխմունք,
Եւ այսքան հեշտ փայլմունք:

Ոչ՛, ոչ Թէ մեծ ևս է բազուկդ յորոտ շանդ՝
Քան խոլկար բողբոջն և սէզ խմարմանդ.
Եւ ոչ այնքան վեհ յարձակել գոռ մըրրիկ՝
Քան յայս սիւք անուշիկ:

Մի զծառն երբէք ինձ տեսանել դէպ լիցի
Մատաղ տերեւս սօսափելով առ խընդի,
Մի 'մարգն՝ առուս, իդեղ դալար և յարօտ
Մի ըզշաղն յառաւօտ,

Մի 'խընկաբոյր ըզճեմ առնուլ իղրախտին,
Մի ձեռս իտունկ ինչ արկանել հրաշազնին՝
Եւ ոչ՝ քան զբիբ հրբճեւեալն իքեզ դերձել սիրտ
ԳոհուՔեան իժբպիտ,

Եւ ոչ խորհել՝ վարդին իծոց՝ ըզքոյդ սէր,
Եւ ոչ ըզխնամսըդ ծածկեալ Քաւն իյըստուեր,
Եւ ոչ առ մէն մի գեղ, դաշնակ հեշտածին՝
Ըզպատկերդ անմարմին:

Եւ կամ ոչ զայս նոր կեանս տեսեալ յետ մահու,
Ոչ՞ սիրտ իժամ իւր Քախծագին յոյս առնու,
Թէ՝ զերդ զարունս իձմերանէ՝ և հոգւոյ
Խինդս ընձուես իսրգոյ:

ՏԱՂ ԺԲ.

—

ԱՅԳ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Սիրեմ ըզսարբս ձիւնափայլ դարևանեղաց
Այգուն իշող վարդակարմիր ծիրանազգեաց.
Իբր ըզճակատ արքենի
Շողալ հուստացն իմիջի:

Ըզծով սիրեմ հեշտամբռունչ, յոյր իմբռայլ
Եզերց նախկին յարևածայրս ճանանչէ փայլ.
Եւ ընդ խոժոռ այտս ալեաց
Խառնի ժըպիտ մի յանկարծ:

Սիրեմ ըզդրախտս՝ ուր չև աչք, ձեռք աւարառու
Զեփիւռոցն իմև այգուն նըշոյլ գայ այցելու,
Եւ զըրգելով տունկ և բոյս
Յառէջ 'ւ իծիլ տայ յոյս, լոյս:

Դալարազուարճ սիրեմ մարմանդս և զայն հովիտ
Ուր զերդ գնայուն բիծև կամ ձեան դէզք խիտառխիտ
Խայտան յայգուն շող գառինք,
'Ի իդայլայլիկ իւր՝ սըրինգ:

Բայց քան իդար, իջուրս, իտունկ, ձոր, յանապատ
Զի սիրազոյն են ինձ այգուն շողք իճակատ
Ուր ամենայնն է ժըմիտ,
Եւ ցոլան զոյգ բիբք վըճիտ:

Ո՜հ, ոչ ևս այն շողք յանկենդան ինչ գան տալ կեանս
Այլ արշալուրշք կըրկին դիպեալ Ծուին իզմայլանս,
Ակընկառոյցք մին ընդ միւս,
Եւ ողջունեն լոյս ըզլոյս:

Եւ երկոցուն նոյն կայ երկին մի ասպարէզ,
Զոր յայլ և այլ ըցցեն ճանանչ և իմանդէս.
Իրրև ըմբիշք հաւասար
Եղեալ զաշխարհս իպայքար . . .

Տուք, տուք զողջոյնդ, պահ մի՝ և անա բաժանիցիք,
Այդ՝, դու իտիւ, անդուստ յերեկ գնաս վաղանցիկ.
Եւ դու Մանուկդ, իկայտիս
Թողցես նախ ժմիտ, յետ՝ զերկիր:

ՏԱՂ ԺԳ.

ՀՈՂՄԻԿՆ ԱՄԱՐԱՆ.

Ուստի, հողմիկ, իտօթ ժամոյս
Իբր աւետիք գաս անյոյս.
Եւ զթև փարեալ քո զովագին
Բերկրես մարմնով զիմ ոգին:

Ողջոյն ընդ քեզ. — բնութիւն անշուն,
Կայր զերդ մեռեալ անշըշունջ.
Եկիր. 'ւ ահա ալիք զարթեան,
Ստեղանց նազին ծայրք բուրեան:

Շոնուոյն հրսկայ դանդաղ ըստուեր՝
Կայտռէ իՑևսդ կենսաբեր,
Եւ հունձք ատոք զոսկի գիսակ
Տան յատսրդ մէտ վերելակ :

Փեզ ընդ առաջ փոշին ճախրէ,
Հաւիկն ըզՑևս յանձն առնէ.
Ոստնուն տերևքն որ զօս անկեալ՝
Դալար խոտոցն համբոյր տալ :

•

Ցոր դու սլանաս՝ ծածկի երկիր
Ծաղկէնըկար գեղածիր.
Ցասմիկ, վարդին տերևք անոյշ
Սրփռին զհետովք քով քընքոյշ :

Փեզ նուագարան ծառք Ցաւահեր,
Դրօշք ծալ իծալ ընդ այեր,
Հողմացուցին ճրոիչք յերդին,
Եւ առագաստ ձրկնորսին :

Ով՞ բաղցր հողմիկ, զի՞ ես բաղցրիկ
Մինչ ըզծանօթ բերես սիրք,
Ըզյիշատակս, ըզշունչս անուշ
Հրծծելով յունկն և իյուշ։

Ո՜հ, յայնժամ յոյն մարզ աչք յառին,
Թիրք՝ յարտասուս կաթոգին . . .
Ընկա՛լ հողմիկ, տա՛ր շի՛թ զաչաց,
Զայդ լուռ պատգամ՝ սիրելեանց։

ՅԱՂ ԹԴ.

—

ՅԵՏԻՆՔ ՏԱՐՈՅՆ.

Որ ըզնախկինն ետուք իխինդրս զողջոյն՝
Արդ իվերջս է, ճն և զյետին տուք տարոյն.
Աւանիկ նա. ոչ ևս յուսով բարեդէպ,
Անկանի յետս զոր մեր դիտեալն էր հանդէպ:

Իգալ մերձելն՝ ասէաք. Զի անազան . . .
Զի ծալք նորուն փոյթ ոչ բանին յանդիման.
Եկն ած և զմերն իւրաքանչիւր ետ բաժին՝
Կիրս, հեշտք, յոյս, ահ . . . նոքօք էանց և ինքնին:

Դոյզն ինչ է ամ, աւուրցն իՔիւ Քէ նայիս.
Այլ Քէ իհետան՝ ոչ մեծ Քըւի, ասան ցիս.
Ոչ՞ շատ՝ սըրտիդ Քէ հայիցիս յիշատակս.
Ոչ՞ բուռն՝ յակօս ճակատուդ, հերս յըսպիտակս:

Ժամանակին ոչ այլ ուրեք այնպէս կուռ
Միմեանց ըզհետ հետքն և ոչ այնպէս ամուր
Որպէս խիրտ տըպաւորին մահացուին.
Ալեաց բախմունք քան զաղփաղփուն յաւազին:

Տեսս, — եկն և անց գարուն, ամառն՝ անց և այն,
Եւ քեզ բնուՔիւն խըրՔնի Քըւի զձմերայն.
Սակայն ընդ ձեամբն ահա փրՔՔի մանուշակ,
Եւ հուպ ընդ հուպ գարնան բուրի մեզ զուշակ:

Այլ ընդ ամին գարուն և քոյդ ծաղկէ այլ.
Ջերդ որ ընդ սոյն սահեցաւ խորն իմբռայլ . . .
Արդ ընդ ամառն՝ մանուկ, ընդ տիպ բերկրիս քոյն.
Այլ յիւրն անդ դարձ՝ զլուցէ և զքեզ յաւիւն նոյն:

Թեւս հարկանեմ, ասես, ընդ ամն, — և խայտաս.
Այլ չէ մտերիմ ընկեր յուղիդ զոր յուսաս.
Անա սրացեալ յայլոց մընտեալ է նա Թեւ,
Եւ յանցանելն ժըպտի զալեօք բով արեւ:

Այնուհետև յամր ըզգընացդ ըղձայցես.
Զատս հաստատել՝ մինչ իլըպիրծն հասեալ ես.
Զերդ ծագք երկրի յոր ոչ հասին ցոլք արփւոյն
Նամէտ և մուԹ ըսպառ կենացն է ուղւոյն:

Ցայն Թէ հասեր, զի ես հայիս յետս իբուք,
Որ գնան ծածկին. նոր քեզ հանդէս՝ առաջոյք,
Անդր ելանեն որք իկենացս իջին ձոր.
ՑաւէրժուԹեանց անդուստ իլեառն ուղեոր:

Երանի՛ կէտն որոց հասեալ ընԹացից,
Այնպէս հանդէպ իւրեանց յառին անձկալից՝
Որպէս զերին՝ յազատարար ձրգեալն աջ,
Զերդ դու՝ անձկաւ ձրկտիս ինքր ամն յառաջ:

ՏԱՂ ԺԵ.

ՀԱՅՐ, ՏԷՐ ԵՐԿՆԻՑ ԵՒ ԵՐԿՐԻ

(ՂՈՒԿ. Ժ. 21.)

Որ՞ անուն ընդ տիեզերք սիրակըցորդ
Յարփենուոյն ելից ցըմայրըն ռահահորդ,
Յոր շաղկապ՝ պատկառանաց զորովաթինդ՝
Սիրտն իլուր՝ յըզմայլական ոստնուցու խինդ,
Յըղձիցն իբոց և իշռինդ:

Խօսեանց, Տէր. — ծն իքնարիս իմ շըշընջիւն
Յանմատոյց սրսկապանաց հեղեալ աւիւն.
Սըրբանուէր զերդ իբազմոց անդ մարգարէ
Դոչեցիս զոր քո յիս մնտըն շարժիցէ,
Եւ տիեզերք լուիցէ: —

Յանոլորտ հաստատութիւն թէ բիբս ածեմ
Աստեղաց տեսանեմ բոյլս արփւոյն իմեմ,
Անպարոյր աստ ծովք, լերանց անծայր ոստմունք,
Վառ իվառ ծաղկունք, անվառ խընկոց բուրմունք,
Առաւօտին զով ծաւալմունք:

Ծովամբարձ նամէտ ընդ ամպս երկնապող սիւն.
Ալեզոչ իխռով, և անդ քաղցր իշընչիւն,
Փայլականց որոտք ընդ ամպրս սևադէմ,
Իգըլխոց լերանց ցայտեալ բոցք երկնաճեմ
Երկրաձոյլ շանթք նախանձընդդէմ:

Յո՛ թըռիչք, զինչ բանք շըրթանց այն անլեզու.
Սէր իխորս նոցա, կանխեն յայդ ալէլու.
Պապաջեն, այլ Սիրելւոյն անյայտ Անուն,
Թ՝ և ահեղք՝ այլ զոք գիտեն ահեղազոյն
Որ ըզնոքօք հրսկէ անքուն:

Բընութիւն աչս յառեալ անդոյր
Ըզմիջոցովն անպարոյր.
Յարփւոյն իյունքս լուսահիւռ,
Յամպոց հասակ երկնասփիւռ,

Իզազաթունս ամպարհաւաճ
Լերանց , ծովուց անդ իկարկաջ
Իզուր Նորուն
Հայցէ զԱնուն :

Աղաւնին մընչէ ,
Վրտակ մըրմընջէ
« Սիրելին ուր է » :

Շուշան ձիւնաթոյր ,
Վարդ վառ ինամբոյր՝
Մընչեն . « Ո՞ւմ մեր բոյր » .

Մայրիք յաւիտեանց
Վրկայեն արմանց .
« Նա մեզ գերազանց » .

Մրոնընչեն ալիք .
« Նորա խաղալիք
Եմք մեք անդրանիկք » .

Սիւք հեզաշարժ քաղցրութեանց,
Որ մինչ յերեր կոծի լաստ
Շընչեն սըրտից յառագաստ.

Եղուկ իդէմս ուր վերջին
Ցուսոյ նըշոյլք ոչ շըրջին.
Եղուկ այսոց մահակիր
Ցոր դաղկութիւն առնու ծիր.
Եղուկ որ զսէր իւր կորոյս
Եւ ընդ նմին զաժէն յոյս . . .
Ցողեցէք, աչք, արտասուք
Ցողէք սըրտիս յիմ պասուք: —

Ցորժամ ինուազ զառաջին
Ըզնա տեսաք տըրտմագին,
Աչկունս իշուրջ կոդկոդել
Եւ անզօր տուտն իւր ձըգել,
Եւ զօրն ողջոյն մենասէր՝
Ատել ըզխինդ և ըզկեր,
Նախազգացիկ իրր յայն գուն
Ցամենեցուն սիրտ արկ մուն,
Զի սիրելւոյն իկորուստ
Հըմայք չար զոն յառմենուստ . . .
Զամէն շըշուկ և ըզբան
Նըմին խոթեալ դաւանան.

Խընամք և հոգ սիրալիր
Իզուր հեղան և իցիր,
Մինչ ըզնովաւ սեաւ Թեւեր
Մահուն սըփռեալ տարածէր.
Ցողեցէք, աչք, արտասուք,
Ցողեցէք՝ յողբ և խուզ:

Վերջին եհաս սեաւ գիշեր
Եւ առ լուսով կացեալ մեր,
Ներշմարէաք տըրտմագոյն
Ըզտագնապել եղկելւոյն.
Նա զկըկոցեալ զիւր աչեր
Ըզմեք տըխուրս ած իվեր,
Եւ հեզաձայն իմլաւիւն
Հայցելով իմն օգնութիւն
Ցանկարծ յանկարծ ընդոստնոյր,
Հանդարտացեալ մերթ ուռնոյր,
Թաթիկ շարժէր, և երկայն
Երբէք երբէք Թողոյր ձայն.
Սարսուռ յանդամսըն տագնապ
Վառէր կոծէր յետին տապ.

Ո՜հ, և ընդ հում ոգորէր
Ժանտին կացեալ առընթեր.
Որչափ յիւրմէ հեղոյր ճիգն
Ոչ զոք գտանէր զօրավիգն.
Եւ բուռն եղեալ դիմադարձ
Ցոգւոյն նահանջ յետադարձ՝
Եղուկ, այնչափ առմատչէր
Խորին վրին հուպ եղեր:

Ո՜հ, զի ևս այլ . . . մընայր մահ
Դ անխնայ ոգւոց սակ և ահ.
Ոչ եղկելւոյն հարեալ ճիչ
Ըզսիրտն իգուն յորդորիչ,
Ոչ իբարուցն աղուենի
Պատկառեցաւ լրբենի.
Ցօրիորդին ոչ իգեղ,
Ոչ իկամար լանջագեղ,
Ոչ յանդամոց լրբութիւն
Մորթոյն յողորկ փափկութիւն,
Ոչ շերտ իշերտ ժապաւէն
Ցուս և ճակատ նրկարէն,

Ոչ իսկ յաչաց գեղանւոյն
Ցոր բիբ լիւղէր լուսազոյն . . .
Եւ ոչ յայսչափ իղձ սրբտից
Ոչ յարտասուաց ինչ Թախիծ,
Ոչ իվայրից սրբրբութիւն
Ընկրկեցաւ յողդողդուն,
Ո՛հ, զայս նախկին՝ քայլ ժրպիրն
Եմոյծ անդ մահ մրշտանիրն . . .
Եհաս . . . եհար. — ճիչ եբարձ . . .
Սրացաւ և շունչն . . . ահ, անդարձ:

Անդարձ, այո, անդարձ միշտ,
Անդարձ յաղէտս և իվիշտ.
Անդարձ լրքեալն իկայան
Եւ իխնծիղ բերկրութեան.
Ոչ ևս այն բիբք լուսոյ բուն՝
Ընդարձակին այլ փայլուն.
Ոչ ևս յերագն իւր իվազ
Գրծեսցին հետք իւր յաւազ.

Ոչ ևս այլ զոռ յաւազարէս
Իջցէ 'նդ ոսոխ հէնս իվէս.
Եւ կամ յընդոստ իւր ճապուկ
Ծառոց սաղարթք տան շշուկ.
Ոչ ևս ըզնա արբանեակ
Տեսցուք ըզհետ մեր արձակ
Շուրջ զալ իուահ պարտիզին
Իդռոյթ՝ կամ տուտն իգետին.
Ոչ ևս իժամ մեր ճաշուն
Ըզմեզ պարէ ոստոստուն,
Եւ իբրծին իւր բընքուշ
Շողոքորթէ փաղաքուշ.
Ոչ ևս ուլն յեց իթաթ գիրգ
Ներնջէ իբարձ և իգիրկ.
Եւ իհեշտից անդ յանուրջ
Ըզմայլեացի իտես լուրջ,
Կամ ընդ սիրոյն զըզուանաք,
Հանցէ խորդիւնա առ յողոք.
Ըզհեշտաշարժն իւր բըբիկ
Շուրջ նազելով բացիբրիկ.
Ո՛չ, ոչ լուիցուք ձայն երբեք
Ոչ յաւիտեանք և ոչ մեք . . .

Ցողեցէք, աչք, արտասուք
Իտըխրութիւն և խուզ։

Այլ սակայն ինքն յն եդ դէմ
Զի ոչ դառնայ արդ ընդդէմ,
Արդեօք աչկունք նորին սուր
Տեսին աշխարհ մ՝անտըխուր,
Զի այդպէս փոյթ առ յերկրէս
Այլուր սրացան անձկապէս.
Ո՞ւր արդ նորին օթէ շունչ,
Արդեօք դարձեալ տայ մըրմունջ.
Երջանկազոյն եգիտ վայր
Թէ վիհ անունջ և անծայր,
Ինախայաւ խանձարուրս
Ցոչէութեան անցեալ դուրս.
Ցողեսցեն աչք արտասուք
Եթէ նանիր գնայցէ սուգ։

Նանիր, աւաղ, մինչ ուրեք
Ոչ նա լըսէ մեզ երբեք.

Պատնէշ ընդ մեզ և ընդ նայ
Անէութիւն անհուն կայ.
Իմերս անտի վայր ողբոց
Եկեալ՝ դարձաւ ինոյն ծոց.
Ներմանահոս ընդ ալիս
Կամուրջ արկեալ զշունչն յաստիս՝
Ինքն ուղևոր, ինք ուղի,
Անց և սուզաւ իւր տեղի,
Զի չբութիւն զիւրն ըզհետ
Թափառելով միահետ,
Եղծ անզորով ըզնորայն
Շունչն և ըզհետս ընդունայն.
Ցողեսցեն աչք սիրելեաց,
Որտկեղ իյուշն անմոռաց . . .

Բայց թէ և չես արդ, Փ-ընքուշ,
Փոյդ կորեաւ ուշ և ուրուշ,
Այլ ոչէիդ փոխանակ
Կայ անիրան յիշատակ.
Այո՛, և դու զայլոց հետ
Ըզնոյն կոխեալ արահետ՝

Յանգիստութեան շունչդ յափունս
Յերեր անբիծ տալ աչկունս,
Անյոյս այլ ևս յայս եբկիր
Թերի տեղւոյդ գայ իլիր.
Սակայն ոչ շատ քեզ այս շուք
Համասեռից նախանձուկ,
Ունել անուն յոյր իկոչ
Ծագել պատկեր ինչ յոգւոջ.
Եւ թէ շիջեալ մի կայծիկ՝
Զըզել զբատուեր իւր փափկիկ։

ՅԱՂ ԻՔ.

ԱՒՈՒՐՔՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

Ընդ ծալ ի ծալ խորշում ամաց դիմակին
Յակոսիցն խատուեր՝
Ժըպիտ Թեթև սողոսկեցաւ լուսածին
Ձերթ շող իգիշեր :
Եւ իմբուայլ սըրտիս հովիտ երերուն
Փերելով հեզիկ,
Գաղցրահամբոյր սրացաւ Թեւոք զըւարթուն
Ասուածազգեցիկ,

Զի յիշեցի զաւուրսն առաջին:
Յիշեցի զաւուրսն առաջին,
Յիշեցի զծաղիկն իծաղկին.
Յիշեցի ըզբոյր Եդեմին,
Զոգեվառ ըզխունկ զայն սըրտին.
Զայն պայծառ յիշեցի զայեր
Յերփներանգ ամպոց լուսաբեր,
Զայն վրճիտ բիւրեղ հայելիս
Նախարծարծ յոյց ցոլայր արփիս,
Վարդափայլ արձակելով շող
Սիրախառն յանմեղութեան քող.
Յիշեցի զսիւք իծոց վարդին,
Յիշեցի զաւուրսն առաջին:

Բ.

Յիշեցի, բայց արդ հոսին թերթք կարմիր
Ընդ սար ընդ ձոր ցան և ցիր,
Եւ դեռաբոյս խամրին տերեւք ազազուն,
Շընորհք անկան սըրբասուն,
Փուշք ծաղկեցին դառնագոյն:

Ցիշեցի, բայց անջրդին ընդ հեղեղատ
Երեկորին հողմն հեծեծէ շառաչուն,
Ուր մանկութեան շունչ զբուարթ
Կայտուէր իծուի լուսազարդ.
Արտասուաթոր՝դ ականողիս ցաւագին՝
Թափանց, աւաղ, տրժգոյն նրշոյլք հարկանին
Ատեղն իմոյ վայրավատին.
Եւ մինչ ըզնա դէմք յարևելս որոնեմ,
Ինքն իմըստից ինձ ակն ունի յետս ընդդէմ:

Գ.

Ուր՞ այն բըլուր գեղածիծաղ
Բարձր ընդ ոլորտս անշամանդաղ,
Ցոյր փայլ իփայլըն կատարաց
Ճաճանչաւուխտ շող արձակեաց
Պըսակաճեմ իսէր և յոյս
Իմ ծիրանին արշալոյս:

Երանաւէտ ուր այն բըլուր,
Ո՞ւր մանկութիւն, ուր խանձարուր,
Մինչ սայթաքեալ իմահաւուիթ
Ցարտասուաբուխ տրխուր հովիտ՝

Մահուն 'դ ողորտիս մրթավայր
Զուր իմ կենացս յառիմ ծայր ,

Կենացս իմասն այն լուսափայլ՝
Ցոր անջրրպետ անկաւ մրռայլ .
Կարեաց ցաւոց վերաշրնչմունք
Իւ քողարկին հոգւոյ աչկունք,
Եւ վերացաւ պայծառ պաստառ
Անմեղութեան սուրբ նրկար :

Քանիցս ըզմութ զայս խաւարին
Ցորդավրտակ աչք իմ լացին ,
Եւ թէ տրխուր այնմիկ ընդ ցող
Կարեաց ամպոց բայբայի քող՝
Սակայն ոչ ևս այլ արշալոյս .
Կեանք ինձ հոսին խորասոյզ ,
Ցրրտասարսուռ զի հովանի
Զիւր տարածեալ մահ հոլանի,

Զոր կեանք սրգով միջոց Թողուն՝
Գրաւէ ըզհետ խաւար նորուն,
Եւ իՑեւոցն իսուր շըշուկ
Զիմ վարէ քայլ խուսափուկ:

Այլ յայն Թեւոց իցէ փախուստ,
Կամ իխոտոր շաւիղ Թաքուստ.
Բաբէ, իմի քայլ իւր և կէս,
Գործէ զհազար մեր զասպարէզ,
Մինչ մերս իփոյթ բարձք կրԹոտին,
Եւ անկանիմք ընդ ուղին:

Ա՛հ, հետ ընդ հետ շուք իւր խաւար
Անցցէ՝ սըրտիս ուր զարշապար
Դեռ ոչ եԹող ինչ յիշատակ
Խինդ, յոյս, յաչաց կամ ըզկայլակ.
Անցցէ՝ շիրմին մինչև իստուեր
Արձանասցի ինձ հրաւէր:

Դ.

Անցցէ, և մինչ ինձ համառօտ
Սահմանք կենաց ամիսփին մօտ,
Մինչ աչք ըզհետ ձրգին ունայն
Հետախաղաղ մինչ կայ համայն,
Ցաւք և բերկրանք մինչ մոռացին՝
Բայց յիշեցէք զաւուրսն առաջին:

Յիշեցից զծաղիկն իծաղկին,
Յիշեցից ըզբոյրն Եդեմին,
Յիշեցից սիւք իծոց վարդին,
Յիշեցից ըզկապոյտ զերկին,
Ուստի իջի սէրարփին
Ցաւուրսն առաջին:

Յորժամ ճաճանչք յաւիտենից
Ինձ ցոլացեալ յարեւմըտից՝
Ընդ վըշտազեղ ցող արտասուաց
Երփն իյերփին հարկին իբաց,

Եւ իբիւրեղ նոցուն անեղծ
Հանդերձելոցըն լուսայեղծ
Տացեն ըզփայլ գեղանըշոյլ
Անծուփ վայելք հոյլ առ իհոյլ,
Եւ յայն վերջին ժամ գեղազարդ
Յապագայից տեսիլ զըւարթ
Իյանցելոյն ըզմին յաւէտ
Անդ հայցեցից շող լուսաւէտ,
Զիմ առաւօտ ցօղածին,
Ո՛հ, զիմ աւուրս առաջին:

Ե.

Լըցէք աղբերք վըշտաց, իլիճ յայս սըրտի,
Լըցէք յոր շատ իսկ արդ Թափիք...
Լըցէք զոր ձեզ ակն ունի.
Զի ինորուն անդ զերեսօք պաղպաջուն
Յաւիտենից իջցեն նըշոյլք զըւարթուն,
Եւ սիրատարփ ընկըղմեցայց վերըստին
Յաւուրսն առաջին,
Յիմ այգ նորածին,
Կապոյտ յերկին:

ՏԱՂ ԻԷ.

ՎԱՐԴ ՋՄԵՐԱՆԻ

Ուստի այս բոյը,
Ուստի ծաղիկս այս, ո՛ Տէր,
Մինչ շուրջ ձըմեռըն սառնասոյը,
Եւ ոչ սաղարթք՝ այլ ոստք ինքնին կան յերեր։

Արդեօք զըւարթ իքո նայեաց
Սողոսկեցաւ էջ իյունից քոց նըշոյլ.
Չի տունկ տըմոյն պըճնի ինթոյը գեղահոյլ,
Թերթ ըզթերթիւք լուսազգեաց։

Զի ոչ եւեթ շունչ գարնանի
Այլ առ իքէն, Աստուած իմ, գայ և հիւսսի.
Եւ իցբրտին ծոցոյ՝ զեփիւռ,
Եւ իմահուց անդ շրջասփիւռ
Այս նորածին վարդ կենդանի՝
Թրւի մեզ սէր քո ընտանի
Բացափայլեալ գեղանի :

Իձմեռն արդեօք զբարթազոյն
Ծաղիկն իցէ, սիւք հեշտագոյն,
Թէ՝ սառուցից անդ իբիւրեղ
Պայծառագոյն ճօճիցի վարդ,
Եւ շուրջ իձեանց պաշարեալ թեղ՝
Մերձ ևս առ Քեզ, Տէր, թրոչիցի հոտ զբարթ.
Զերդ իցաւոց և յարտասուաց՝
Աղէկիզեալ սրրտի բուրմունք սրրտի բուրմունք
տրրտմազգեաց . . .

ՅԱՂ ԻՔ.

ԱՋԳԱՏԵԱՑՔ

ԱՌ ՈՐԴԻՍ ՄԵՀՐՈՒԺԱՆԱՑ

Ոչ, ձեզ ոչ, չիք, չիք յաջողուած,
Ով ժանտք, առ ձեզ, գոչէ Աստուած.
Որ զՀայրենեացդ ուրանայք սէր,
Եւ ըզնորուն խընդրէք զաւեր.
Երկինք ըզձեզ դատապարտեն
Եւ Հայրենիք խոտեն մերժեն:

Ելէք իմէնջ. բաց գընայք,
Անէծք ոյց չեն ճըշմարիտ Հայք.
Զի կայք, իմէնջ իբաց գընայք
Անէծք ոյց չեն ճըշմարիտ Հայք: (Կրկնեա)

Իձեր ճակատ նըսեմաստուեր
Ըզդատակնիք տանիք դուք ձեր.
Իձէնջ, ով դուք որդիք Քամայ,
Ամենայն ազգ գարշի սոսկայ.
Ասեն. Դա զծնող իւր անարգու,
Վատ, Հայրենեացն է մատընտու:
Ելէք իմէնջ . . . եայլն:

Օ՜ն անդր . . . ընդ մեզ չիք ձեր բաժին,
Խաւար ձեզ ակն ունի յետին.
Մեր Հայկն է հայր, Գրիգոր, Վահան,
Ձեր հեղինակ Սիւնեացն Իշխան.
Ատըդ ըզմեօք Հայկին ցոլայ,
Ձեզ՝ շանթ պըսակ Մեհրուժանայ:
Ելէք իմէնջ . . . եայլն:

Իրաց, մի 'ձէնջ կարծեն օտարք
Հայքս իբր ըզձեզ իցեմք վատթարք.
Ո՛չ, բողոքեմ վեհիցն իվայր
Թէ չէք դուք Հայք, չէք մեր եղբայր.
Այլ յանդ մեր սուրբ՝ սերմն որոման,
Գայլք ժանտ իհօտ անդ Գրիգորեան:
Ելէք իմէնջ . . . Լայլն:

Դուք ծաղր ըզմեզ առնէք իհեռ . . .
Այլ մեք այնչափ հրզօր եմք դեռ՝
Զի առ ստանձնել բեռն ըզվրշտաց
Զունիմք պէտ վասն ձերոց բազկաց.
Այլ հայկաբար ընդ դարս այսքան
Անջինջ տանիմք կնիք զԱզգութեան:
Ելէք իմէնջ . . . Լայլն:

Ո՛հ, խիստ, այո, աղէտք են մեր.
Դուք էք, ով ժանտք, Հայոց աւեր,
Ոսոխք խանձեալք իդառնութիւն,
Գազան՝ որ կեայք յԱզգին արիւն.

Զաղէտ, զոսոխ տանիմք կըրեմք,
Այլ ձեզ՝ ոչ. ձեզ ոչ հանդուրժեմք:
Ելէք իմէնջ . . . Լայլն:

Զի՞ ձեզ, անմիտք, զի՞ զուր մըրցիք,
Ո՞վ դուք և ո՞վ են Հայրենիք . . .
Դա յաղթական դարուց կաղնի,
Դուք չոր տերևք հոսեալ յերկրի.
Զայդ փոթորիկք շարժեցին ոչ,
Դուք դոյզն իսիւք կոծիք դողդոջ:
Ելէք իմէնջ . . . Լայլն:

Ելէք . . . Մասեաց սուրբ հովանի
Մի՞ զձեօք անկցի, չէք արժանի.
Մի՞ զմեր առնուք արև, անձրև,
Հայոցս է դա յերկնից պարգև.
Իսահմանաց սուրբ Եղեմայ
Ելէք առ հայր ձեր Սատանայ:
Ելէք իմէնջ . . . Լայլն:

Ելէք, մի զհարց մեր սուրբ զԱնուն
Առնուլ, և մի զայնր Օրհնութիւն.
Թողէք ըզՄայր զոր ծաղր առնուք,
Թողէք զաւերսն իւր և ըզքուք.
Աւերք նորա են մեր պարծանք.
Ամօթ մեր դուք էք, ով վիժանք:
Ելէք իմէնջ . . . Լայլն:

Անէծք իգլուխդ, անէծք խիրտ,
Անէծք յԱգգիդ դէմ հեղեալ քիրտ,
Անէծք իզործ ձեր և իբան,
Ցամօթ և ցաւ կեցջիք ծրփան.
Եւ վաղազրաւք յերկիր օտար
Տապանքդ իփուշ ծածկեսցին չար . . .
Այս է բաժին այս են վերջայք,
Որոց չիցեն ճըշմարիտ Հայք.
Այս է բաժին, ձեր, այս վերջայք.
Անէծք ոյց չէք ճըշմարիտ Հայք.
Անէծք ոյց չեն ճըշմարիտ Հայք:

ՏԱՂ ԻԹ.

—

ՈՎ՞ ԻՑԷ ՆՄԱՆ ՔԵԶ ՅԱՍՏՈՒԱԾՍ, ՏԷՐ

ԱՄՈՎՍ

Ա.

Օն, զոչեցէք, ընտրեալքդ յազգաց, զոյգ ընդ ձեզ և մեք,
Զիք յաւիտեանց իբրև ըզմերս Աստուած այլ ուրեք.
Ցերկինս իվեր կառուցէք զաչս յանբաւ խորազնին,
Եւ յայն յանդունդս իվայր Թէ բիբք ձեր Թափառեսցին
Մահացուք, յԱստուած ոչ հասին:

Զեզերբք փառաց արկեալ, ըզգահ իւր յաւիտենից,
Համապարփակ զիւրև շուրջ վիհք մըշտավառ ցոլից,
Արտևանունք նորա չափեն զանսահմանութիւն,
Եւ տիեզերբ կէտ անկըշիռ առ ոտիւք նորուն
Խորասուզին իստուեր մահաքուն :

Բ.

Թէ ակնարկէ՝ երկինք զան իդող,
Երկունք զլերինս ունին, նորուն իճեմ սարսի հող.
Իրրամանին հաստատութեան խըզեալ Թըռչի սիւն.
Եւ միջոցին համառօտի անծիր լայնութիւն.
Արփիք ըզջահ հոսեցուցեալ յալիս խաւարին,
Խոժոռադէմ լերանց ըստուերք յունայն կարկամին :

Թէ տայ ըզձայն աստուածաբարբառ՝
Երկինք, երկիր, անդունդք իթունդ կրկնեն դողաբար,

Եւ լրութիւն փոխանորդեալ ընդ ձայն բարբառոյն
Յաւերժախառով ալեաց ծովուն սանձեալ յահ՝ ի հոյն,
Անծուփ անմռունչ անշարժ համայն ալիք՝ վայր իվեր
Վիմատառին յանկարծ յընթացս իւրեանց անեթեր,
Իբրև իշանթ փայլակնաթափ կենսազրաւ
Հրատապ նրժոյգ աճիւնասցի՝ կերպ յարշաւ :

Թէ զԱստուածեան շարժիցէ շրթունս .
Իղող իտրոփ խոնարհելով լուսատես ակունս ,
Զուարթունք յակճիռըս կան մընան անդարձ պատ-
զամաց ,
Եւ լրութիւն անջրրպետէ ըզձայն նրւազաց :

Խօսեցաւ Աստուած .
Եւ եռասուրբ վերադառնան դրրուագք օրհներգու
Հրոչակելով տիեզերաց յանմահ՝ ալելու ,
Զյաւիտենից Վեհին կամաց նորոգ յայտնութիւն .
Նոր շնորհաց ցողք . այլ տեղային նախ քան զդարս
անհուն :

Օն, զոչեցէք, ընտրեալքդ յազգաց զոչեսցուք և մեք,
Զիք յաւիտեանց իբրև ըզմերս Աստուած այլուրեք:
Նա զտիեզերս լըրիւն ունի յահեակ վերամբարձ,
Եւ զյաւիտեանս հաստեալ յաւերժ նախ քան զարփ-
ւոյն դարձ.
Նախ քան զերկինս իվեր հիմունս արկ անսահմանին
Ցանուն նորա ոչ հանդուրժեն երկիր և երկին.....
Զի սիրտ մահացուին:

ՏԱՂ Ա.

ՔՈ Է ՏԻՒ

(ՍԱՂՄ.)

Քո է, Տէր, տիւ, քո է չքնաղ այս պարգև,
Քո՝ որում լոյս մասն է Էիդ մըշտատև.
Քո՝ որ ըզբիբս յո դարձուցեա խորազնին՝
Զակնարկութեանդ հետս անդ Թողուս լուսածին։

Իբրև զոգիս զոր խոտեր, նիւթ խաւար էր,
Աշխարհ յաղջից այս ծրփանուտ դանդաչէր՝
Երբ ըզբթոյդ յառեր դիտումն ինըմայ,
Եւ կամքդ անդէն ծընան զարև լուսընկայ։

Մարդն աստ ըզտիւ զիտ կազմ յաչաց նախն իթարթ.
Շուշանք զիւրև և քաղցրաշունչ շողայր վարդ.
Զի պէս շնորհացդ արդիւնագործ իհոգւոջ՝
Եւ տիւդ աստէն փրթթէ ծաղկանցն ըզբողբոջ:

Զեռող յորդոյն խոնարհ, վրսեմ թիռք արծուոյն,
Հողմք անպարիսակ, ալեաց շառաչք, դքէզ ամպոյն,
Այն ամենայն քո են, զերդ քո իսկ է տիւ,
Եւ ուր սրսիռեալ դա տարածի օրաթիւ:

Քոյդ՝ մրրրայօն ըստուերք լերանց յամպրս յեց,
Եւ գետք են քո խոնարհութեամբն, Աստուած մեծ,
Քո անապատք կրրկին ջրրոց 'ւ աւազին,
Եւ զոր երկեակ նոքա բազկօքն ունիցին:

Ոչ՞ քո պրտղօքրն ճոխազարդ են և ծառք,
Եւ տունկք ծաղկօքն երփին իմարգ վառ իվառ.
Որ զբարուն ական առ Քեզ ուղղեն և ցրցունս
Զերախայրիսն առբերելով և բուրմունս:

Քո են, քո Տէր, հաւիկն ի մռունչ հեշտագին
Ցայգուն իշող վարդից 'ւ իստուեր երեկին,
Եւ գիւրըն քո մընչէ նըւագ զոլ տըկար.
Ում՝ ի քո են՝ հանդէպ եմք բնաւքս հաւասար.

Բայց քոյսըդ զայդ, տիւ և զծընունդ իւր անհաւ՝
Ետուր մարդոյն, ըղձիցն, ըզքեզ եղեալ բաւ.
Ետուր. սակայն և այն տուրք քո են պատիւ,
Քո, Աստուած իմ, յումէն է մարդ, որպէս տիւ:



ՅԱԴԱԼԱ.

—

ՍԷՐ

ԱՌ ՀԱՅՐՆ



Ա.

Հայր իմ... Հայր իմ, առ իմէ
Ըզքեզ յորժամ յիշիցեմ
Ծընեալասէր զորովոյ
Տրոփիւն խիրտ իմ լըսեմ...
Ընդէր հեղեալ արտասուաց
Մերկեան զաչօք վարագոյր,
Ինձ յարփենին չըներ է
Հայել դիտակ լուսաթոյր:

Ո՛, սփոփանաց ոչ այս ժամ,
Ոչ՞ խընդի ինձ օր սերկեան,
Ոչ՞ այդ արև հրակայծակ՝
Քեզ իմ կենաց որորան,
Յորժամ ինեպ խաւարին
Թափեալ զբստուերսըն նըսեմ՝
Քեզ, Հայր սիրուն, մերկանայր
Ըզկերպարան իւր վըսեմ:

Բ.

Ո՛վ երջանիկ ճառագայթ,
Նըշոյլ յաւէժ սիրեցեալ,
Որ գիշերւոյն զառաջին
Ըզպատրուակ պատառեալ՝
Յողջոյն իջեր կենսալիր
Իմ Հօր բըբաց զըւարթուն,
Եւ զաղուենին ժողովեր
Նախկին ակնարկ սիրասուն:

Այլ ինձ աւաղ, ո՛ Արփի,
Ինձ քո ճաճանչք ոսկեփայլ
Ո՛հ, պըղտորեալ զիմ աչաց
Ոչ հերձանեն ըզմըռայլ.
Խորհուրդք իսիրտ բազմադէմ
Տըխուրք ըզխինդ յաջորդեն,
Եւ ոգոր մեծ իծոցիս,
Լանջք անձկացեալ՝ ո՛չ բաւեն:

Եւ իբր ամպոց խեռ կուտակ
Մի ըզմիով ելեւել
Արձակ յերկնից վարգեն դաշտ,
Պատրաստ զիրեար պատառել,
Եւ մենամարտ մրրցանացն
Ըզձայն տըւեալ երկուստեք
Ճակատ կանգնին առ ճակատ. —
Բարէ, տեսիլ սրրտաբեկ:

Իսկ ապ՝ իշռինդ ահաւոր
Որոտալով երբ բախին՝
Թռնդ տան բարձունք և երկիր ,
Մահկանացուք խուճապին ,
Եւ շաթընկէց հրավարսամ
Որոտընդոստ փայլակեալ
Ցորդահոսան Թափին ամպք ,
Երկինք ողջոյն իտապալ :

Նոյն և յիմ սիրտ նոյն ամբոխ ,
Նոյն և յիս մարտ աղեկէզ ,
Եւ մի եւեթ անձուկ սիրտ
Ա՜յնքան կըրից զոլ հրկէզ . . .
Բախին զուպար առ զուպար .
Իսկ ո՛ յաղթող նահատակ ,
Ուրախութեան մի ժըպիտ ,
Թէ Թախծալիր յիշատակ :

Ցաչաց հայիս Թէ վրտակս ,
Իսրտակէզ հառաչանս՝
Կարծես ընկնել զիս ցաւոց
Ցաղիոդորմ հեթեթանս .
Այլ ընթակից այն նըշոյլ ,
Այն սրտատրոփ հրճուանաց,
Ոչ՞ քեզ զուշակ հանդերձին
Զոր իսրտիս բազմազգաց :

Գ .

Իսկ արդ իցեմ ինչ տրխուր . . .
Իցեմ զբաւարթ ես իխինդ .
Ո՞ ներհակիր յայդցանէ
Միրտ զիմ կալեալ ունի պինդ . . .
Սա աւասիկ , նոր զարմանք ,
Ինոյն անդուստ աղբերէ
Հակառակաց զուգավէժ
Ատէն դիտեմ ծընունդն է :

Թէ այտք իցող հեզասահ,
Թէ լուսոյն բիբք մըթագնին,
Թէ զերթ իծով սիւզաշունչ
Լանջք վէտ իվէտ տատանին,
Այո՛, Հայրիկ, սիրո՛ւն Հայր,
Փո յիշատակ ցանկալի
Ծընելասէր զայդ մըրցանս,
Բոց զայդ յուզեն յիմ սըրտի:

Իբրեւ զի քաղցր է ինձ, Հայր,
Ցայլազունեան յայդ իկիրս
Սէր ըզքոյին նըկատել
Զի յիս՝ ազդէ զուգակիրս,
Մերթ իժըմիտ ըզշըրթունս,
Ըզլիճ լընու մերթ զաչաց,
Եւ զաննմանադ իբընէ՝
Սէր վեհազոյն լըծորդեաց:

Այսպէս հրզօր իսբրտի,
Սիրոյն անդ բուռն է հանդէս,
Զբհամազգեաց բազմեալ գահ
Սէր ճախր առնու յասպարէզ.
Խինդ և Ցախիծք իհամբոյր
Նորուն փառաց անդրուվարք,
Իբրու զի տիւ և գիշեր
ԶԱպողոնեան ձրգեն կառք:

Տես միանգամ դու զերկիր.
Որպէս զի մեծ սահմանքն են,
Ոչ հետք բընաւ զնորին ծայր,
Ոչ զեզերս աչք նըկատեն.
Նա յաղթաբերձ քան Ցէ նաւ
Սաղապաճեմ սուրալով,
Տիեզերաց յանպարոյր
Ցարաթըռեալ լուղի ծով:

Բայց լայնածիր զայդ բանակս
Ցեզերց իմուտ՝ բիւր սերունդ
Նուաճեալ մարդոյն յօթևան
Սանձէ ըզվայրսն համազունդ.
Հազար հազարք հազարաց
Շունչ անդ ծրծեն կենսածին,
Որ քան իդէմս և յիրան
Իբան՝ ւի միտս որոշին:

Մին յատակեալ, այլ շինէ,
Սա յողբ՝ խընդից նա ի ծայր.
Սա գորովի, միւսն ատեայ...
Սոքա մի ազգ համահայր.
Այլ աղէ մի դու զերեսս,
Ինչերքս իսիրտն ուշ կալջիր.
Տես ոչ անդէն համահետ
Դիտես կընիք զուգակիր:

Ոչ զՈվկէան հանդարտեալ
Ցալեաց եզիտ ուղևոր,
Մահկանացուն ոչ ըզսիրտ
Երբէք կալով անոգոր,
Բիւր դարձադարձ պարագայք,
Սըրտին շիջաւ ոչ հընոց.
Սէր անդանօր օթանայ,
Սէր սըրտի յոյզք մըշտաբոց՝

Դ.

Է՛ մահացու, դարձ հայեաց,
Ո՞ քո գործոցդ է վարիչ,
Զո՞ կարծիցես ղեկավար
Ճանապարհիդ քոյ խոռիչ.
Մերթ առ բարձրեալ դու ըզձիւք,
Մերթ յընտանիս կարևոր.
Երախտագէտ, բարերար,
Եւ հուպ՝ վայրագ, նենգաւոր։

Չի յարափոխ այդ տիպարք,
Ծուփք տարուբերք ըզբարուք.
Ըզմէ բերան որ զբգուեաց
Ցայլ ոք լուտայ չարաշուք.
Այժմ իծիծաղ ծաղկին այտք,
Անդ իխորշում և կընճիռ
Ցարփւոյն ընձուիլ մինչ իցայգ
Ցանգ փոփոխեալ իկըշիռ . . . :

Բայց այդ համայն արգասիք, —
Չիցեն նոցուն և սատարք,
Ինքերքս իքեզ մուտ, ով մարդ,
Մի խնդրեսցես զայդ յօտարք.
Գանձ դու ծածկեալ իծոցիդ,
Աստուածատուր և դ՝աւանդ
Ցոր ծըրարեալ ընդ բարւոյն
Խուռն և սերմունք դընին ժանդ :

Զարմանայցես, մահացուդ,
Զիմրդ դու կաւ հողազանգ՝
Առ որ քեզ շունչ ետ
Ի՛ոգի՝ ուժգինս առ նա ձրգտիս ցանգ.
Այլ եղծական է մարմինդ.
Մահկանացուդ այդ տարազ.
Հայեաց յոր սիրտդ ամփոփէ՝
Վեհին պատկեր աննիւթ:

Ե.

Ի՞նչ տեսեալ քո ըզբոց.
Բարձունք Ծրուիչք են նորայ.
Բոց է և Սէր, վայրահակ
Ոչ հանդուրժէ զոտընկայ.
Բոց է և Սէր, և ընդ ինքն
Առեալ շրջան հոլովի.
Բոց է և Սէր, և զոր շուրջ
Ջանայ 'րծարծել իւրովի:

Բայց զի արձակ ունի սլաց,
Ոչ միշտ զօրէն պահեաց չափ,
Է զի ընդ անձն իւր համակ
Առեալ Թաւալ անԹարԹափ,
Զանձն իւր եղ կէտ նըպատակ,
Եւ ըզպայման մերԹ վազեալ
Ըզնըմանեօք խառնեցաւ,
ՅԱստուած վերելսըն Թողեալ:

Ամենայնի առիԹ սէր,
Սէր աշխարհի Թըռչարան,
Իսէր զըգուեմք և ատեմք.
Հեռ և վըրէժք նովաւ կեան.
ԱտելուԹիւն չիք յերկրի.
Մըտաց պատկեր անէակ.
Զատեայ, այլ զանձըն սիրէ,
Զի իւր սիրոյն զոս ներհակ:

Թէ բոց վառեալ յերակունս,
Թէ փայլակեն սուրք և տէգ,
Թէ յապաժոյժ և յապշոպ
Քաղաք և անդք ծախին հէգ,
Մի բնաւ կարծես Թշնամի
Լուցեալ իլանջըս դրընդիւն,
Սէր ըզբազուկս իհրացան
Զինէ մահու շառաչիւն:

Այսպէս իծոց տիեզերց
Աւիւն ճեմի Թագըստիւ,
Լուսաւորաց սա զառեղ
Իգիլ գըլէ Թիւս յանԹիւ.
Եւ մեր գընդիս այցելու
Ջեր և ըզլոյս հայԹայԹէ,
Անձրև, երաշտ, շանԹ, մըրրիկ,
Նորա և սիւգ շնորհ է:

Զ.

Բայց անապակ ես դու, Մէր,
Մէր, զարմանամ կենսաբուխ,
Իբրև զի քաղցր է նորա
Թելադրութեանց անկեղծ ուխ.
Ընդ մարմնական երևոյթ
Կարծես զոգեալ Սերովբէ,
Աչք իխոնարհ երկրապիշ
Այլ շեշտ իւր սիրտ յերկինս է։

Հայեաց ամբոխ մեծ յերկրի
Երկնից՝ կալեալ արահետ,
Մէր իմիջի կայ սարիք,
Մէր նոցա Տէր կընիք եդ.
Գիտել կամիս զոք յարիւն
Ներկեալ Փըրկչին Թէ իցէ,
Տես զառ ընկեր նա ըզՄէր
Ընդ Աստուծոյ լրծորդէ.

Այսգոյն երկնից հաճոյ Սէր,
Սիրեա և վարձք ուղեկցին,
Ընդ Աստուծոյ գիւտից զոյգ
Ցերկրի ճեմել իբր յերկին.
Զինչ քաղցրագոյն քան ըզՍէր,
Զինչ քան Սիրոյն պատուիրան.
Գուբ զանջրրդիս ծակոտեալ
Եգիտ ինչ մարդ հեշտական:

Իդոյն յօժար և բնութիւն,
Իդոյն միտեմք ընդաբոյս.
Սիրտ չև յիւր խորս խոնարհեալ՝
Սիրոյն տրոփէ նախ իյոյզ.
Անխաբ հրամանք մահացու
Պահանջեն ոչ նոր իքէն,
Այլ զոր իլանջս իպահ եդ,
Սէր, դարձուցես դու այդրէն:

Իցէ քո սիրտ սիրազգած. —
Աղէ, ինձ լեր դու կարկամ,
Ցաղապատանս մի Սիրոյդ
Գրգուես զեղբայր, բարեկամ.
Բիւր ջան իզործ, բայց իզուր.
Սէր ճանաչէ զիւր բեւեռ.
Տես յընտանիդ ախորժակ
Զիարդ զօրէնս կանգնեաց Տէր:

Ըզծնող քոյին պատուեսցես
Նա զիմ լընու քեզ տեղի.
Ներմա պաշտօն, յինէն վարձ
Կեանք երկար քեզ հորդեսցի:
Այլ իցէ, Տէր, Թէ երբէք
Սիրտ զբլասցի զայն որդւոյ...
Ա՜հ, ոչ պատիւ ես եւեթ,
Այլ և բորբոք իղձ սիրոյ:

Է.

Արև և լոյս իմ Քո, Տէր.
Դու իմ աւուրց հեղինակ.
Քո զիս բազուկ իվերնէն
Թափէր իդուրս անապարիակ.
Կենաց սակայն ինձ միջնորդ
Ակնարկութեանդ լըցուցիչ
Ըզհայր գիտեմ ես յերկրի
Իբրու աջոյդ զոլ դիւրիչ:

Դու յարմատոյցըն Թռուցեալ
Տաղաւարիս օթեւան,
Ինձ ըզգալի Քեզ տիպար
Թողեալ ըզծնօղս յանդիման.
Ախորժեսջիր, Անմահ Տէր,
Թէ սիրտ բոլոր Քեզ և յոյս,
Նոցա ձօնեմ խանդակաթ
Զերախտայրիս սերտ Միրոյս:

Նոքօք առեալ իմ ընձիւղ
Պրտկեալ նոքօք շառաւեղ,
Մեծ ինչ բընոյն Ի՛ նուիրեմ
Զբստուեր Սիրոյն վարսազեղ.
Նա դողդոջուն ինձ յարբունս
Ցուպ վերամբարձ կենսատու,
Նըմին ալեաց սըրտաթեւքս
Լիցին բարձող խնամարկու:

***

Այգուն այգուն երբ երկնից
Վարդաձոյլ դրունք փեռեկին,
Արծաթափայլ երբ լուսնի
Վարսք շող իշող ծածանին,

Ըզծընողաց զիմ յիշատակ
Ցողեսցեն աչք կըրկնավըտակ.

Եւ աբխարային մինչ տեսիլ արարչագործ գիս էից,
Տէր, իՓոյին վեհ պաշտօն ամբառնայցէ սիրալից.
Տիեզերաց անմահդ ընդ Հայր
Եւ իմս հայր Փոյդ ինձ յուշ տիպար:

Բայց Փո առատ, Բարձրեալ Տէր, աչ Քէ իվարձ զեղանի,
Թէ հայրագուՔըն սիրոյ պըտակ կապես արժանի,
Հանդերձելոյն առհաւատչեայ
Ատոի կանխեալ տալով նըմայ,

Ա՛հ, մի զայդ ինձ, մի աւուրք ինձ բան ըզՀօրըն շնորհին,
Այլ ընդ իմոց և զայդ տուրս կըրկնեսցես յամսըն նորին.
Զաւուրս երկնից Հայրըն կեցցէ.
Զայս Փեզ որդիս շընորհ հայցէ:

Եւ որ յերկնից միջակի Քեզ յայսմ աւուր լուսափայլ
Աստղ հայրենին ծագեցաւ, մի ըզնովաւ պատէ մռայլ.
Այլ պարունակ նորա յերկար
Շրջանակի յանպարոյր դար : —

ՏԱՂԼԲ.

ՍԱՂՄՈՍԱՆՈՒԱԳ

Քեզ մըտաց իսըրտէ մատուցանեմ, Տէր, գոհութիւն.
Տէր, ըզգործոց Քոց երգեցից զըսքանչելիս գերաբուն.
Իբրև զի՞ քաղցր իսըրտիս ուրախարար ծաւալի շունչ
Մինչ աչքս իՔեզ վերամբարձ, մատունք իլար քաղցրամրմունջ.

Դողդոջեն տարփմամբ շըրթունք սրրբանուէր
Յօրհնութիւն Քոյին, Աստուած իմ և Տէր:

Դու զԹրշնամին իմ դարձուցեր խիսխուստ ոտք ինահանջ,
Եւ ատելիք կորեան անհետ յերեսաց Քոց իճաճանչ.
Արարեր ինձ դատաստանս, և զիրաւունս իմ առ իլոյս
Անօրինացն ընդ կառափունս ըզվրէժ հանեալ տա-ռապերոյս.
ՅաՀոռ Քո արդար ելեր դատաւոր,
Ելեր բազմեցար . . . և ուր մեղաւոր :

Իսաստէ բարկութեան Քո Հեթանոսաց պակեաւ բա-նակ.
Որոտացեր, և ամբարիշտն անկաւ կործան հիմն ի յատակ.
Եւ որ փրքայր մեծաբանէր ոտս հատուատեալ առն յաւիտեան,
Արդ և անուն իմոռացօնքս ջընջեցաւ անհետական.
Յակնարկել Քո, Տէր, կապեցան սուսերք,
Հոսեցին պարիսպք բարձունք 'ւ աննըւէրք :

Իբր համառօտ շրջընջիւն հընչեալ ինոյն և լրեալ,
Արագարագ և յիշատակ նոցա կորեաւ անակընկալ.
Իսկ, Դու, Տէր, զանմահութիւն որ իբրոին բարձեալ ունիս,
Դու յաւիտեանս ժամանակաց անէութեանդ իսիառս հանգչիս.

Երկինք Քեզ փառաց զահոյք են պատրաստ,
Թօթափես անդուստ զարդարութեան սաստ:

Աւանիկ նրստաւ յատեան, և յանկաշառ կրշռոցն իմէտ
Առ եբարձ զաշխարհ ժրպիրհ, և զժողովուրդ իւր դատափետ.
Ծանրացաւ նրժար մեղաց, և տրնանկին հարբուտահար
Տէր իդէպ ժամանակի հաս ապաւէն իրաւարար.

Ցուսացին իՔեզ սիրելիք Քո, Տէր,
Զի Դու խնամարկես նոցին, Մարդասէր:

Տուք օրհնութիւնքս սաղմոսաց այնմ որ բնակէն ի Սուրբ Լերին,
Եւ պատմեցէք Հեթանոսաց զի այց առնէ Տէր տընանկին.
Իսկ որ ըզձեռան յարիւն արդար անօրինեալ շաղախեաց՝
Երկիցէ նա սատակարարանջ տալ ըզվերէժքս զբրկանաց.
Բողոքէ յերկինս արդարոց արիւն
Եւ ոչ մոռացի սրբոցն հեծութիւն:

Սո՛ւրբ ազէ, Տէր իմ Տէր, արկից աղերս պաղատանաց,
Զ'իղոյն աղէտք իմ տրխուր հանդարձակեն զիս տրրտմազգեաց.
Տես, և իղրանց իմաստուանէ վերաբերեա զիս աննըկուն,
ԸզՓեզ օրհնել իցէ մարթ մահացելոյն յաւերժ իքուն.
Այլ ես պատմեցից իղրուն Սիոնի
Զօրհնութիւն Քո, Տէր, անդադարելի:

ԻսիրիուԹեան Փաւմ, Բարձրեալ, ցընծացէ անձն իմ
խընդամիտ,
Մինչ ընկալցին ՀեԹանոսք յոր փորեցինըն խորամիտ,
Եւ զոր ղօղեալ Ծագուցին դարանակալ ինձ որոգայԹ՝
Ինոյն առցին իրաւապէս նախ ոտք նոցին յամօԹ,
ԻսայԹ,

Մինչեւ ծանիցէ աշխարհ համօրէն
ԵԹէ անմեղին Տէր կայ ապաւէն:

Ամպարըշտին նօԹեալ բարիք փոխարկեցին հուպ
իշարիս,
Եւ իսայելս անդ կապեցին ձեռք իտոռունըս սոս-
կալիս.
Սատակումն յաւերժական երկինք ածցեն շեշտ պա-
տուհաս
Որոց խմեղսըն յամառեալ յաճախեցին զօրհանապազ.
Թիկունս առ Աստուած դարձուցեալ ժըպիրհ
Մոռացեալք ըզհուր Ներա վրէժխընդիր:

Բայց թէ իվիշտս երբէք տեսեր զարդար հիւծեալ ցաւագին,
Ոչ մոռացաւ ըզնա Տէր, այլ զարութիւն պընդէր նորին.
Եւ իբրու սերմն անկորուստ պըտղաբերեալ բիւրաբեղուն
Առ յապայս ուրախութեան տացէ խայրիս համբերութիւն.
Եւ որ արդ իքիրտն հարեալ տըխրալից՝
Ճակատք իյոլոր փայլեսցին վարդից:

Այլ դու, Տէր, ցերբ ներիցես անօրինաց զիւրեանց հաճոյս.
Արկ ինոսա. Բարձրեալ Հրզօր, ըզդատ աջոյ Քո քինախոյզ.
Զի դառնակիր ընդ լրծով տանջեալ ահեղ դատաւորիդ
Ըզծորելի պայման կենաց հէզք և թըշուառք առցեն իմիտ,
Եւ ըզբարձրացեալ գոռոզ պարանոց
Իջուսցեն իհող՝ յամօթ և իկոծ:

Սակայն ընդէր, Անմահդ Աստուած, ըզմեր կարիս անտեսելով
Իբացեայ զողորմութեանըդ Քո Ձողեր զուն և զորով.
Աւանիկ մեծապանծ սիզայ խըրոխտ այր ամբարիշտ
Եւ տառապեալն իբազմադէմըն տուզանաց այրի ի վիշտ.

Դու ինքն ըզխորհուրդըս չարին արգել,
Տուր իցաւ սաստիկ երերեալ յուզել:

Ճողոմարար իհրապոյրս ըստ ցանկութեան սըրտին արբեալ
Համայն ժըտի մեղաւոր՝ համբաւ, անանց փառս ըստանալ.
Եւ մինչ երկնիցն ըզգըլխովն իւր հանդերձի շանթ վրէժխընդիր,
Այպն արարեալ ապըստամբ վազէ 'ատ օրէնս Աստուածադիր.

Եւ մերժեալ իբաց զերկիւղ Արարչին՝
Միտքն իպիղծ շաւիղս յաձեալ մոլորին:

Զիրաւունս արդարութեան բարձեալ իսպառ յերեսաց,
Առաքուր խընդայ Թոպել ըզզլուխ իւրոցըն Թըշնամեաց.
Եւ ասէ իսկ իսըրտին Թէ՝ «Բարեբաստ յամաց շըրջել
Մի յամպոց երբէք իմուն նըսեմասցի այս իմ վայել,
Եւ յերանութիւն խարըսխեալ յարեայց,
Ազգէ յազգ չարեօք մի ասասանեցայց»:

Անիծաբեր դառնութեանց բերան նորա պատկանդարան,
Եւ իլեզուէն Թունաւառեալ Թրոչին սըլաքք օրհասական,
Արշաւասոյր հարկանել զանբիծն իսիրտ և ըզտընանկ.
Աչք ինա շեշտեալ ձըզտին տեղալ ըզնետսըն Թունազանգ,
Եւ առիւծակերպ իմորուոջ իւրում՝
Դարանեալ նըմա սպասէ ապառում,

Զի դաւաղիր իշողում Թակարդեալ զայր բարեպա-
րիշտ,
Ինա զցաստումն իւր ոխակալ Թօթափեսցէ յամենա-
վիշտ.
Եւ զիշախանձ ըզնովաւ անկեալ զազան զերդ յիւրն
իյորս
Աչս իբարձունս արձակէ, իդառնութեան սրբոյն
յոլորս.
«Մոռացաւ», զոչէ, «Տէր ըզձեռն իւր յաղթ,
Կամ Թէ զընտրելովքն ինչ արար ապախտ»:

Այլ արի, Աստուած Հըզօր, ցոյց ըզսաստից Քոց
զաւազան.
Տես, զրթասէր, ըզտընանկին աւուրս հիւծեալ ինե-
ղութեան,
Զի յանդըզնեաց ամբարիշտն ըզԲարձրելոյդ զըրգ-
ռել զայրոյթ՝
Իբր այն Թէ, Տէր, անկարեկիր զերկիւղածովք Քեզ
չիցէ փոյթ.
Այլ Դու որ յերկնից հըսկես հայրախնամ,
Ըզսըրտմըտութիւնդ հեղ յազգ անըզգամ:

Քանզի ըզՔեզ նեղեալքն իվիշտըս ճանաչեն պարիսպ ամուր.
Ու Քեզ դիմէ հայրապետ և որբ մանուկ յուսակըտուր.
Կամեաց, Տէր, և խորտակի անօրինին ձըգեալ բազուկ,
Եւ հետք անգամ կորիցեն մեղաց նորին չարաշուք.
Դու յաւիտենից, Տէր, տիրես յերկին,
Յարքայութենէդ Հեթանոսք անկցին:

Լուր արդ, Տէր, լուր հեծութեան դառնահառաչ հէգ տընանկին
Հայր բարեգութ, և մինչև ցերբ որդիք իվիշտըս կողկողին.
Դարձցին աչք Քո հայրենի, ողորմութեանդ իջցէ բազուկ
Զորքն իգիրկըս վերառնուլ, ջընջել յաչացըն զարտասուք,
Եւ զլուխն անօրէն կոծեալ շանթահար
Մի ևս աղքատին կացցէ ոտընհար: —

ՏԱՂԼԳ.

—

ԱՊԱԳԱՅՔ

Հանդերձելոյն մեսացուբ:

(Վ. ՀԻԻԿՈՑ)



Տենչք մըշտավառ, ակընկալիք մեծայոյս,
Անդորր հեշտից, համբաւք շրքեղ իպատիւ,
Մըտերմութեանց զոյք, և հրճուանք յորդալոյս
Ամանորիդ կանխեն յողջոյն, պայծառ տիւ:

Որ իսպիտակ դարեւանդից ամպահերձ
Ցոր զոսկեթոյր խառնեա ըզշող ճակատուդ՝
Այսր անդրադարձ վազեալ ճաճանչ քո յուղերձ,
Ցապագայից անկանի ծոց սոլոսկուտ:

Ո՜հ, մահացուն խորհրդաւոր յայդ իշող
Զիարդ ընդ սայց Թափ անցանել տենչայ քող,
Բրբոք՝ իծուի յոր վառի յոյս իմն ամբիծ՝
Ցառեալ յաւուրցն հանդերձելոց նախագիծ.

Դիտել զիարդ ծագէ ամին վերջին լոյս,
Գեղածիծաղ քան զառաջինս արշալոյս.
Ճոխ առ իհունձ ըղձից ատոք իհասկին,
Ըսփոփական՝ Թէ վերբերիչ աղեսին:

Նըշմարել յոր աղբերց հոսանք ընդ առուս,
Ցորդորիցեն դառն եթէ քաղցր արտասուս.
Ծրխիցին դէմք սըրտից յօրինիս խընդալից՝
Եթէ յաւուց հեծեծուցիւնք վերելից:

Տեսանել ուր շաւիղ պարզեալ իհադէպ,
Դիւր և հեշտին՝ Թէ զահաւանդք բազմավրէպ.
Ո՞ր ընդ գլխով տարածեացի հովանի՝
Նոճենց ըստուերք եթէ զբաւարձ մըրտենի:

Ելկատել որ ի գնացս ուսին ընդ առաջ՝
Ելցեն երէզք և կամ ծաղկանց գեղ կանաչ.
Բաստք որպիսի, և որ մբրցմանց շահատակ,
Համառօտեանլ արդեօք, ընդ հուպ ներգատակ:

Ներշմարել . . . ոմն . . . և ուր հնայիցս այն նախ շող.
Սրացաւ աւանդ և ոչ զակօս իւր ենթող.
Սրացաւ և այն լոյս խծոցոյ ապագայց.
Եւ սիրտ զոչէ. Ի՞ւ զնոցին խորս ընթերցայց . . .

Բնաբէ, յունայն խաւարատոյզ Թօթափին
Եւ ժամքն այն սուղ, յորում բարեմունքն հրմային.
Եւ ոչ բաւէ սիրտ յիւրն հանայն բոց ճենճեր
Յառաջադէմին փարատել սեաւ ըստուեր:

Այսպէս աւուրք զրահեան ի մէնջ փախուստ!ոայ
Ըզյոյս և խնթ ընկերզմեն յուխտ առօրեայ.
Եւ մինչ վաղուին անուն արտին էր ապրատի,
Թիւ սին յանցեալն յաւել յականն ի Թարթատի.

Սահեցաւ, ո՛չ, ո՛չ ի կընիքն այն հեշտին
Ցոր Թերակազմն ակընկալիք ցանկային.
Ո՛հ, ըղձից Թև ազատաճեմ երազէ,
Կենաց միայն կենաց զուգել ոչ գիտէ:

Զի նորին ինձ խոյանք ի ճախր ընդ արփիս՝
Մինչ ոչ ըզնոյն հետս ընԹանայ ապառնիս.
Զի փոյթ յապայս աւուրց յուսալ տացէ լոյս,
Մինչ յաջորդեն աւուրք . . . 'ւ ահա պատրեալ յոյս.

Քանզի ցաւոց նըսեմաստուեր ափափայք
Սահմանք երկրի՝ ձըգեն խաւար և ըզվայք.
Հոսիցեն նախ ամպք Թանընկէց ոլորտից,
Զի ապագայց տիւ փայլիցէ լուսալից:

Ոչ, ոչ ի զուր յուսոյն արկան աստ սերմանք,
Են են նորին ծաղկածաւալ տոհմականք.
Այլ նախ հողմունք վարեսցեն դաշտըս սըրտից
Եւ արտասուք ոռոգեսցեն վրշտալից:

Միրեն երկինք հաւատարիմն ըզմըշակ,
Զսուգ և ըզյոյս ածեալ ամոլս ի վաստակ.
Զճակատս ոգւոց փաղփեալ յերկունըս քըրտանց
Ակօսաբեկ իվըշտից հերկ Թափանցանց:

Հիմ յապազայց բաղցրահամբոյր խնդրեմք սիգ,
Կողերք խայրեաց Թէ զան ի հողմն հաստաձիգ.
Ոչ վարդենեաց հիւսք ցօղաՊուրմն յարշալոյս,
Այլ փուշք Թողուն հետս յիրանունս անկորոյս:

Վաստակեացուք. — զի փոյթ քաղել ըզպըտուղ
Վաղիւ կամ յետ ամաց, յերկար կամ ի սուղ.
Ո՞չ շատ իսկ է զի գոյ և աստ վայելել,
Ողբոց հովիտս ունի խընդանս իւր ընդել.

Գաղտնի հեշտանք քօղածածուկ ի տեսիլ,
Որ զսիրտ յանշուշտ յոյս խրախուսեն ըզմայլիլ.
Հանգոյն՝ անտես ծաւալական ջինջ այեր
ԶկենդանուԹեան տայ բարախմունս ի ծոց մեր:

Ապագայք . . . ճի յուսացուք յապագայս .
Զի ապագայց եմք մեք և ոչ ի ներկայս ,

Որ ոչ ընդհատ քան զմանուշակ
Ի ձեռս անդէն յորում գբրգի
Կորուսանէ զբոյրն անուշակ
Զև Ցարշամեալ իմբրբրկի :

Ապագայք . . . գայցեն այո ապագայք ,
Ի ճրշմարիտն ճն ելցեն իղձք և հրմայք .

Իբր ըզնաւորդ բուռն ընդ ալիս
Ցաղջ և իխուն երկիւղալիս
Ընդ յոյս և ահ ծրփեալ անքուն
Տենչայ տենչայ ցոլից այգուն .

Ըսպասեսցուք . — Կեանք ամարան է գիշեր ,
Իսկ ապագայք՝ այգն յաւիտեանց անընտուեր : —

ՏԱՂ ԱԴ.

ԱՐՈՒՍԵԱԿ



Որ իդէմս աղօտ
Երկնից յառաւօտ
Ձերդ բոց վառ իվառ
Յարծաթի բուրվառ
Շողաս կարմրորակ
Պայծառ Արուսեակ.

Ո զջինջ քո նըշոյլ
Զամպովք վարդահոյլ
Արկանես այգուն ,
Եւ մերթ իծովուն
Դեռազարթն յալիս
Իծուփ սողոսկիս

Իբր ըզձիւն մաքուր
Կարապին փետուր
Իկապոյտ լըճին ,
Կամ զերթ իմբթին
Ծընօտից հովիտ
Սահուն ինչ ժըպիտ .

Արուսեակ , վերջին
Ցակինթ գիշերին ,
Իբր իշողշողուն
Ականց անդ պարուն
Հանդիսին նըշխար
Վայրանկեալ գոհար :

Քո այնչափ զբաւարթ
Է ցոլ լուսազարդ՝
Զի և այգն ըզքեզ
Ում ընդառաջես՝
Ճակատուն իքող
Ցեռու շող առ շող :

Տունջեան մերձաւոր,
Քաղցր աւետաւոր,
Այն ինչ ես յերկին՝
Որ ինչ մեր հովտին
Քընքոյշ մանուշակ
Զեփիւռից գուշակ :

Քոյդ իփայլ յերկնուստ
Մութն առնու փախուստ,
Մըրրիկք բըռնասուն
Ամոքեալ ցածնուն,
Զերթ ցասմունք կարեաց
Իկուսին նայեաց :

Տես, ահա ծաղկունք՝
Կենդանի ակունք,
Աչօք ցօղախիտ
Քան ըզմարգարիտ
Ցողջոյն ամօթոած
Ծիծաղին կենաց:

Աւանիկ առուակ
Ցանդոյրն անդ ծըմակ
Ըզվիժական անոյժ
Գըլէ նոր յաշխոյժ,
Խոխոջ և փրփուր
Սըփռեալ հեշտալուր:

Տես, խաղաքթուն
Ծառոց՝ թեւք փայլուն
Զերդ իմով տերևք
Թօթափին թեթևք,
Իջանեն յարօտ,
Կամ ճախրեն ընդ օդ:

Տես ահա սպիտակ
Գառանց զումարտակ՝
Ընդ անամպ երկնաւ
Եւ զոյր գալարեաւ
Ձեան ինչ պաղպաջուն
Դէզք Թրին ծրփուն:

Աւանիկ դրընդիւն
Վանէ զլրռութիւն,
Վէժք, Թիռ, ոտք և վանգ
Ազգ ազգ տան անդ գանգ.
Զայնք՝ որ համօրէն
Զօր ծրնեալ ասեն:

Արուսեակ... այլ էր
Սրաթև դու խուսեր... —
Ո՜հ, այսպէս 'ւ իկրից
Անդ շրշուկ սրբտից
Խոյս տայ դողդոջուն
Քնդցր անմեղութիւն:

ՏԱՂԼԵ.

—

ԻՄԱՍ ԱԶԳԱՍԻՐԻ

Իցեն յաւերժ պէտք հարուածոց, Նախախնամող այ-
ցելութիւն,
Իցեն հրավառ Քոց շանթից իմեր կառափ շռինդն ի
ճայթիւն,
Զի զոր առ մեզ, Բարեգութ, վրսեմական հաներ
պարգեւ՝
Ցամփոփելդ ուսցուք զարժանն արդարեւ :

Ո՜հ, արտասուք հեղձամըղձուկ որ պըղպըջեալ աստէն յաչաց՝
Ոչ նորոգ թէ իսըրտից առին եռանդն յորդախաղաց,
Այլ որ նախուստ յերակաց քաղցրաշարժեալ գայր խնդութեան՝

Ինոյն արդ առուք թափին դառնութեան:

Իբրոնդ ամենապահ սըրտից մերոց կալեալ բաժակ՝
Զոր ըզնոքօք պարզեա երկին՝ ինոյն նոցուն գունի դիմակ.
Արեւալիր եւ զբարթ մերթ իկապոյտ շողեալ այեր,

Եւ մերթ թըխպայորդ փոթորկեալ գիշեր:

Քանզի որ մեզ առ իրէն մասնաւորեալ գայր ճառագայթ,
Տէր, զքեզ բում կերպարանս, զբուարթ սիրոյ առ հաւատչեայդ,
Արդ իմեր ըզնա յաչաց վերամբառնաս աջովդ ինքնին,

Ոչ զի խաւարեալ՝ այլ առնուլ յերկին:

Տէր, չիցեն դեռ եւս նրմին աչք իմքեզին կարօտագին,
Չիցեն այլ եւս ծաղկունք որ իշողէդ այդ փրքեզացին,
Հալեցան պաղեալ ծորանք, կամ գիշերի չիցէ մըռայլ՝

Զի զբրկեա զերկիր յանընբսեմդ իսիայլ:

Իղբրանց ծիրանեբիեան արեգական տբուեալ ըզ
ծայր
Ցոլորտ Հայասեռից ծաւալեցաւ զբուարթավայր.
Տիգբիս, Գանգէս եւ Հանդբին իլոյս նորա շողա-
ցին,

Եւգանեան բբլուբբ վերառաքեցին:

Որպիսի կբրկէս հորդեալ մեծատարած փառաց
հանդէպ . . .
Համօրէն նա լբրացոյց որ սահմանեալ մբրցանս ան-
վրէպ.
Հաս կալաւ ծագաց իծագ իլայնասփիւռ ոգւոցն
Թեւ,

Զառաքինութեանց ասպարէզ գիւրև:

Օրինակ աշխարհի ըսքանչելեաց զարմանալիր
Ընդ բախտին և ոգւոյ ձիրս եցոյց Թէ չիք միջոց խը-
տիր.
Զոր Թէ կալցի մահացու շաղկապ զոգին արկեալ
ընդդէմ՝

Ինիւթէն զինքեամբ փառս առցէ վըսեմ:

Զոր դարմանեաց ոչ կարիս յառատազուարճ ձե-
ռինն իբաշխ,
Ո՞ր ոչ դարձան արտասուք իգոհուԹիւն նորին յե-
բաշխ.
Բարբառն ըստաշխն էր Ծաբայ, որ յերկԹերԹի
խընկանոցաց

Ծաւալէր համայն բոյր տըրտմահալած:

Իսրրաին, ուբ ուզդուՔիւն արկեալ բոզբոջա էր Քա-
Քաւուչ՝
Ամէր նորա համայնասիիւռ որ զիրգ իծոց էր ընկալուչ,
Ցորում համայն աղերսարկու զտանէր և մի վասն իւր ծաղիկ՝

Իբունն համօրէն ցընծայր հայրենիք:

Զի յօտար աստեղաց Քէ ջովացեալ ուղէշս իշաղ՝
Այլ յեւզանեայց անգր իՄասիս տարածանէր ըստուեր չբնաղ,
Մինչ աղբիւր յեղեմական որ բարգաւաճ զեռայր դրրախտ

Հոգւոյն զհայրենին բերէր սիւք անախտ:

Մուսայից նը իրական, որոց սըրբեալ էր Իդաբիր,
Ըզկողերօք վարսազեղ հայրենական կախէր փանդիռ.
Որ Հոգւոյն իւր ըզնոխաւ իծաւալել սիրք ասաւիւն՝

Քաղցրալուր անդուստ սըփռէր շըշընջիւն :

Ա՛ռ նըմա և Վիրգիլ Պարթենոպէն իբր իյընդոյր՝
Սըխրացեալ յաւանդապահ և նախանձորդ ոգւոյն Վըրոյր,
Տարփողեաց յունկն աշխարհի զի Մեկենայ հանդիպէր նոր,

Եւ եհար Հայոց Դիւցազին շեփոր :

Իսկ ընդէր և Հայաստան, աւա՜ղ, դրօշիցն իզոյն փողփող,
Որ զիւրեան անդէն հընչեաց դիւցազնական աւա-
զաւոր . . . .
Ո՜հ, նովաւ, նովաւ քանի՞ ակընկալիք շիջան անլոյս,

Ֆանիճն Մասեաց փառք խաւարասոյզ . . . .

Մի ըզդոյն, մի բօթ ողբոց Ոգւոյն գուժէք դուք Հայկազանց,
Մի նորուն հասցեն իլուր լալահառաչ ձայնք հեծութեանց,
Մի մահագոյժըն պըղընձոյն զանգիւն Թընդմանց ողբանըւագ

Իլերինս Հայոց հնչեսցեն արագ :

Զի բարձաւ իմէնջ, աւաղ, փառաց ազգի յուսոյ
նըշխար.
Հրատ՝ ոյր բորբոք յԱյրարատայ ցոլայր կատար.
Զարդար մեծ կորոյս երկիր, հաւատք ըզջահ մի
վառ յաւէժ,

Դըպրութիւնք համայն ամրութեան պատնէշ:

Իմի ևեթ յայդ իկեանս բանի կենաց ամփոփեալ
ծրար,
Որ ընդ միակն համազոյգ արդ նըւազեն շիջելա-
փառ.
Կոծին արուեստ և հանճար առ սընարաւ անշունչ
վիմին . . .

Ո՞ զայրեաց սըրբէ զարտասուս դիմին:

Զի և առ ն այտուհետև կարկառիցին ձեռք անսը-
ւաղ,
Որբութիւն՝ ում հանդիպոյ կան փորձանաց աւուրք
դանդաղ,
Հայրենիք՝ որ ինքմա զտանէր սատար իւր և
պարծանս,

Եւ Մուսայք՝ զորոց վառէր խանդ և ջանս . . .

Զարդարոյն, ոհ, մեռցի մահ և այս հագագ դողդո-
ջուն,
Մի ևս այլ վազել իվիին, յոր արդ մահու զայ սո-
սաւիւն,
Որ իսոյն բերկրութեան հարեալ ըզմատն օր ծը-
նընդոց

Երդմնեցուցանէր զերկին սիրտ իրոց։

Սրբատառուչս անդ մաղթանաց նախկին թէ զբան
լընուս արդ, Տէր,
Իվեհազին հեղեալ ճակատ զանմահութեան լոյսդ
անբաստուեր,
Հիմ աւանդ, անտեսեր և ըզթըշուառ սրբտիս անդ
ձայն,

Մի տրխուր աչօք տեսանել մեզ զայն . . . ։

ՅԱՂ ԼԶ.

ԱՌ ՆԱԽԱՀԱՅՐՆ

Ով նորաստեղծ Դու ծառոյն բուն բազմաստեղն,
Որոյ Աստուած սերմն և ծաղիկ է անանց
Եւ առ Աստուած անդր արձակի ծայր յանեղն,
Խառնել իծոց յաւիտեանց.

Հայր, և ընդէր արձակեցաւ ոչ յեղեմ
Բերկրեալ ընձիւղ քո և սաղարթ նորաբոյս,
Զի յայն իցող և սիւք Թևոց երկրաճեմ
Բանայի զաչս առ իլոյս:

Ո՜հ, ես ծընունդ, և ձայնս է զանգ այն հովտին
Որ դրախտ երբեմն, արդ առասպար Մահուան մեզ.
Ցորոյ հրծծել զինև, սաղարթս ինչ քոյին,
Հայր, շրշընջեմ ողջոյն Քեզ:

Ողջոյն դարուց որ հեռազոյն են իՔէն
Քան Դու յարփեոյն և իՀոգւոց լուսերամ.
Բայց զայն Դու Քև լընուս տարածս համօրէն
Ծընիւք դիմիդ ժամ իժամ:

Ո՛չ, անցելոյն Դու չես միայն գաղափար.
Այլ ինքերկայս իսկ տաս զըստուերդ՝ ւ ապառնեաց.
Ամպամեմեալ հանգոյն Ալպեայց վեհ կատար
Պաշտպան երից աշխարհաց:

Նորաստեղծեալ անդ յաշխարհէն մինչ ընդ հին
Զըզեալ կապանքս միութեան Դու վքսեմ,
Ցերկրաւորէն ոյր արդ շաւիղք չերևին
Մինչ յերկնաւոր անդր յԵդեմ.

Զընդդիմատիպ ծայրից՝ ըզբաստ ապա զցաւ,
Դու միայն, Հայր, յերկրի առեր Դու զճաշակ,
Երանութեան՝ արդ որ իյոյս փոխեցաւ,
Խաղետից՝ մերս արդ Թոշակ:

Անմահութեան՝ որ արկ յունից քո նըշոյլ՝
Էին արդեօք մուտք զի շիջաւ յանկարծուստ.
Եւ ընդ ճակատդ ըստուերք անկան հոյլ իհոյլ
Մինչև իբիր մեր անդուստ:

Քան բերկրութեանցդ առաւելաւ ցաւոցդ հեծ.
Զայն զոր իդրախտն ետուր խընդից՝ մեռեալ են.
Այլ զոր յերկրի՝ ցաւոց՝ հընչեն մեծամեծ.
Ո՛հ, կայուն ցաւք լոկ տևեն:

Զուարթուն Ոգւոց՝ երկինք՝ որոց օթարան՝
Ընդ հողեղէնս յարկաւ ածեր Դու զպատկեր.
Իցիւ ըզլոյս Թէ լոկ նոցին ըզբնութեան
Եւ ոչ զոմանց ևս զբստուեր:

Սրբտիցս համայն բովանդակումն և տիպար,
Ահ, վայելիցդ և իլբման ոչ հանգեար.
Երկնաւորաց արձակեցեր աչս յաւար...
Ահեղ երկրայնոցդ էր ըսպառ:

Զանբիծ քո բիբս քան զերկին՝ մեղքն յոր մրտին՝
Մինչ նախ զբնութեամբ յեղեր՝ նա Քուէր իծիծաղ,
Զիարդ տրխուր՝ մինչ ըզսեմոք անդ դրախտին
Հայեցար յողբս և յաւաղ:

Բայց և անցեր ընդ սեամսն, առ ցաւս իհեշտից.
Ցարտօսր, այո՛, բայց մահու ոչ ահապետ.
Զի մեծ ոգիդ էր քան ըզբաղդդ աղետից,
Իյոյս լըցեր զանջըրպետ:

Զերկիր կոխեալ զառաջին՝ ոտք քո կառեաւ.
Եւ դողդոջուն փարեալ ըզՔև Մայր Եւայ,
ԶՔեզ լոկ տեսէք յաշխարհ ցաւոց դիմագրաւ,
ԶՔեզ լոկ խըղճիւ մերձակայ:

Ո՛վ բազմադէմըդ մեզ Հայր, Հայրդ և վըշտից,
Զոր մարդկութիւն դեռ ոչ ուսաւ. և հարթչիմք,
Արբեր զբաժակ զայն դառնագոյն Քեզ բիւրից
Որչափ զի քաղցր էր նախ քիմք:

Բարէ, փոխան Դրախտին՝ իՔէն խուսելոյ՝
Քեզ անապատ ուր մնայր քաղել փուշ ընդ վարդ.
Հայէիր ուր հրաման առեր Դու լընլոյ,
Եւ ծնանէիր ուր Դու զՄարդ՝

Թըշուառացեալ, ահ, զաւակաց, Թըշուառ Հայր,
Զանմահութիւն ոյց հայթհայթել իղձ եղեր,
Իցիւ, իՔէն դոյզն յիշատակ մեզ մընայր.
Ա՜հ, ոչ տապան մի Թողեր:

ՏԱՂ ԼԷ.

ԱՌ ԿԱՆԹԵՂՆ

Ո՛վ որ Թըրթռուն սլացիւք իվեր գիմեցիկ
Վըճիտ իփայլ՝ հեղուս զոգուվս իսկ վըճիտ
Ըզքո պատկեր ախորժ ընդ բիբ Թափանցիկ.
Ողջոյն յ՝իքէն ցոլեալ յաչաց իմ ժըմիտ
Լոյս ականակիտ :

— Ո՞ւմ պաշտեցից զիմ գիշերի տենչ ըղձից՝
Թէ ոչ առ քեզ, լուսոյդ քո նախ այցելու,
Որ մինչ համայնք զինև ի խոր կան աղջից՝
Դու առաջնորդ մատչիս առ իս ձեռ ընտու
Ի ինամ սիրարկու :

Բնաւ զի և քեզ հային աչք՝ քո է այն ձիր,
Քո՝ և զգացմունք՝ ծընեալ իսեադ յիմ սըրտի.
Առ իս Թէ ոչ էր քո հրպել լուսալիր՝
Բիբքս իմըԹան արդ ծըփէին գիշերի
Ցիմոցս ամայի:

Արփւոյն մեծի հատուած առ մեզ բարեկամ,
Ցորմէ խաւար դողայ ճեպով փախըստեան.
Դու 'նդ աղջամուղջ սեաւ և ընդ ցոլս ոսկեծամ,
Այգուն յոդուած զարմանասքանչ խառնուԹեան,
Քեզ չիք մըտից ժամ:

Արփին, ասեն, խուսափէ մերս յեզերաց,
Եւ ըզցաւոց Թողու անտես յարկ խոնարհ.
Դու՝ ուխտ յուսոյ պաշտիս զորմովք կապանաց.
Քանիք իլոյսդ յերկնից ելին ճանապարհ.
Ծնգեալք յայս աշխարհ:

— Պարկեշտ իլոյս մեզ որպիսի տաս զարմանա.
Եւ արևուն փոխանորդեալ փայլից քոց՝
Անփառունակ ըզբիւր պաշտես մեզ օնանա,
Սրբբեալ զոսկի, զկաւ անխարտիր քոյդ իբոց.
Քեզ Դաբիր, բազմոց:

Դու զսիրելեաց պընդես զոգին անբաժան,
Ընկերութիւն արծարծի քև իզումար,
Քև երկք մրտաց բարգաւաճեն շայելան.
Քանի սուզեալ կային հանճարք իխաւար՝
Թէ քո չէր սատար:

Ցոր ինչ նշոյլդ ժամանէ քո անպարծ՝
Նոր իմն խիայլ պընճնազարդի, ոլ կանթեղ.
Աղօթք իբոց անդ քո ծրխին վերամբարձ,
Միտք ամփոփեալ դիտեն լուսոլդ՝ զերկնահեղ
Ճրշմարտութեանց զեղ:

Ո՛հ, ես սիրեմ, սիրեմ պըշնուլ իքո լոյս,
Ձերթ զանձկալուոյն ականողիս՝ հեշտալիր,
Որ մտերիմդ ես ինձ բընաւ և խրախոյս,
Դու որ զինև կացեալ հըսկես անձանձիր
Բիւրուց Թելադիր:

Որ զքեզ եգիտ սիրտ՝ ոչ է զիրկ խափոփմանց,
Միայնութեամբն իսկ ունելով իւր ընկեր.
Իբրեւ զի քաղցր ես բնաւ կըրից ըզգացմանց...
Եւ սըխրանամ՝ յիշեալ զի յիմ լոկ իսէր
Ծախիս դու նըւէր:

Բայց զոր և իմ մըտերմութիւն քեզ ժըխտեալ.
Ո՛հ դու զաղտնեաց սըրտի տեսող զոս վըկայ,
Մինչ հեծութիւնք սուր քան ըզբոցդ արձակեալ,
Գամ սիրտ ծմփոփ և անմըռունչ առ քեւ կայ
Քան զմուԹ պարագայ:

Վաղեա, Կանթեղդ իմ, ահ, սլացիր բոցաթռիչ,
Խորհրդաւոր քերեալ զսրտիս վշտազգաց.
Եւ յարտասուացս ըզքո նշոյլ հեղ իլիճ,
Զի զդառնութիւն պարուրեցից ես իբաց.
Ո՛վ իմ Լոյս աչաց:

ՏԱՂ ԼԸ.

ԱՌ ԱՋԱՏՍ ՀԱՅՈՑ



Ցո՛ այգոյն աւետաւոր գընան նըշոյլք ոսկեկարմիր.
Ո՞յք յարփենին իշնորհաց նախ ողջունին նըսեմ յեր-
կիր. —
Երկնաճեմ զագաթունք ազատապանծ վեհից լերանց
Ոյց պաղպաջեն դարևանդք յանդուլ փըրփուրըս յա-
ւիտեանց.

Առ նոսա յաչեացն իծոցոյ արև
Ակնարկեալ իժմիտ ուղղի լուսաթև:

Վասն որոյ և առ իՓեզ ցանգ Թևածեալ աջոյ Էին՝
Նախախնամ Դու զԸրգիս, ով մեծափառ ձեՏ, փառոք հին,
Որ ինուաստ խոնարհութեան Հասարակաց բաղդին Հայկայ
Ուղղաբերձ ամբառնաս պատրսպարան անուան նորայ,

Յաղտաղտին ալեաց զերդ լեառն երկնածայր
Յոյր նըւիրականն հուր վառի իսայր:

ԸզՓև երկնից առ իշնորհս լոկ խոնարհի ակնարկութիւն,
Եւ առ մէն մի հայեցուած իւր ըզՓև նոր արկաւ շողիւն.
Հայաստան Փեզ վերակնէ, և շիջանուտն արծարծի յոյս,
Եւ Աստուածեանն այն Փև բոց ցոլայ պըղտոր յաչացն իլոյս.

Մինչ ընդ ամրակուռ Փոյին հովանեաւ
Ազգ մի հալածեալ դադարս ընկալաւ:

Եթէ Քոյդ ոչ ըսպառին, Քեզ սպառիցին յերկնից պարգևք,
Այն ինչ ըզՔև արժանիք քան զարնանի խըռնին տերևք.
Աւանիկ սա բնաստ մեծ, նորոգ յերկնուստ եհաս պըսակ.
Իսկ իցէ քեզ բաւական իդոյն ճակատ տալ համարձակ. —

Եւ զարմացան փառք զի ոչ մի լոկ դէպ՝
Այլ ճակատս երբեակ նըշմարէր հանդէպ:

«Դուք, ասէր, ով Վեհազունք, որ ըզփառաց զըտէք զաղտնիս՝
«Ցերեսաց իմ սրանալ բեռամբք ծանու 'յուս զարժանիս,
«Կացէք օն, զի փառք իսկ են յաղթել փառաց յերբագ թևոց՝
»Որ յերկնից շարժին իսիւք զերկնաւորաց պընդեալ հետոց.

«ԻՁեզ յաւելցի նոր ինձ յաղթանակ
«Մինչ յանփառունակս հեծէ ժամանակ»:

Լբաարուք, ԱՂԱՏՔ ՀԱՅՈՑ, զողջոյն խընդից՝ զոյր բնաւ երբէք
Ըզխոնարհն անշըքութիւն իբարձրութեան Ձեր ոչ չափէք.
Ողջոյնք ինսեմացեալ Ձեզ իծմակաց զան հայրենեաց...
Օ՜ն, աղէ, մինչ վրսեմ ելս յաստիճանի զորձէք փառաց,

Եւ ըզհայրենեանն՝ յարուսջիք պահանջ,
Տբեալ նըմա զՁեր խարիսխ աննահանջ:

Զի հանդէսք մեծապայծառ և վեհ Անուանքդ յիշատակաց
Արձագանգս ընդոստուցին իկըրկնադէմ ծոցոյ Մասեաց.
Զարթեան Դիւցազունք զորոց իՁեզ պըճնէք անուանս,
Եւ իմահուն անյարիր Ձեօք խընդացին ճեմել իկեանս.

Եւ տանս Հայկազանց սիրոտ ի թինդ վազեաց,
Ըզփառս և զԱնուն իհմայս զարմանաց:

Աղէ, Փաչք, մինչ յաւիտեանս առ մեզ պարզի, և գնամք յառաջ,
Ձեր ահեակ ոտն ինքերկայս, և զապառնիս կոխէ ձեր աջ,
Որպէս զի ոչ թէ զՁեզ լոկ առաջիկայք իկէտ ունին,
Այլ ինքնին և հանդերձեալք Ձեզ մօտ իմօտ առ-ընթացին.

Մինչ Դուք զերկու դարս խառնելով անբաժ՝
Երկաքանչիւրոց կանգնեալ կայք իրաշ։

ՏԱՂԼՓ.

ՅԱՐՓԻՆ



Եվ, Արփի, եվ մեծազօր իշխող տըբընջեան,
Արի փառացդ իհանդիսարան.
Ե՛վ, ըսքանչելի, զի տիեզերց զոր վարես
Կեանք և խինդ դու ես:

Իբր ըզծաղիկն այն պայծառ վակժոյժ իքոյդ դարձեալ կոյս,
Արփի, և ես կաթոգին ըսպաս իքոյդ առնեմ լոյս:
Է չըգիտեմ իսըրտի թել եթէ բոց իմն անտես
Որ թինդ առեալ և յայթիռ կամ սըխրանայ քոյդ իտես.
Որ իկարմիր նըշուլիցդ իփայլ ոգիք իւր վառին
Եւ անձկալից վաղորդայն կանխէ իցոլ քո նախկին
Այն ինչ յըստուերաց յառնես կըղզեկին:

Ի լուսազարդ քո ճակատ, ոյր ցոլքն են մէն ձիրք ուրոյն,
Դէտակն իվեր յառեալ պիշ՝ անմահութեան տամ ողջոյն,
Եւ խոնարհեալ ակնածու աչացս իմ բիբք ապիկար
Ոչ հանդուրժեն քեզ հանդէպ որոց ընդելն է խաւար.
Իսկ դու՝ հաճիա, ով արփի, համայն փառօքդ հիասքանչ
Որդւոյ միոյ խաւարի հանդիսանալ իպահանջ
Պըսակի փառաց քոց եռաճառանչ:

Եվ, արփի, եվ գերագահ իշխող տըբընջեան
Եվ խիստաց քոց հանդիսարան.
Եվ, ըսքանչելի, զի մահացուն մընայ քեզ,
Կեանք և խինդ դու ես:

Այլ քոյ յանհաս դիտակէն ուր ըզգընաս լուսաճեմ
Ցորժամ կենաց քո բըբօք մահուն խատուերս հայիս դէմ,
Զինչ բարձրութիւնքս երևին զոր մեր չափեն գիրկք անձուկ,
Ներշմարիցես դու զնոսին յորս յոխորտամբ՝ Ի՛ն ելցուք.
Զեւք գահոյից, խըշտեկին, հիւղ և գոռոզ ապարանք
Զանազանին և անդուստ. կամ ինոսա որ խըտրանք.
Զինչ մանկութիւն՝ զինչ ծերութեան կորանք:

Ոսկւոյն նըշոյլք զոշոտեն, երկաթ իյոյզ թըւի մութ.
Իցեն՝ ւ առ լոյս քո յօնիւքդ յարգանս էիցն եկամուտ.
Ճանանչիցէ առաւել ճակատ պըճնեալ ոսկեկուռ.
Զի վայրապար կայ երկաթ զոր մի և նոյն մաշէ հուր,
Զի նա զուլամբք գայ մանեակ, և սա զոտիւք իգալար,
Բեկորք քարանց պատուիցին յեռեալք իթագ և կամար...
Զի մինչ դու մեկնիս՝ համայնն է խաւար,

Գընաս, և ոչ իսկ ումեք թէ և իբիւր զոյ պատիւ
Ակնառութիւն է առ քև. հասարակաց է քո տիւ.
Եւ յոսկեզօծ քիւս ամուր և ընդ լըքեալն յարկ իսպառ
Ոչ առաւել կամ նըւազ լուսոյդ գայ շող բոցավառ.
Բայց զի՝ որչափ պերճ քաղաքք և խիտ առ խիտ հոծին վանք՝
Տեսի հազիւ թէ իշեղ զքո առնուն լոյս պատուհանք,
Մինչ յելիցդ իմուտս խայտան հովուավանք:

Եվ, արփի, եվ տրուբնչեան տէր միահեծան,
Արի փառացդ իհանդիսարան.
Եվ, ըսքանչելի. զի տիեզերց զոր վարես
Կեանս և խինդ յորդես:

Տես զի զբաարթ ըզգայցէ բնութիւն ըզքո մերձենալ.
Զիարդ խուղ ինձ ժամուց անձուկ տեսլեանդ է դարձեալ.
Ամպք կարմրանան իբր ըզկոյս այտք հուպ ընդ հուպ շիկնելով,
Եւ ըզտրխուր մթութեամբքն ըզծիրանի սրփուէ ծով.
Մարգարտազարդ իպըչրանս զքեզ ողջունէ վարդ, շուշան,
Ոսկակն էառ դայլայլիկ, սաղարթք շրշեն պատասխան.
Բնութիւն անշրշունչ լուծաւ իբիւր բան:

Իդոյն կայտիուս և մարդոյն խառնի շըշուկ, ով
արփի.
Շըշուկ զոր տայ սիրտ իտրոփ, հեշտանք ևխինդ
յուսալի.
Ակօսք իճռինչ բեկանին, ապատք յոտից ելին
Թինդ,
Կառաց շաչիւն հեծելոց, սալք Թոպին յուռն իշը-
ռինդ.
Սրինգ իհեշտ սոյլ շըշընչէ, շեփոր իմարտ հրաւի-
րակ...
Զի ոչ մի ձայն է մարդոյ, այլ որչափ գործ եւ
վաստակ,
Եւ քեզ կարօտի ինոսին համակ:

Իսկ զինչ խըտիր է մարդոյ, մինչ և նա զոյգ ընդ
բնուԹեան
Որ ըզմանուկ ըսպասեն իգործ ծնողին իհրաման,
Կամ զերդ նաւ կախ յառագաստ հողմոյ ելից գո-
զալիր,

Որպէս զի քեզ նախ է գալ զի վառեսցին իգբրգիւռ
Բնութիւնն յիւր գոյս բազմադէմ գործել, և մարդ յիւր ինքեան
Նախանձընդդէմ յասպարէզ՝ բիւր տալ արդիւնս բբրտնաջան,
Որ զի մարտադիր դու կաս յանդիման:

Աղէ, աչօք բոյին սուր, յորմէ եմակք չեն անբոյթ,
Եւ զգիշերին պարուրեալ զուգաւասար սեաւ ծածկոյթ
Ընտրես որ սուրբ է վրտակ և որ լիճ մառն և պրզտոր,
Իցէ թէ գործք մահացուին թանգուզեսցին կեղծաւոր.
Որ մի կրշիւռ տասդ ըզլոյս ճեւ յապիրատն ճեւ յարդար՝
Ինոյն ախորժ դիտիցես ըզգնաց անխէթ և զվատթար,
Զմեղմեխանս, ըզբիրտն, համբոյր և զպայքար:

Քանի եղեն արդեօք տիւք յոր քեզ ծագել քո ցաւ-
եաց
Մինչ ընդ երեկս տալ զբրոյց գնայիր առ Տէր մա-
հացուաց.
Բաբէ, իցէ և մի օր, ժամ մի յամբաւդ իշըրջան
Ցոր ոչ յեղեռն ինչ տըխուր պըղծի քո հուր սըր-
բազան.
Եւ իսերկեանս իսկ արդեօք ծագես դիմօք քոյ ազանց
Զի մի երկաթն յասպարէզ քև շողասցի մարդախանձ,
Մինչ արեան գնայ գետ ընդ Թումբ դիականց:

Էր. էր երբեմն, ով Արփի, — ընդ մեզ յիշես զայն
տըխուր —
Զի ցընծալից ևս յերկիր գայիր ըզգնացս տալ զա-
ւուր.
Մինչ այնչափ բաղցր էր կայեան, զի համասփիւռ
կոչէր դրախտ.
Առուացն իտիպ սըրբափայլ կեանք հոսէին անդ ա-
նախտ.
Երանութիւն՝ որ աստի սկսաւ իհողմն հանդարտիկ,

Բողբոջ իքոյդ ետ իլոյս, այլ խամրեցաւ զերդ ծաղիկ
Իբնիկ իւր հողոյն իրաց ընկեցիկ:

Սակայն իմիառաղ անկապուտ, Արփի, խընդա դու
յաւէժ.
Զի որ ցոլայ մեր յարտօսր՝ այն քո նըշոյլ է խարտէշ,
Որ զառաջին ետ ճաճանչ զօգոստափառ քո դիմաք.
Թէ և գեղոյն զամեն օր հանդէսք Թըւին մեզ նորոգ.
Ոչ առաջինն Եփրատէս կամ հինաւուրց ծեր Մասիս
Շող ցոլացին առաւել ձեանցն իպաղպաջ, ջինջ յա-
լիս,
Թոր ոչ անդրադարձ փայլեն և զարդիս:

Լերինք ժայռիւքն երկնաբերձ յորըս բազմին դարք
իձիւն,
ՀաստատուԹեան զոր խարիսխ և տիպ կարծէ մա-
հացուն,
Ժամանակին դիզադէզ բեռամբ ընկճեալ խարխա-
լին,
Հոլմն արդ վազէ ընդ միջոց անդ զոր նոքայն ու-
նէին.

Ի մռունչ դիտէ Ովկէան զալիս հընձոց վէտ իվէտ,
Ուր մերթ կոհակք իւր կապոյտ շառաչէին մէտ իմէտ,
Եւ աստեղք յերկինս շիջան լուսաւէտ . . .

Իսկ յանմատոյց դու բարձունս ծիրանեփառդ իգահոյս
Այլայլութեան գեր կայից՝ իմբշտավառ իշխես լոյս.
Թէ ինչաւար մերձեցար՝ ինեմ ոտին քո վառի.
Ըզծոց երկրի և զբարանց և զջուրս գործես դու բերրի.
Առ երկնաշարժ զօրութեամբ քո զինչ է բնաւ ժամանակ,
Ժամանակ . . . փառք քեզ, Արփի, քո նա անզօր է սպասեակ,
Զոյր չափեալ դու զքայլս վարես սուրհանդակ:

Ել, Արփի, ել դարուց ամենազօր տէր
Ի փառադ անբստուեր,
Ել, ըսքանչելի, զի տիեզերց համայն դու
Կեանք ես լուսատու:

Արի փայլեաց, Արիենիդ, և զաւերովք անդ մարդոյն
Զվրսեմութիւն քո արկեալ տուր իհանդէս ըզքոմոյն.
Ո՞ւր են արդ խրոխտ զազաթունք, զբմբէթ և պերճ ամբարտակ,
Զորովք քո ցոլք խաղային այգուն յոսկին իճակատ.
Ո՞ւր այն քաղաքք լայնասփիւռք որոց անձուկ եկին դաշտք.
Լեռնակարկառս իքարանց կուտակադիր ուր են վաշտք.
Ո՞ւր ոյց կեանս յամայր խոստանային յաշտք:

Այլ պանծացիր, դու Արիի, և ըզդերբկօքն յամային՝
Տես անդ դալար և ծաղկունս որ քոյդ իճեմ փայփային,
Որդիք բնութեան՝ զոր մահու փոխան որդւոց՝ ւ իտեղի
Ցանեալ սրփուէ բրռնալիր որ ոչըն մեօք կարօտի.
Արկ ընդ փոշին ազազուն ըզնառազայթ քո ջերին
Դ որով դընին ոյք երբեմն անդ զերեսօք սիգային,
Ցեղեղուկք, աւանդ, քան զոր կոխեցին:

Էին երբեմըն նոքա . և արդ նոքա ոչ ևս են .
Անցին նոքա առաջին , անցցուք և մեք համօրէն...
Ընդ մեր անցցեն այլք անթիւն , զերդ առ ափամբք նոր ալիք .
Եւ մեք՝ այլուր խընդրիցեմք ժամանակի չափս եւ տիք ,
Իբրու անշարժ առեալ կայս յայլոց յառել շիջեալ լոյս.
Եւ զարմանամք զի ամբ սուղ զմեօք երազեն յանցեալ կոյս՝
Ընստեալքս իսահուն մակոյկ կենցաղոյս :

Իսկ դու, ով Մեծ , ում երկինք ըզհարկ գիտեն արժանիս ,
Եւ զքեւ յածին զիլ իզլոր դարուց իմռայլ հովանիս,
Որ զի յալիս անդ ծըփմանց ժամանակին կաս յոխորտ
Իբրև ըզժայռ լուսարձակ՝ մոլորելոց առաջնորդ,
Որք քեզ ուղղեն զիւրեանց ղեկ , թէ և ամբաւ տարակայ.
Բաբէ , երկիր այնքան վէս՝ զի զքեզ կարծեաց պարագայ ,
Եւ սուղ իւր զաւուրց գիլլս նա քեզ տայ :

Վ.ըսեմդ ընդ դարս որ այսքան արգահատեր մահա-
ցուին
Գեր բան ըզբնաւ նախատինս դու և զպատիւ իսկ
նոցին,
Եւ յայսմհետէ ևս, Արփի, լուր մինչ կարդայ ըզ
քեզ յոյս,
Մինչ յըստուերաց անդ Թափի նախաբորբոքդ իքո
լոյս,
Ցորժամ իկորդ ապալեր քո հաւատովք տայ սեր-
մանս,
Մինչ յերկարել խնդրէ զքոց ճրագին զոր նա կոչէ
կեանս,
Զի յոր գնայ զուղղոյն կասկածէ սահմանս.

Այո՛, զուղղոյն, զի կարես պարզել ըզմութն ըզմեօք
շուրջ,
Զի մի՝ ոք զայթ իզայթի գնայ կեղակարծն ընդ կա-
մուրջ.
Հալեալ ըզձիւն, վեհ Արփի, փրթեալ շուշանս եւ
ըզվարդ,

Եւ տուր ծառոց գետեզեր հովանիս խիտ իսաղարթ.
Զի իծաղիկն՝ առօրեայ տեսցէ և զինքն իւ ըղձիւք,
Ի՝ խտուեր ծառոյն՝ Թէ և հեշտքն ասա ունին մուտ
և ըզսուգ,
Եւ քան ըզտերեւ Թօթափին անշուք։—

ՏԱՂ Խ.

ԹԱԽՄՈՒԹԻՒՆ



Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ միխիթարութիւն քո ուրախ առնէր զանձն իմ. ՍԱՂՄ.

Կարդալ՝ առ քեզ, Տէր, գետնամած հաւատով,
Զքեզ զօրաւիգն ինձ աղերսել լի յուսով,
Վըշտաց սըրտիս ուսուցանեն անձկութիւնք,
Եւ շնորհաբեր քո խոստմունք:

Ցաւոց իցաւս իբր ըզտերև աշնանի,
Թըռչնիկ հողմոց իդուոյթ՝ իմ սիրտ տատանի.
Է՞ր աղետից յիս թափին ցոլք ոգեապառ,
Եւ ոչ քո ցողք մըխիթար:

Բայց էին, Տէր, դիւրիչ սիրտանք քո էին
Ողորմութեամբ յոյժ բան զաշխարհս ես դու հին.
Եւ ձեռք ըզդառն որ զայս ինձ տան արդ բաժակ՝
Երբեմն ետուն զանուշակ:

Քանի՛ ճըմլեն խորհուրդք ըզսիրտ իմ՝ անգութ.
Անցեալն՝ այնպէս լոյս, և ներկայն՝ այսքան մութ.
Բայց հանդարտեմ, տեսեալ զի յաջ և յահեակ
Դու մինդ ես, Տէր, մատռըւակ:

Զի ոչ թէ մի լոկ դու շնորհաց ես Աստուած,
Զերդ Հեթանոս կարծէ. չիք ձրիցդ ըսպառուած.
Եւ թէ աւուրս լիս արտասուօք տաս առ դուրս՝
Դիտես զերկնի նոր աւուրս:

Վասն այն շնորհս մատուցանեմ քեզ, ով Տէր,
Թերևս բազուկ դողդոջ իցաւ կարեւէր
Քաջ ևս ըզքեզ աղերսիցէ. մինչ սըրտին
Իկշիռ՝ և ցաւք յաւելցին:

Բայց կալ դու զայն սիրտ նըւաղեալ ցեզր անկման.
Եւ բամբասեն թէ զն՝ արտասուք լըքութեան,
Հայեաց դեռ զոր հայցէր դա չափ դիւրազգաց,
Ի՝ որչափ նըրանչ տայ ալեաց,

Զայդ Թէ չգիտէ մահկանացուն՝ Դու գիտես.
Զի որ ըզսիրտ և զվիշտ ետուր Դու նոյն ես.
Զի այն անձուկ, և սա դարիւ զայ զեղուն . . .
Կամ զջուր փոխեա, կամ ըզգինուն :

Յաշխարհի չիք պատասխանի սըրտիս ձայն.
Լի են սիրտք, չիք ինձ ինոսա խորշ ունայն,
Յոր զանձկութեանցս հեղեալ լալեօք իմ ըզվանգս՝
Սփոփիչ լըւայց արձագանգս :

Զոր ոչ նոքա՝ զոգւոյս լըսես շըշունջ, Տէր,
Եւ յոր իսկ ոչ ժըտիմս իբան բերել դեռ,
Զանձիր զերկար, զբեկումն, լաւաց իղձ զաւուրց
Եւ զոլ յալեացս անձնապուրծ :

Մինչ իմ զողայ կուր ինողմոց՝ ւ ինըսեմ,
Զի զձայն ցաւոցս, իսկ ըզխրախոյսդ՝ ոչ լըսեմ.
Խաւար է ինձ, չիցէ Քեզ, Ակն լուսոյ,
Ինձ ճառագայթ մի յուսոյ :

Արփւոյդ Թէ ոչ մըթարք աչաց հանդարտին՝
Ո՜հ, զէթ զափամբ ցոլացո շող մի դեղին,
Որ պարուրեալ զաստեաց տըխուր ասպարէզ,
Լոյս յայտնիցէ ինձ ըզՔեզ :

ԻրՔո յայտնել ցաւք ամոքին զոր կըրեմ,
Ամայք և ծով վշտաց խուսեն յետս ընդդէմ.
Կըրկին անդունդք յորոց ոգին անցաւոր
Ընկճի անյոյս կորակոր:

Ո՜հ, գրՔասցիս ԵՔէ սըրտնուս, Տէր իմ Տէր,
Թէ զոչիցեն միտք Քեզ միայն, ԳրՔասէր.
Միտք՝ որ զամայսդ որ առ իրՔէն բաժանեն՝
Իզուեն անկեալ անցանեն:

Ներեա՛. — զուՔ փառս տայ Քեզ, և զմեզ՝ յայտնէ
խունս.
Մահացու մեք, դուն ինչ վիշտ շատ իմահունս.
Իկրել ետուր ըզսիրտ. նա խոյս տըւեալ յահ,
Հանգիստ ըղձայ մահ:

Այսպէս է սիրտ. — որ մինչ ընկճեալ արդ դողայ,
Մինչ զոդ համայն ծանր է նըմին աստ շըղՔայ:
Սիրով ճակատ զիւր ամբառնայ Քեզ իվեր,
Կացեալ մահուն անդ յեզեր:

Մինչ իհամայն ըզՔախծուՔեան դիտեմ մառն,
Աշխարհ ասէ աղու, և ես զոչեմ դմառն.
Մինչ սէր՝ վըշտաց տիսիանք անոյշ և տրիտուր՝
Ինձ արտասուաց է աղբիւր . . .

Ո՞չ ներիցես զի դողդոջուն այս սիրտ, Տէր,
Այս՝ ում զիտես հողմն և Թեթև տայ աւեր,
Այս՝ որումդու եւեթ մընաս լոյս և յոյս . . .
Իյաւիտեանց զոչէ կոյս :



ՏԱՂԽԱ.

Ո՛Վ ՑԱՒՔ, Ո՛Վ ՑԱՒՔ

Ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։ ՍԱՂՄ.

Առաջին դուք և յետին իկիրս մարդոյ,
Դուք որ չրզայք բնաւ անընկեր մէն ըստ միոյ,
Զձեզ որ ընդ շիթս և ըստ շրթից ծրծեմք իմարց,
Որ չարձակէք երբէք ըզսիրտս ազատ իդարձ,
Այլ իբրև որդն յուղեղ տընկոց բունեալ վատշուէր
Նոր ինորոյ փորէք իխոր վիրաց ըզվէր,
Բուծիք յարիւն նորուն, ճարակ ձեր են շարաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք։

Բրռնաւորաց ամենայնի բրռնազոյն դուք,
Որ և զնոսա իձէնջ ազատքս ոչ Թողուք.
Ոչ մորճ իձէնջ և ճիղմ հասակ, ոչ ալեւոյթ,
Մօր ոչ ըստինք, սիրուհւոյն ծոց ասպար անքոյթ.
Սիրտ յամենայն ձեզ ընդունակ գըտանի խորշ,
Եւ յամեն այտս՝ վարդ և շուշան՝ խամրել իգորշ.
Եւ ցողք աչաց ձեօք յորդորին և ապաշաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Ցոյց սասանիմք՝ այդ ձեզ ախորժ են տեսարանք,
Ծովք ալէկոծք, շանթք և մրրրիկք սեաւ գերեզմանք.
Հրդեհք, աղէտք անբաւ, ախտք, սուր, հեղեղք արեանց,
Սասանութիւնք տանց և սրրտից, ընկերութեանց,
Անդ ձեզ յարձակ ասպարիզիդ խաղայք նագէք,
Ժըպիտք իդէմս, ժըմտել միայն թէ գիտիցէք,
Ուր զոր շընչէքդ և շըշընջէք՝ լալիւն բընաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Իկուինչ կոծոյ իբր իմրաւէր փողոյ մարտիկ
Զարթնուք Ցաւիք գունդ արարեալ դուք իմարդիկ.
Հոր հառաչանք, մայրենի ճիչ ծընեալաւէր,
Հարսին մատաղ ողբք, և որդւոց ջայլք կարեւէր
Ձեր ներդաշնակք ախորժականք են բիւրախառն,
Եւ յարտասուս ազգ ազգ բբբաց, բայց ցանց իդառն,
Ցաւիուցանէք ըզտապ, յեղեռնն դիմազրաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Վայելեսջիք: — Ո՞ր խոչ, երկիւղ կամ տարակոյս
Անագորոյն՝ սպառեն կանուխ ըզձեր հաճոյս.
Ցորչափ և ուր սիրտք՝ համադամք կան ձեզ պատ-
բաստ,
Եւ բաժակիդ յորդեն աղբերք յամէն երաստ.
Ցոր դուք հրպիք սարսափ և հոյն դրոշմի համայն,
Ըզկիրս տիրող շիջուցանէք և զնոցին ձայն.
Դէմք իդալուկն, ճակատ կնճռեալ, անդամք են
սեաւք...
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Ահ ձեր պատէ զերկիր համայն սոսկմամբ իգոյժ,
Ճակատագրեալք իմահ ըզձեր չառնուցումք տոյժ.
Որ յահաւոր յայդ բան՝ բընաւք պարունակիք.
Կարապետել զնորին զալուստ զաշխարհ լըցիք.
Միրտք հողմավար դոյզն եղեգունք իգնացս ուղխից՝
Ցայդքան հեղեղս հանդուրժեսցէ, Երբ, եւ բանից.
Կոխէք՝ սուզէք իվիհոդ իգլոր՝ յորձանս զերդ նաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք, երկրաւորաց տարերք նիւթոց,
Որ զխանձարուրս և զդազաղաց հիւսէք օթոց.
Որ զարքունին և զհովուական շարժէք մական,
Եւ զթինդ սըրտից փոխէք իսառըն մահական.
Զբազումն առնէք դուք ցիր, զերկուս՝ անոք և մէն,
Եւ իմահուն վառէք իջահս ըզզուարթ Հիմն.
Իհեշտս, իյոյս մեր այս ձեր շնորհք և պայմանք են.
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Ցաւք իմարմնոց, որով զօդիմքս ընդ աշխարհի,
Ցաւք յանյաջող ելից, ըակիզբն էր մինչ բարի.
Ցաւք ինքժդեհ օտարութեան, ցաւք՝ հայրենեաց,
Ցաւք իվատթար, ցաւք իգործոց բըխեալ լաւաց,
Ցաւք իբախտէն, ցաւք իզբրկման, ցաւք իտեսոյ,
Ցաւք մինչ դաժան շարժին նայեացք փոխան զբթոյ,
Եւ ցաւք, Երկինք, դառնագոյն, ցաւք իսիրելեաց...
Ո՜հ ցաւք . . . վա՜հ սիրտք սիրազգեաց :

ՅԱՂ ԽԲ.

ԱՌ ԱՍՑԵՂՍ

Ոսկեծիր լոյս ընդ ոլորտս երկնից իսփիւռ
Հեզ իսիւզ զարփւոյն ծագումն աւետէ .
Եւ իձերբդ բազմարփեաց յերեւել հիւր՝
Աստեղք, երկին իթինդ ոտին ձեր կանխէ
Իվարդ և զեփիւռ :

Իծուխ՝ արփւոյն ուր նախ նըշոյլք ճեմէին՝
Ըզնախ ձեր ցոլս զըլէք վրճիտ ընդ բիւրեղ.
Հաստատութիւն կըրկնի , և յամպս որ լիւղին
Ձձեօք և զպատկերբքըդ ծածանեալ տիւն իշեղ
Ծահի ընդ երկին :

Բիւրուցըդ՝ բիւր աչք յարձակին առ իյոյզ,
Որ մըտերիմքդ էք մեզ, Թէպէտ վեհ ի կայս
Եւ իբրու դոյզն ինչ էր երկնից տալ ըզլոյս՝
ՓուԹայք յաւէտ յարփւոյն լըքեալ յառերկրայս
Կըրկին ըսփոփանս:

ՁերԹ յերեւոյԹ որ ստէպ շողալ է սովոր,
Թէ և օճանք ձեր հաստատուն և անվրէպ,
Այլ ցանգ իձեզ գոյ իմն հոսել նորանոր
Որոց յանձուկ ձեզ ըսպասեն՝ երաշխէպ
Սիրտ, օդ, լինք իխոր:

Ըզվեհավայրն ուստի դիմէք սահմանաց
Մեզ զանծանօԹ առբերէք տիպ լուսածին.
ԽաղաղուԹիւն, և ըսփոփանս հեշտազգաց,
Ո՛վ գերարփիք, որ Թէ բընակ մեզ զոյին՝
Երկիրս էր երկին:

Արդեօք, զինչ մեզ Թըւին, մեր բարձր են կարիք՝
Զի արձագանգքն առ ձեզ իզուԹ ելանեն.
ԵԹէ՝ և անդր իսկ բան ըզձեզ Թափանցիկ՝
ՉԱնմահուԹեան, Ցուսոյ գահոյս բաբախեն՝
Ուստի բաժակիք:

Բայց մահացուին, աստեղք, ձրգէք դուք ըզսէր.
Ցարփւոյն իտես գոչէ. Ահա նոր իմն օր.
Նոր իմն առ իս կըրից վըշտաց գայ հրաւէր.
Որոյ սահմանս՝ ըզձեզ կարծէ երկնազօր,
Եւ բաշխ ըզլոյս ձեր:

Դուք այնմիկ որ ելեալ իդոյզն յեղեւին
Կախի 'նդ անդունդս և ձեզ՝ ծագէք ապաւէն.
Դուք մըտերիմ միայնութեանց էք հովուին,
Եւ խորազնին աչք առ իձէնջ նըկարէն
Նըշմարէ զՈրէն:

Դուք և զնոճեօք, որ յարտասուս բուծանի,
Ջանմահութեան սըփռէք ճաճանչ անշարժուն.
Կարմրեակ ոգի որդւոյն էք յաչս մայրենի,
Եւ զսիրելին ձեօք հարան հայցէ ծընգասուն.
Մի ջահ դեռ վառի:

Ո՜հ, ձեր զիարդ քաղցր է նըշոյլ հեզաճեմ
Ջնորազըրգիռն հոդով ուր կէսն է սըրտին...
Մահացան ծաղկունք յայցել ձեր դըժխեմ,
Եւ շող իշող տըխուր անդ շիթք ծածանին,
Զոր արկ սիրելին:

Աստեղք, այցող դուք և անյուշ տապանաց՝
Զորով ծածկոյթ են մոռացօնք, լռութիւն.
Որ չլլաեն զծանօթ ձայն, բաղցր և շիրմաց.
Եւ ոչ ոսկերքն այն խայտացին ազազուն՝
Իյզող սիրելեաց:

Առ նոքօք երբէք կատեալ պանդխտին,
Ըզխոնջ մարմին բեռն ըզվիմաւն յաւելու.
Հէգ... կենդանեաւն է մոռացեալ և ինքնին...
Կողկողագինս հայի վայրէն ձեզ մահու,
Իյուշ մըտերմին...

Աստեղք սակայն պանդուխտ և բնաւքն են յաւէտ.
Մահացուին չիք աստ կայս թէ և իղձ լիցի.
Ցանծանօթ իմն ելեալ վայրից՝ գնամք անգէտ,
Եւ կեղակարծ ամն և ուղին ճեմելի,
Ո՞ւր, և երբ իր կէտ:

Ո՞ր զձեզ ունին զարմանք, աւաղ, զրթասէր,
Մինչ անփոփոխքդ զերկիր դիտէք անհանդարտ.
Երկնից ինքնին մեր փոխին դէմք և պատկեր,
Զինչ սիրտք անձուկ վըշտաց իծով դատապարտ,
Շուրջ մահու գիշեր:

Ա՛հ, շողացէք, աստեղք, լապտերքդ ո՞վ յուսոյ,
Կըրկին 'դ աշխարհս կախեալք, յերկնէ իմուն կոյս.
Փայլեցարուք զի սիրտ վառի 'ձեր լուսոյ
Անշէջ յարտօսր . . . սիրտ՝ զանձկալիսն որ կորոյս,
Սիրտ իցաւս ազդոյս . . .

Բօտար դրախտի ծաղիկ է աստ սիրտ երկմիտ,
Ուր երբէք ո՛չ տացէ զարմատս իւր իխոր.
Ուրջուրքդառինք, որդն և հողմունք խիտ առ խիտ..
Մինչև ընդ խոսի ցաւոց անկցի գըլխակոր
Առ ինոր՝ փըթիթ :

Բայնժամ . . . այլ, ո՛հ, Երբ ցանկալին գայցէ ժամ
Զի ըզլուսոյ կոխեալ սահման ձեր, անդէն
Իլոյսդ, արփիք, նոր յաւելումք լոյս և ծամ,
Արտասուայեղձ աչք սիրելեաց մինչ ասեն.
Անդ է զոր ողբամ :

Անդ իբարձանցդ՝ զաչաց վերջին ըզթափառ
Արկիցս իցաւսն, յառիթս, յարտօսր ապաժոյժ . . .
Թէ միայն՝ ցաւոց ցանգ տևիցէ զաղափար,
Թէ զբաստ և խինդ մեր արծարծէ վըշտացն յուշ՝
Զերդ հողմն ըզբուրվառ :

ՏԱՂ ԽԳ.

ԱՄԱՑՈՒԹԻՒՆ

«Որպէս երկիր անապատ.»
ՍԱՂՄ.

Այո, զինև շրջածաւալ ախորժասփիւռ ծիր տեսու-
թեան,
Այո, այնչափ անչափ իգեղ և իպերճանքս կերպա-
բան,
Լուսաճաճանչ այս արփի, և լուսոյն շէկ վերջին
նըշոյլ,
Ի արգաւանդ նազի բնութիւն՝ այս նոր գոյակք
հոյլ ի հոյլ,
Ծառք վարսագեղ, տունկք անոյշ, հաւուց դաշ-
նակք, ջուրց խոխոջիւն,
Զըկարեն բառնալ զիմս ամայութիւն:

Ո՜հ, այո՛, փարթամութիւն բնութեան արդի՛ւ ըզ-
կնին համայն
Զբաւիցեն իմ ոգւոյս յաւելուլ շնորհս ամայութեան,
Որ ինորուն արձակել զինև ժըպիտ զբաւարթաճեմ
Յանմբռունչ իլբռութիւն կամ իհեծիւն անդրաձայ-
նեմ.
«Դա, բընութիւն, այսքանի ճոխ իգեղ, իբնաւ իսկ
էս որ կան՝
Այսքանի հոգւոյս աստ յամայութեան:»

Այսքանիս յամայութեան, ում օրինակ չիք մըխի-
թար.
Թէ զթափառեալ յածեմ զոտս ընդ մենանիստ լե-
ռանց ընդ դար,
Յանապատս աւազակոյտ և իմայրիս անթափանցիկ,
Թէ ընդ լիճ լայնածաւալ հայիմ իժայոս յոտից ան-
կնիք,
Բայց մենագոյն, մենագոյն սըրտիս յաւէտ ամայու-
թիւն,
Լայնալիր, նըսեմ և անջըրդագոյն:

Ոչ, բբլուրք, ծովք և առուք, դաշտք, դարևանդք
դուք չէք միայն: —
Լերինք, իձեզ մայրիք և ամպք զբստուերան հեղուն
հողմաձայն.
Ծործորք, ընդ ձեզ հեղեղատք կարկաջասահ ըզբօ-
սանք.
Եւ իշըշունջ սօսափիւնդ, մայրիք, սոխակ գիւր
զուգէ վանգ.
Եւ դուք երկնից և բնութեան, լիճք, անաղօտ հա-
յելիք,
Լի էք՝ հողմն, իստուեր, դաշնակ և յալիք:

Բայց ամայի է սիրտ իմ իդաշնակէն իւր խան-
դակաթ.
Զինչ յերկինս անդ նորա բայց աղջամուղջ թէ սը-
գապատ.
Զիք և ոչ մի շունչ ախորժ որ ըզնորին ակօսէ դէզ,
Ոչ մի սոյլ անդ ինըմա, ոչ մի կարկաջ տըխուրն
յերէզ,
Եւ ոչ մի ծառ սաղարթուն, որ տացէ զշուքն եւ
ըզշըշուկ,
Եւ կամ ծաղկածիր գոյն՝ յոյս իդերբուկ:

Ո՛վ անապատք ամայի, յոյց վերառնու սիրտ իմ զանուն,
Բայց զի յարդիւնս անդ նըւազ դուք յիմս խցէք նըմանութիւն.
Տա՛յր ոք սըրտիս՝ յամայոջն իւր թէ կղզեակք էին դալար.
Թէ և անդորը, թէ հեռուստ՝ բայց գայր և իւր եզր ինքշմար.
Եւ թէ ասել ինձ մարթիւր. Աստի և անդր իվեր խոյանք՝
Ամայութեան իւր աւարտին սահմանք:

ՏԱՂ ԽԴ.

ԻՄԱՇ ՀՈԳԵՇԱՐԱԶԱՏ ԵՂԲՕՐ



ԵՂԵՐԳ

Նըւագ մի քեզ, ում ախորժ իլուր նըւագքս իմ հընչէին,
Որ զքաղցրաշարժդ ինոսա լըսէիր Թելըս քո սըրտին,
Քեզ ուխտեցի, յիշիցես, զմայլմամբ իքոյդ առ իս գորով,
Արձան յուշարար խընդալից սիրով:

Արձան, այլ ոչ շիրմիդ, աւա՛ղ, իսնարբս սևագէմ,
Զորպիսի արդ դողդոջուն ձեռօք կանգնել կամ նը-
սեմ,
Այլ արձան՝ որ կայկայեալ ոչ իշաղախ դառն արտա-
սուաց,
Եւ ոչ ինձառաչ ջեռեալ տխրանաց

Եւ արդ զարտօսր այդ աղի, զայդ հեծութիւնքս
սրբուսգին
Իմս առ քեզ հատուցանէ սէրեռանդուն սիրոյ քոյին.
Սիրոյդ՝ նախկին որ զախորժ և հուր կալաւ մինչև
իսպառ,
Եւ ոչ այլ քան ինձ երկար մընխինթար :

Որ և օտար աստեղաց հարցաբանէր զեղբօրս ող-
ջոյն,
Եւ զանմոռացն յիշատակ տայր ինծանօթս և արտա-
քոյն
Իշերթանց որ ճըշմարտին ևեթ բարոզ կացին սպատ-
կառ՝
Սըրբազան ցուցեալ և զսիրոյն բարբառ :

Ո՛հ մինչ զանանութիւդ ըզգացումն իձև բերեալ քո կերպարան
Առաքէիր յիշատակ ում չըպիտէրն առ քոյդ յիշման,
Է՞ր ինձ կարծել, աւաղ զիս, թէ յուշարար էր այդ քո ձիր,
Զոր իդրանց շիրմիդ յիս կարկառէիր :

Արդեօք զիտուն էր այն սըրտիդ. իմս ոչ՝ այլ քոյն զուցէ վկայէր
Եթէ վերջին այդ ուրեմն հաղորդութիւն ընդ իս կըռէր,
Թէ և յանդարձ քոյդ իչուն՝ սիրտ քո դառնայր յիս սակայն
Եւ անջինջ զանուն կապէր յիւր ընծայն :

Զանուն մի սին և անգէտ՝ բաց իսըրտից որ քո են պէս...
Որ՝ վըշտաց դառնութիւնս հընչէ և սուգ աղեկէզ.
Որ՝ երբէք ոչ իբերկրութեան իմիք եդաւ վերայ կընիք,
Եւ ոչ ժըմտեցին յայն ակընկալիք...

Զիարդ սիրոյ խընդութեան՝ զհետ սիրոյ բոցք առ-
նագորոյնք,
Ողջունի որ կենաց է՝ մահու կրցին երկրորդ ող-
ջոյնք,
Բայց զերկոսին ևս, աւաղ, իխընծիղ ապ՝ իլալիս
Սիրելին երկուց մեզ՝ բերէր առ իս:

Զերդ գարնանի զուարթ առաւօտ զոր ըմբռնեաց
յանկարծ մըրրիկ,
Եւ զյուսոյն վերջին այս զոյժ շիջոյց զարև գեղեցիկ.
Սրացան յաչաց ապագայք. և մրթագին անկան նը-
կարք՝
Ցոր ծիծաղէին մեր բիբք հեռավարք:

Անդ՝ վաստակոցդ ըզխայրիս դիտէիր վէտ վէտ
իհունձ,
Անդ՝ բարգաւաճ քո անուն, վեհ աշխարհաց քեզ
երկոցունց.
Անդ՝ զուարճացեալ հայրենեաց իյուսալի փառս
հոգետես,
Անդ ցանգ աչքդ և սիրտ . . . բայց դու անդ ոչ ես:

Քեզ ապագայք՝ երկինք են, բայց 'ւաստ կեցցես յանցեալն անդ,
Յանցեալն՝ անբիծ ում ըզկեանս ետուր ծոցոյն իճոխ աւանդ.
Իհայրենիս՝ զոր սիրեր իբան և զործ ջատագով.
Մի խիրելեաց մոռացիս ժողով:

Իբրեւ զի մեծ փառք սըրտի սիրոյ այլոց հաստատիլ կէտ,
Յոր փարիցին անձկանօք ուխտք և Ցախիծ զորովաղէտ.
Իբրև ըզնաւ մեծամեծ և կամ յանհիւթ ակաղձուն զանձ
Յոր բիրք սիրտք դիմեն հեռուստ, իբարձանց:

Այս դու փառաց անկապուտ՝կացեր յաստեացըս ժառանգորդ,
Սըրտից այնքանի սիրոյ եղեալըդ դու հաղորդ.
Սիրոյ՝ զոր քոյդ բորբոքէր սիրտ անկեղծիկ վառարան
Իհատարակաց սիրոյն մեր խորան:

Բայց արդ ընդէր, ուր դուն բոց, մեք արկանեմք
արտօսր իյոյզ.
Քանի՛ տըխուր այս ըստուեր ուրանօր մեծ շահէր
նախ լոյս.
Ընդ նըմին սըրտից փախեաւ դաշնակ և խինդ զը-
ւարթարար,
Զերդ իքնար ոսկի յոր թէ բեկաւ լար :

Զերկնից, գիտեմք, դու լըցեր յաւիտենից գահ ի
պատրաստ.
Այլ զայն գիւրդ ոչ լայցեմք՝ զի խրամատմամբ ըզ-
մեր երաստ,
Սիրտս այնքանիս անճաշակ թողեալ սիրոյդ և հան-
ճարոյ.
Եւ ըզսիրելեացդ՝ զիրկ յայնքան սիրոյ :

Յաստեաց անտև փոփոխմունս յոր մեք ծըփիմք,
ո՛ գիտէ ցերբ,
Դեռ յոյս զյուսով, սէր ըզսիրով զայցեն գնայցեն
սըրտին զեզերբ.
Այլ իբր ըզքոյդ կենդանի և լուսափայլ զըտցեն
սիրտք հուր.
Ո՞ զքոյդ լընու խորշ թողեալ քև թափուր :

Ո՞, բայց քո քաղցր յիշատակ իբրու յանօթ զիւղ անոյշ բոյր,
Կամ ցամաքեալն իհեղեղատ նըշմար ալեաց արշաւասոյր,
Եւ թէ և զայլ ևս լացցուք, երկինք, այսպէս դառն իվըտակ՝
Բայց յուշ լիցի ցանգ զոր իքեզ լացաք:

ՏԱՂ ԽԲ.

ԻՔԱԳՈՒՇԻՆ ԵՐԿՆԻՑ



Ա.

Երկնագումար մըշտազբաւարն զօրութեանց
Թէ տընկակից զոն իմեզ իդձք և նախանձ,
Թէ մէն նոցին հասեալ իմեր լրսելիս
Երանութեան հընչմունք իքաղցր աւետիս,
Յարտօսր ըզմեզ ածեն, զերդ լուրջ խընճոյից
Զայնք իդոփիւն պարուց՝ և հոտ անուշից՝
Իմուրացիկն այր տան լալիս հառաչման,
Որ յայնքան խինդ՝ խաւիանի ձայնն հեծութեան:

Այլ դառնագոյն սակայն իլուր զան հիքին
Բերկրեալ այն երգք որ յարտասուն ընդխառնին,
Աչք ծանրացեալ և մեր իցող սիրակաթ
Հայիմք յերկին, հալին ոգիքս ըղձակաթ.
Մերթ՝ Տէրունեոյն զի խրմբին տօնք, մերթ՝ Եղ-
բարց,
Ցանկալի տօնք, արևուն զերդ անդուլ դարձ,
Որ զալէլուան այն՝ հաւաչմանց ծանր ինուագ
Դարձուցանեմք. պէս սեաւ վիհ՝ շող ինչ սայթաք:

Բ.

Իսկ զօր այս սոյն՝ վարդակարմիր մինչ ցոլայր,
Մայր, Քո լուաք, լուաք հանդէս Քո, սուրբ Մայր.
Ո՛վ, բանի՛ ևս վազեցին ջերմ սիրտք որդեաց,
Քանի՛ անձուկք երկնից, մերժումն իյաստեաց:
Ո՜հ, կարճատոր տօնից մեր տիւ սրբաբշաւ
Այնքան իվեր խինդ և իվայր՝ բեբէ ցաւ.
Ցաւ որչափ խոր գիտէ կարօտ մայրենի,
Անձուկ սիրոյն, աչացն անձուկ գեղանի,

Որ զի քեցեալ որբս իտեսոյդ անձկաւէտ,
Մեզ զրաւական զանուն ունիմք Քո ևեթ:
Զանունդ որ տիպ այգոյն ծընունդ տայ ըզկեանս,
Որ յո լըսի խինդս անդ ծագէ և սփոփանս.
Լուսին պայծառ յալիս ծըփմանց վայր իվայր,
Որ զմութ նոցին նըշողէ խորս և զճօճ ծայր,
Ըզմութ սըրտից, վիհս՝ ոտնատեղս աղէտից,
Ցոյց Քո բըխէ անուն աղբերս անջըրդից:
Աղբերս զոգւոց կըրկնավըտակ քաղցր և դառն,
Արդ որ իյուշ Քո յորդորին զուգախառն,
Ցուշդ անմոռաց, յաւուր փառաց քոց լըրման,
Ցաւուրն այն զի երկինք յերկրէ զՔեզ խանդան,
Որ Քեզ երբեմն որչափ եղեալ մերձաւոր
Զմեզ արդ անհուն իՔէն ըզգամք հեռաւոր:
Ա՛ռ իՔէն, Մայր, որ զի և Դու զմեզ սիրես
Եւ զոր հառաչս ուղերձեն սիրտք ժողովես,
Որ զորդեկաց, ոյց Քեզ այսպէս դաւանին,
Թիւ զարտասուացն ունիս իսէր զի հոսին,
Գորովեացին գիտեմք և Քո բիբք այսօր
Ցաչացն իտես որ Քեզ ձըգին յոյս հըզօր,
Եւ ըզՔեզ ոչ նըկատիցեն, զՔեզ որդիք,
ԶՔեզ զոր եղբարքն արդ վայելեն հայրենիք:

Գ.

Արդեօք յերկնից յանտըրտական անդ խորան
Իբրու աստէն ոտնհար կայ սուգն և խոտան,
Թէ բեկելոց հայցուածք սըրտից եռանդուն
Ձեղջ յապաշաւ պանալ փառաց յէին բուն,
Ձաստեղազարդն հատեալ կամար սիրոյն հուր,
Ի Մայրութեան հասանիցեն Քո իլուր:
Ցոյս յուսամք, Մայր, Թէպէտ գիտեմք ի Ձուարթնոց
Ներբողական պաղատիս ձայնս արդ երգոց:
Ո՛հ, Տիրուհւոյդ երկնից ուր այլ բան յերկին
Արժանաւոր փառաց նըւազք պաշտիցին.
Նըւազք զոր բաց ի Քրիստոսէ ոչ ումեք՝
Բայց ընդ Քրիստոս ում համօրէն է ուրեք,
Արդարութեան զուգաւորեալ ընդ զըթոյն,
Ձերդ լոյս և ջեր ի ճառագայթ մի արփւոյն:
Լինելութիւնն ում ընդհանուր՝ կայ պատկառ,
Ցաչացն աղու ակընկալէ զլոյս խաւար.
Դղորդ ի թընդիւն յերկիր թափին թէ շանթիք՝
Թիւրին իկէտն անդ ինորուն ակնարկիք:

Ամպք սևադէզ՝ նա թէ հայի պատառին,
Կարկուտն իցող հեզ, հողմք խիւզ փոխարկին.
Տիեզերք համայն առնուն առ սէր նորա թևս
Սրանալ լընուլ նորուն ըզթան իստորևս.
Եւ մահ ըզսուր դարձուցանէ թերաքամ
Զընդալ իկեանս զոր ինմանէն ըստանամ.
Եւ ինքն Անմահն յերկրի ելեալ յաւերած՝
Զկառան իմի իւր դարձուցանէ հայեցուած.
Նորա՝ որ զէն էից կալաւ իւր իսպաս՝
Մեր առ նորա զինչ իպաշտօն իցէ դաս:

Դ.

Որում Աստուած յաւիտենից անձկով կայր,
Երկրպագէք, Զուարթունք, զէիդ ձեր ըզՄայր.
Ցուցէք ըզսէրդ, թէ ժաման չէք արժանեաց,
Զնա մեծարել՝ Աստուածորդին լոկ գիտաց:
Երկինք, յանհունն հիացարուք ցածութիւն,
Քան զձեզ Աստուած խոնարհեալ էջ՝ հայց Նորուն,
Եւ Մայրն իսկ՝ աստ խոնարհեալ գայ մեզ իվեր,
Այլ իցէ վեր ուստ՝ էջն Աստուած Մօրն իսէր:

Եւ յոր հազիւ արդ հաճի եղս առնել Մայր,
Խոնարհութեան վերջին ցուցեալ զանձրն ծայր,
Ինքն՝ ում ոտից չբաւեն աստեղք պատուանդան.
ՑԱստուածութեան որում հարեալ կայ խորան:
Փառք Անմահին, փառք ում բընաւ զիւրն ըզկար
Ելեալ յարդիւնս արժան դիտել զմեզ արար:

Ե.

Զայս Սերովբէք. իսկ Դու սլացեալ յանմատոյց
Բարբէ և ոյր հարեալ զուղիդ, ո ուսոյց,
Հոգւոյդ ինիւս Թռուցեր Թեթև զայն մարմին,
(Զոր նախ երկինք յՈրդիդ Աստուած պաշտեցին)
Ի Հայրենի բիւրաբեղուն անդ իծոց
Միածին Դուստր, յեղեալսն և յէն Դու խտրոց:
Մինչ Քոյդ փարեալ զՔև Միածինդ ըզբազուկ՝
Ում տիեզերք և յաւիտեանք զան անձուկ,
Զաղապատանս ըզՔև յիշէ որդեպէս,
Եւ զՄայրենի հայցէ զբզուանդ առ յերկրէս,

—Իբրու զի ոչ ըզմի նըւազ կամ յերկրի՝
Այլ և յերկինս զՓեզ խնդրէ մայր անձկալի, —
Եւ զսիրոյդ հուր՝ առ որով կայծ Սրովբէից,
Կամ հատ մի խուն յՈվկիանեան աւազից.
Սիրոյն զանձամբդ հեղեալ աղբիւր գիւր Հոգին
Իբր ըզնովիտ զոր ջուրք ի ծով փոխեցին,
Ըզբաւականդ ելից զոգիդ լիութեան
Խանդաղատեալ զերդ հարսն ըզՓև ի փարման :

Զ.

Ո՛վ Երրակին Անձնութեան կէտ Դու միայն
Ցոր զտիեզերց գըլխաւորէ սէր համայն,
Ի Փեզ՝ նոցին ածեալ զորով զըթութիւն
Եւ Փո բերէ վասն առ նոսա հաճութիւն.
Թէ կեանս առնումք ի Հօրէ Փո է դարձուած,
Զի կեանս Որդւոյն իւր Դուն ետուր ըզփառաց.
Եւ ոչ Որդին փըրկէ Թէ ոչ մեզ ըզՓոյդ
Տաս արտասուս՝ յեղբայրացեալս տանել փոյթ :

Իսկ և Ոգին ոչ սրբբիցէ լուսալիս
Զոր հարսն անախտ գրգուեա իծոց քո որդիս :
Որդիս . . . այլ քեզ ծանր այսքանի Մայրութիւնդ,
Երկանց քանի տարեալ զի մեզ տաս ծընունդ.
Նա դառն երկունք են այդոքիկ քո Խաչին
Որ զմեզ սրբտիդ յանքոյթ իխորս կերպեցին,
Զի և փառաց երանութեանդ յասպարէզ,
Ցո դէմ գընաս անդ տանիցիս և ըզմեզ :
Պարկեշտագեղ վեհ բան զԵսթեր մահալոյծ,
Ում ոչ վերջին վրտանգք են պէտք զրթոյդ ցոյց,
Ոչ բարձրութիւն անմատոյց ում ամբարձարդ,
Ըզմեր կտրիս Քեզ մտանալ ինչ ետ ցարդ.
Այլ երանեալ որչափ՝ — զի յայնմ ես աղբիւր —
Եւ զվիշտս այնչափ բանի դառինք գիտես բիւր.
Բա՛, և յերկնից բարձրաւանդակ իգահոյս
Վասն այն զի զմեր տեսցես ելեր վիհ ոգւոյս,
Մտադիր յորդիս աչս իջուցեալ պատկառոտ՝
Քան յէութիւնն ում առաւել բազմիս մօտ :

Է.

Այո՛, և զայն, ով Մայր, պանծամք սրբտալիր,
Քերուբն իքեզ յահ վերակնէ զերդ Դաբիր,
Ցոր բարձրութիւնն առեալ դէտակն Արուսեակ
Իդրժոխոց տապալեցաւ բոց յատակ:
Ա՛յնքան իգահդ յաւիտեանց՝ խնամ էր Որդւոյդ
Զի քեզ ոսոխ խորհուրդ նա եղծ փոյթ ընդ փոյթ.
Խիստ և առ վեհ ցուցեալ ցայնժամն արարած.
Ուր՝ մինչ յիւրմէն ըստամբակէր մարդն իրաց՝
Զնոյն ոչ նախանձ և առ պատուոյն իւր կալաւ,
Զի 'քոյդ տեսիլ յետս հարան զէնք իւր ծալաւ:
Ըսկրզբնամայրդ արդարև, տիպ մարդկութեան,
Այն՝ որ յանմահ զոյր հաստատեալ խորհրդեան,
Որ դու կողին՝ այլ Վեհ Միրոյն հրաշագործ,
Որում աղբիւր բըխմանն էր Քոյդ ծոց անփորձ.
Ըզկերպարան զոր ընկալար յԱնեղէն՝
ՑԱնեղն անեղծ վերընծայեալ Քո այսրէն.
Եւ անդանօր Աստուածութիւն յիւրն իՄայր
Սրբամաքուրն իհայելի զուարճանայր:

Ը.

Ում եւ Աստուած եւ մեք անուն Մայր տուաք,
Եւ հանդուրժես յանմահութեանց անդ իծագ՝
Զայդ իշխրթանց որոց իՔէն սիրտք հեռի,
Գնան աշխարհի զոր անարգես Դու՝ զերի.
Զայդ՝ որոց սէր զայթ իզայթի կայ առ Քեզ.
Զայդ ինոցունց՝ որ ուրանանն իհանդէս.
Թէ այն է սէր՝ իսկ թշնամանք զինչ իցեն...
Ո՛հ, այսպիսիք բայց բազմագոյնք յորդուոցդ են,
Ա՞յս մայրակոչ որոց լինել Դու սիրես,
Զայս այնքանի Քո սէր փոխան ծընաւ Քեզ:

***

Բայց Դու ներեա, Մայր սիրուն,
Ներեա բնութեան զաղփաղփուն.
Զի թէ շնորհօք Դու ես Մայր՝
Բնութիւն զԱդամ գիտէ հայր:
Ո՞հ, զոր այնքան Դու վրսեմ
Թանձին ցուցեր զայդ նրսեմ,

Ըզնիւթ սրբբեալ պէս ոգւոյն
Խեռ Թըշնամիս իմարդոյն ,
Ահա և մեր սրբբեա սիրտ
Իցանկութեանց անխըլիրտ ,
Զայն հուր վառեալ անդ թեթև
Թոյր բոց յերկինս հարեր թև :

Ե՛րբ իցէ , երբեմն իդոյն լուցեալ մեր ,
Մի ևս վըշտաց որդիք՝ լիցիմք այլ իսէր .
Որ զԳողգոթեան ոչ յայլ բերցուք ինչ ըզյուշ՝
Բայց զի իվարդ Քեզ պըսակիդ յեղաք փուշ . . .
Ա՛հ , իւ ըզԲեզն հարաք՝ զայն փուշըս ո՛ տայր
Զսըրտիւքս ոլոր՝ զի զոյր ասել և մեզ , Մայր ,
Ընկալ, այս այն է պըսակ
Զոր Մայրութեանդ յաւուր անկաք ,
Եւ զոր յերկնից յոր Հարանութեան
Թողեր որդւոց գրաւական :
Ընկալ , ըզդոյն յետ Որդւոյդ
Տարաք առ Քո և մեք սիրոյդ .
Ընկալ, չիցեմք Քո մեք որդիք,
Զսիրոյդ տանիմք թէ զկընիք :

Ընկալ, զի, ո՛հ, Դու եթէ ոչ ընկալցիս
Իգիրկս, իբր աստ, Որդեգրութեանդ և անդ զիս,
Զիս և յերկնից իբաստ նըժդեհ ծանեայց, Մա՛յր,
—Թէ և յերկինս յայնժամ ուրեք զըտից վայր։—

ՏԱՂ ԽԶ.

ԻՆԱ ՈՒՐԱԽ ԵՂԻՑԻՆ ՍԻՐՏՔ ՄԵՐ

ՍԱՂՄ.

Այո, ուրախ եղիցին,
Լիցին բերկրեալ սիրտքս ինայ,
Իսուգ քանզի ցանգ անցին
Ցանգ իխընդից իբացեայ.
Զի մերս ըզմի եւեթ աչք
Ծանեան տեսակք արտասուաց.
Զի 'Նոսա ոչ բարգաւանք
Շողք զայգ բերին հրճուանաց,
Կամ դէմս և աչք զբարթուն
Անդ ցոլացոյց սէր համբուն:

Այո, ուրախ մեք լիցուք
Անդ՝ քանզի ոչ եղաք աստ.
Անդ բերկրութիւն չէ արուզ,
Ոչ կեղակարծ ինչ է բաստ.
Ուր չիք յամէն տրոփ սըրտին
Ասել. Հարցէ միւս անգամ.
Եւ ոչ իսուր փախըստին
Զխընդի ցանկալ յամր ըզժամ.
Կամ իզբուարթն անդ իտիւ
Հեծել՝ խոկմամբն ըզվաղիւ:

Վաղիւ աստ սուգ լուսանայ
Թէ բերկրութիւն էր այսօր.
Քանզի և ոչ հաւատչեայ
Խինդն աստ իխինդ տացի նոր.
Բայց մեր թէ բիբք 'ւ իվաղուին
Մըթագնեսցին յարտասուս,
Ոչ իկորուստ երեկին,
Այլ զայն զէթ լամք զոր յայժմուս.
Գէթ ոչ իմեր խառնի ցաւ
Քաղցր անցելոյն ապաշաւ:

Ըզմեր վաղիւ՝ ոչ արփւոյս
Պատմէ մեզ դարձն՝ յեղյեղուկ,
Ոչ առօրեայն սորա լոյս
Ցաչաց ըզսեաւ բառնայ սուգ:
Հասցէ, մեզ միւս այլ վաղիւ
Թէ և յամով՝ չեն տուգանք,
Ցորժամ յաւարտ՝ մի այլ տիւ
Գայցէ՝ որ անդ կոչի կեանք,
Ցորժամ բակին բիբք իլոյս
Զի բացցի ակն իմ հոգւոյս:

Տես, իբր իսուղ ինչ աւուրս
Բնութեան փոխեալ է դիմակ.
Ոչ ևս մեզ հեշտ է բըլուրս,
Եւ արփին ոչ համարձակ
Ճախրէ 'նդ երկնից ծով կապոյտ,
Այլ հարկանի և լուղի
Մերթ յայս մերթ յայն ամպոց կոյտ
Կարկառեալս յիւրն անդ ուղի,
Սըրտկեղ տըխուրն իմեր տես
Սքողէ ըզդէմս իւր առ մեզ:

Ոչ ևս ախորժ իմեզ սիք
Ծաւալեն շունչ ոգելից,
Կամ 'դ հոյլ խաղան հոպոպիք
Մանկանց 'ւ աղջկանց պարակից
Յարօտս՝ հանգոյն դեռափթիթ.
Կամ տաւաղեալ կայտռիցին
Իթինդ գառինքն ըզմարբ խիտ,
Մինչ սուր իսոյլ սըրընգին
Հեշտանայցէ արձագանգ
Խառն ընդ ալեաց խորոց յանգ:

Ահա զբաւարթ այն տերևք
Յոր վազս առեալ զընային
Երբեմն իսահ հողմոց թևք,
Արդ մեր շաւիղք են ոտին.
Մեռելատիպ և ծաղկունք
Թերթ իթերթէ ցան և ցիր,
Ոչ ևս Յոյր, ոչ անուշունք,
Ոչ և իխաղս ջուրց տան ծիր.
Այլ վայրանկեալք ընդ պարտէզ,
Խունկք ընդ բուրվառ կիսակէզ:

Զի հեշտ մայրեացդ էր շըրշիւն,
Մինչ գանկայունն հովանի,
Տային առ մարդն և յառուն,
Խանդից նախանձ՝ յերգ ձայնի
Թըռչնոց, երգիչ և հողմոց.
Բայց արդ կապուտք, նոցին զարդ
Անդոց ծածկոյթ մըշտակոծ.
Թախիծ ընդ մարգս են զըւարթ.
Հողմունք՝ նոցին մերթ տըրփանս՝
Ըսպառեցին զնոցա կեանս:

Վըճիռ բնութեան Որոյ ստեղծ.
«Իւ վայելէն՝ զընալ յեղծ:»
Ափունք մաշին յալեաց պինդ.
Ցոյց զուարճանան զոռ 'ւ իշռինդ.
Օդք որ տան գնացս երակաց՝
Ինոյն ծախեն ըզնոսին,
Ջեր ոչ տայ կեանս դալարեաց
Թէ ոչ և զմահն առ նըմին.
Լոյս իբրբաց տալ ողջոյնս
Ո՞չ շըլացոյց նախ ըզնոյնս:

Ո՞չ և բնութեանս այս սահմանք.
Հոգին զգացմամբք իւր խոնջի,
Մինչդեռ մաշին և իրանք,
Եւ յոյժն իտոյժ փոխարկի.
Բերկրէ ըզսիրտ խուն ժըմիտ,
Բայց յաճախէ երբ, աւաղ,
Ըզկուսութեանն այտք փրթիթ
Կորուսանեն իծիծաղ.
Թէրթ մի անկաւ իհոգւոյն
Իհեշտութեան կէտ սիրոյն:

Այսպէս երագ և թեթև
Են երկրածին բերկրութիւնք,
Քան ըզգարնան շոյտ ըզթև,
Եւ քան զբերող զայն ծաղկունք.
Այլ զերդ տաղտուկ ինչ աշուն
Որ ձրգէ զհետ սին տերևս,
Կընճիռն և խորշրս թողուն
Եւ յանարօր ցաւոց ձևս.
Ակօսք՝ որ ոչ տան բողբոջ,
Բայց խայթըս՝ փուշ իհոգւոջ:

Մեք այլ բնութեան յայս շրջմունս
Եւ իբերկրեալ սրտից կիրս,
Թէ ինոցին յեղյեղմունս
Հեշտից իսեշտ ցանգ խնդիրս,
Եւ թէ իմերթն յափրութեան
Իվայելից անփոփոխ,
Որպէս իջերս ամարան
Բնութիւն՝ յերկնից ցանգ արբող,
Մեք՝ ոյց վայելք են լոկ ցաւք,
Գիտեմք՝ հեշտից ևս են դաւք:

Մեք որ վըշտաց իստուերին
Հայիմք յայլոց իբերկրանս՝—
Զերդ իմբթան անդ հիւղին
Աղքատ նըստեալ իտուայտանս,
Եւ ընդդէմ յաչս իւր ցոլան
Վառ ջահք դրացւոյ իւր ճոխին,—
Եւ բարձր աստուատ սըլանան
Աչքս ուր կարծի Տէրունին.
Եւ ասեմք. Այսք ինչերկայ,
Բայց մեք՝ լիցուք, ահ, ինայ:

Ինա՛, ինա, ցանգ ինայ,
Ինա՛, մեր սիրտք, ինա բիբ,
Ինա որ ոչն յամենայ
Տալ և զանոյշ զերդ տըտիպ.
Որ և ընդ քոզ արտասուաց
Զոգւոյս դիտէ մեր ըզվէրս,
Գիտէ քանի՞ խորազգաց,
Քանի՞ ճընշեալ ողբք ի՝ներս,
Եւ յանմըռունչ մերս ի՝հեծ
Քանիո՞ն հուր սիրոյն մեծ:

Որ ոչ զոր ետ մեզ բաժակ
Պիղծ և խառնակ համարի,
Զի արտասուաց ջերմ կայլակ
Ցումպս անդ յաչաց մեր Քորի.
Որ ետ՝ գիտէ զինչ ըզգան
Սիրտք սիրելեաց իւր ուշով,
Զինչ հառաչանքն ասեն բան,
Զինչ աղեկէզն անդ վըրդով,
Զինչ զանձկալւոյն տալ զանուն,
Մինչ շուրջ՝ Քափուր կայ անհուն...

Ինա՛, ո՛հ, սիրտ իմ, ինայ,
Ինա՝ ևեթ յուսացուք,
Ինա՝ որ քեզն իմերձ կայ,
Զինչ թէ հեռի, Մահացո՛ւք.
Որ հրամայեաց թէ «Կըրեա՛»
Ո՞չ ասասցէ և «Խընդա՛» .
Յերկրի ասաց զառաջին,
Զմիւսն ասասցէ քեզ յերկին .
Ժուժեաց աստ, սիրտ իմ, ժուժեա,
Զի զուարթ լիցիս անդ ուր նա :

ՏԱՂ ԽԷ.

—

ՏԷՐ, ԵՐԲ ՏԵՍՑԵՍ

ՍԱՂՄ.



Արդ զի մահացուք փակեալ ունին զաչս,
Զաչս՝ յորմէ աղէտք հայցեն ըզգորով,
Եւ յայն լոկ բացեալ որ արհամարհ շահ,
Կամ որ ոչ աղեացն ածիցէ վըրդով.

Արդ զի ատելի ցաւոցն արտասուք,
Յորոց մըղձկելոյն Թեթևանայ սիրտ՝
Ոչ ապի յայլ իսիրտ քամէ կամ իձեռս
Խառն յաղի վիժանս յատակին ըզդիրտ.

Արդ զի կորուսեալ վիշտք ըզպատկառանս,
Զոր իբրու բախտին կարծեն պատարագ,
Եւ որպէս ըզբու ձախողակ հրմայս
Ըզվըշտացեալս այպն առնեն և յառակ.

Արդ զի հարկ է պինդ ունել ըզհառաչ
Իսիրտն անդ հանգոյն իշիջեալ հրաբուխ,
Հարկ՝ որչափ հրատապ ցաւքն իցեն և վէր,
Արտասուացն որչափ անհատաբար ուխ.

Արդ զի և երկնից կորեաւ լոյս կապոյտ,
Ուր սիրտն ըսիրէր իբր յապառնեաց տես,
Եւ տրխուր աչկունք յայս ամպոց գուպար
Ակընկորին գոգ կորուսեալ և զքեզ,
Տէր, Դու երբ տեսցես:

Տէր, յոյր գայ հրաման մառախուղ մըրուր,
Պատկեր՝ ուր ըզսիրտ կալեալ է Թախիծ,
Եւ բուք վեր իվայր հարեալ զանդ և ջուր՝
Թողու զսա պըղտոր, մահուամբ զայն ելից:

Որ գիտես քանի՛ բոյդ ակնարկութիւն
Ծածկիցէ այս ձիւն տանիս, արտավար,
Քանի պաղիցին առուակք քաղցրահոս
Թրուչնեկին խուզ և մարգաց դալար:

Որ մինչ հիւսիսոյ ասես թէ «Ճընչեա»,
Կընքեալ է յոր դէմ, յոր մայրիս, յոր թուփ,
Քանի վարդենեաց թափեացէ բաժակ
Կամ ցընդէ փետուրս և ծաղկունս իծուփ:

Փետուրս՝ զոր հաւիկն յիւր եթող իշուն,
՝Ի մերս արդ զոփալ՝ նա երգէ իջեր.
Ծաղկունս՝ որք խամրեալ, բայց յիւրեանց իսերմն
Փրթթեացին դարձեալ, թոյր և բոյր յայեր:

Այլ ինթոթափել և մեր սիրելեաց,
Որոց մեք սրրտին՝ մերոյս նոքա զարդ,
Թորոց առնուաք ըզջուր կամ զբստուեր,
Եւ իմէնջ իբաց անկան տարապարտ . . .

Երբ կապուտ յոգւոցքս խինդ և սփոփանք,
Թևք՝ յորոց ՄԵՄև սլացեալ տանէին,
Հայիմք շուրջ սիրոյն յայնքան աւերակս,
Զիք որ խոստանայ դարձ, կեանք վերստին...

Տէր, զայս մեր եւեթ տեսանիցեն աչք,
Զի արտասուս ցանգ հոսեսցեն եղերք.
Իսկ ոյր այց գըթոյդ է առհաւատչեայ՝
Դէտակն իՓո լոյս յուսոյն իւր ընդ ծերպ.
Տէր, տեսցես Դու Երբ:

Իխաթարեալն արտ մինչ դիտէ մըշակ՝
Ըզգենու ըզլոյս ամուլն անդ երէզ.
Հանգոյն և իմեր Մէ նայիս աղէտ՝
Յակոսից վըշտաց խինդք բուսցին և մեզ.
Ո՛հ, Երբ, Երբ տեսցես:

ՅԱՂԹԸ.

ԲՆՈՒԹԻՒՆՔ

ԿԱՄ

ՄԵԾՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՅ

Մարդ՝ բնութեան ծնունդ և տէր:

ԼԱՄԱՐԹԻՆ

Ա.

Երբեմն իբնութեան համատարած անդր յերևոյթ
Կըրկնատեսակ զաչս իմ յառեալ փոյթ ընդ փոյթ,
Իմեծասքանչ զիշերոյն ծալ իծալ քող,
Զորով ակունք ընդելուզեալ՝ մէն մի արփիք են իշող.
Արփական գունդ լուսավառ,
Որ զմիջոցին անբաւութիւն լցեալ ծածկէ անբասպառ.

Ընդ բարձրութիւն՝ որ ընդ երկին և երկիր,
Եւ ընդ լերինս՝ որ երկոցուն Թըւին արկեալ ծոցալիր.
Յահեղազօր ծովուց շառաչ և ծըփանս,
Որ հատանեն զաչաց սահմանս.
Իստորերկրեայ հուր բոցալոյս,
Որ երկրաձոյլ շանթք արձակին յերկնից կոյս.
Ընդ գետս՝ լերանց խարիսխ պաղպաջափայլ և անկայուն,
Որ Թրուչանաց նոցուն 'դ երկինս՝ Թըւին զերկրաւ շուք զընայուն.
Ընդ անապատս անպարագիծ՝ ովկեանս ահեղ աւազոյ,
Իբրև ըզնաձրփանուտ, և որ ըզհետս ծածկեն մարդոյ.
Ընդ անդունդս, յորոց իբուն
Լերինք հալեալ յոչէութիւն,
Եամ յերկինս ընդոստուցեալ նոր կայանից առ իխընդիր՝
Զհաստաբեստ հատորս իւրեանց շառաչեսցեն յաստեղսն իցիր.
Ընդ ահեղ խոխոմաձիգս սահանք Թափին արդ յայն անդունդ՝
Կազմել ծով յորձանաձնունդ.

Դարուց իդարբա ջրրվէժքն այն ոչ պակասին,
Այլ դեռ յատակս անդ ոչ հասին . . .
Ցայն զահավէժ սոսկացեալ աչք խորխորատ
խուճապին, ոտք ընկրրկին անհաստատ,
Եւ ձեռք հարեալ իճակատու յափշութիւն՝
Գոչեմ. Մեծ, մեծ ես, Բնութիւն :—

Բ.

Այլ Բընութիւն ահեղազօրն և անծայր
Լերամբք խորովք և աստեղօք իւր անվայր,
Բնութիւն դեռ չէ միայնակ,
Նախանձորդին իւր մատչելով ըսպասեակ,
Մինչ տիեզերք ընդ երկոցուն բաժանին,
Նա զըզգալին, սա կէտ ունի զիմանալին.
Եւ երկոցուն ծագ անհաւ
ՑԱստուածութեան անդ եղաւ.
Երկնից երկրի պատկառութիւն
Այս աւասիկ Մարդկութիւն.

Մարդկութիւն տրկարութեամբն իւր և համայն
նրբազութեամբ,
Ընդ ոչէս և զոյութիւն, յեղեալսն և յԷն հրաշաձոյլ
լամբ,
Եւ սքանչելւոյն իսկ Բընութեան սքանչելիք.
Չմեծութիւն նորա համայն, ըզլայնութիւն և զխոր-
րոտիք
Իմի ևեթ խինձ կամ անկիւն
Ամփոփեալ բովանդակէ, որ անարիւն
Քան ըզծերպիկ արդեօք սարդին,
Եւ յեղյեղուկ և նրբրբին
Քան զկրթուիթ առէջս անկեալ անդ ոստայնի՝
Զոր դոյզն հողմիկ առեալ տանի:
Բայց ՝ն դ հոգւոյն է անկիւն,
Մեծն անդ բնակէ Մարդկութիւն:
Առ դովաւ, առ աւազին իմն առ հատիւ
Եւ զաղփաղփուն քան զունգ և խուիւ
Արձանացեալ՝ մեծին զոչեմ առ Բնութիւն,
Մեծ . . . ով մեծ է Մարդկութիւն:

Գ.

Մեծ է մարդ, յորոյ հանդէպ յաւերժաբար
Կայ մեծութեան իւր գաղափար.
Ոգի, որ զԱստուծոյ մեծ և զանհուն
Բերէ զպատկեր յանձին իրուն.
Միրտ, յոր որչափ իղձք և թափին՝
Միշտ ընդ երեսաս նորա զերդ տերև ծլփին.
Եւ՝ իւ լընուն տիեզերք՝ երկին հատնայն և երկիր
Զբաւեն յուսոյն նորա լիր.
Բիբք՝ արձակեալ մեծասլաց
Ոչ շրջանան յաստեղաց.
Յորոյ իմիտան անդ ճանանչէ հեզական
Լուսոյ նըշոյլ Աստուածութեան,
Անդ յաւէտ անմահութեան տիպ գերակայ
Քան յՈվկէան բան ընդ երկին ցոլանայ։

Դ.

Մեծ է մարդ, մեծ ինքնաստ տրկարութեան.
Զի թէպէտ և ընդ կարեօք ուրեմն անկեալ վարանա-
կան,
Միտք խաւարաւ սահմանակից,
Զոգւոյն, զերեսօք վերաշնչեալ ծուխք կրրից՝
Յորժամ ունի զտրկարութեան գիտակցութիւն,
Յորժամ բրբացն իմիգամած մրթութիւն
Յոգւոց տրխուր ելանէ.
Յորժամ ըստգիւտ և դրժկամակ անձամբ յանձնէ՝
Անէ գվայրօք աչս անբստոյգ,
Եւ ըզսրրտիւն արտօսր առոյգ.
Ո՛հ, ոչ այն մեծ հեծութիւնք
Իւր ապագայց խարբսխին սիւնք
Իծրփանուտն իսրրտէն
Մինչ իկամարն աստուածեղէն.
Ո՞չ յարտասուաց այն ընտանի
Անմահութեան շող հատանի:

Կաղնին, որ փոքր աչաց Թըւիցի անդ լերինն իծայր,
Տապարահատ՝ զըլեալ Թաւալ զըլուխ իվայր
Զհովիտն ողջոյն լընու իրան.
Եւ յաւերակս, սիւնս և կոթողս հրաշազան
Աչք նըկատեն՝ Թէ զոր երբեմն բարձր ընդ այեր
Մեծութիւն ճոխ և ակնածու շուք ծաւալէր.
Զի և յաւերսն անդրստին
Մեծութիւն և հովանին բազմադարեան իւր ամփոփին:

Մեծ է Մարդ, մեծ՝ որ խոնարհ իվիշտ երկանց
Ըզմեծութիւն իւր ըզդայ և գնայ ընդ այն մեծապանծ,
Որպէս զի սին առ նուաւ Բնութիւն Թըւի լայնատարած,

Որ զմեծութեան իւրոյ բընաւ չունի զգացուած,
Որ պիտակ տանի ըզդոյն կերպարան
Իբրև ըստուեր անկենդան արկեալ մարդոյն մեծութեան.

Մարդոյն, որ ոչ ևեթ ըզժամանակս առաջակաց,
Այլ յանձնէ և զապագայց իղձ լինի լի զանհուն տարած,

Զայն՝ որ ևեթ արժանաւոր իցէ պարփակ՝
Զ Մարդկութեան միտս ընդարձակ:

Յայդ ըզգացուած եռանդուն
Արձակ արձակ ծաւալ առնու սիրտ նորուն,
Եւ մեծասքանչ առաքինի արգասիք
Ազնըւական իւրոյ բնութեան երկք և կնիք
Ֆան զինքն յառաջ յանմահութեան մըտին դրունս,
Իբրու յաննիւթ ոգւոյն մասունս
Զանջրրպետ անհասական լրցեալ ընդ մահ և ընդ
կեանս,
Մինչդեռ ինքն իխոնարհ մահաշրջունչ անդէ կայանս.
Հանգոյն՝ արփւոյն ցոլք լուսալիր
Զամբաւ լրցեալ ըզմիջոցն և աննըսեմ ցըրին յերկիր.
Որպիսի պայծառութիւն մեծածաւալ է արփւոյ,
Ֆանիշն և մեծութիւն իցէ մարդոյ:

Ե.

Մեծ է մարդ.—փոքր ինչ կայլակն իցէ ցօղոյն,
Որ յայգս այգուն իջեալ իծնօտրս սիգոյն.
Այլ որ ոչ ինչ անդ իկոճակրս ծովուն էր՝
Զոր վերածեաց իգոլոշի արևուն տապ յելս իւր իվեր.

Եւ անանուն անիրան
Զօղովքն յածեալ Թափառական,
Վարեալ իսիւք առաւօտուն
Հրպաւ յերկիր և զընդեցաւ մարմին Թաղուն,
Եւ ոչ բաւեալ ինքն իբեռին իւր կըշիռ
Վարդին ԻԹերԹս անկաւ ցիր.
Արդ դուզնաքեայ իցէ նա շիԹ,
Այլ շողշողայ քան ըզգոհար մարգարիտ,
Դոյզն, այլ զարփուոյն ցոլս համայն տայ,
Դոյզն, այլ զերկնից բովանդակէ ըզսահման նայ.
Դոյզն, այլ և մեծն ինմա գըլի Ովկէան,
Որ ոչ ինչ ինմա կորոյս՝ մինչ իծոցոյն ըզնա ե-
հան:

Դոյզն է և մարդ յանչափուԹեան անդ լրծակ.
Դոյզն այլ անչափն ինմա գիմակ
Եւ տիեզերք զան անդրադարձ.
Դոյզն, այլ ոչինչն ինմանէ փախստական առնէ
դարձ՝

Որչափ յԷէն սա չէ հեռի.
Եւ ժամ իժամ յաղբիւր իւր անդըր բերի,
Մինչ մեծ ԲնուԹիւն նըւաղի զամ քան ըզգամ
Իբր ըզբարբաւ զեղեցկալուր յոր խընդամ,

Այլ հետըզհետ աղօտացեալ ըսպառի,
Մէն մի ամբ կորզեն կապտեն ինչ բարի,
Եւ Բնութիւն՝ ոչ ինոյն փառք
Զոր պատմէին առ մեզ հարք.
Բաբէ, ոչ նոյն զոր իմս ետես արշալոյս
Եւ զոր չեւ դեռ միջօրեայ դիտէ զայժմոյս.
Երկին ոչ նոյնպէս պայծառ,
Լուսնի ոչ հեզաձաւալ շողքն այն հեղեալ մըխիթար,
Գարուն սուղ, ահ, արտասուաց միայն բերող,
Եւ ոչ գիւեղեալ տընկովք հեղեալ բարեկամ ցող.
Աչք ոչ ինչ արդ նըկատեն՝ բայց քող ամպոց արտասուաբեր,
Որ զխինդ համայն հարուն սըրտի զաւիւն ջեր:
Իսկ զի զոռոզ պարծի համայն իսկ Բնութիւն.
Մեծ է մարդ որչափ տեսիլն իւր նըկուն.

∴

Աստեղք , տեսէք դուք ըզնա .
Բայց ակնարկէ նա ըզձեզ ,
Օրէնքդ իյայտ են նըմա ,
Գլծէ շաւիղ յամպոց դէզ
Ձեզ զուր յաչաց իւր Ցազչիք ,
Իձերդ յառի նա իկնիք .
Ձինչ առ նովաւ իցէք դուք ,
Ամենատեսն այն աչաց .
Բիրք նորա են լուսոյ առուք
Դիտողք ձերոցըդ գաղտնեաց :

Ձինչ առ նովաւ կարծիք դուք
Թէ և փայլեալ ջան ըզջան .
Անշէջ լուսոյն էք սին շուք ,
Կամ մուԹ փոշիք իդիզան՝
Ցորս հարեալ շողք Անմահին
Ցականողիս մեր սահին :
Այո, իբիծդ և յօրհաս՝
Ձեղծմունըք ձեր ընԹեռնուն .
Գիտէք զոգւոց մեր սարաս՝
Թէ և կարծիմք առ ձեզ խուն :

Վերինք, որ զսէգ դարաւանդս՝
Արհամարհեալ ըզմարդկամբ՝
Իբրու երկնից տայք աւանդս,
Վիհս հետ Թողեալ, սառն և ամբ.
Մի բան Թէ զբիբս իւր բարձունք
Ձեր Թրուչիցին գագաթունք.
Պըսակս ըզձեր կոխեաց նայ.
Նա ըզձեր էառ չափ արդեամբ,
Զի խոնարհ էք՝ւի բացեայ
Քան զիւր մըտաց բարձրութեամբ:

Ծովք, զի սպառնայք բարձրագոչ
Լոյծ իծոցոյդ պինդ մահունս.
Նա իմահուդ անդ խորոչ՝
Շարժուն ձրգէ տան հիմունս,
Շըղթայս զալեօքդ արկանէ,
Զըրովքդ ըզջուր ձեր վանէ,
Եւ ըզկարծեալսդ անջրպետ
Ընդ սիրելիսն համայն եդ,
Գործէ կամուրջ ինքնակերտ
Ձեր զերութեամբ յակատայս:

Հողմք , որ զմայրիս շառաչուն
Բաղխեալ կործան տապալէք ,
Զի առ բբրգամբքբն նորուն
Մին իզայրոյթ հեծիցէք .
Նա զձեր կորզէ յինքն ըզթեւս
Ցանդունդս երկու գնալ թեթեւս .
Արծւոյն յաղթէ սուր իթիւռ
Եւ վիշապին ընդ փբրփուր ,
Մինչ իմբտացն իւր կբշիռ
Թեւէ , վայրի յօդն, իջուրս :

Ամպք , զի դիզեալ սար իսար .
Որոտընդոստդ այդ շառաչ
Նբմ՝ աւետեաց է բարբառ ,
Զի գայք իսպառ ընդ առաջ,
Արբուցանել զդաշտ , ըզտունկս ,
Զարթուցանել ծիլս և խունկս ,
Զի ոչ թէ լոկ զիւր կարիս
Այլ և ըզհեշտան իլընուլ ,
Եւ իփափուկ դալարիս
Բերել նմա կաթն և ուլ :

Շանթք, որ՝ հրաճօճ ձեր գալարս
Մահունս շեշտէք՝ ւարհաւիր,
Մաշէք կոխէք բարձր անտառս,
Առ նովաւ էք առաւիր.
Իբր յերիվար սիգապանձ
Մարդն և իձեզ արկ ըզսանձ.
Եւ յոր փոքրիկ տընկէ ցուպ
Քան թէ թըռչնոց՝ ձեզ խըրտուիլ,
Ցահ սասանիք ծուփ իծուփ,
Փըշրի մահուդ անդ մագիլ։—

∴

Ոչ մարդոյ՝ չիք յուստեքէ երկիւղ և հոյն.
Արփող երկին կամ միգամած, դաշտ՝ ւաւիւայք՝
են հանգոյն.
Սիրտն ևեթ, սիրտն իւր անձին փառք, դառըն զիղջ
Գիրգն այն՝ յորժամ կոչի խիղճ.

Զաւի՝ որ յԱստուած եւեթ ունի զբազմապատիկս.
Կըշիռ՝ համայն ինչ յոր անկեալ ցուցանէ զչափս
իւր բընիկս.
Գահոյք անզարդ անպատուանդան՝
Յոր բազմի Էին լուսոյ շող իդատման.
Ապակի՝ նդ որ երեւին մանրանըկար
Աջ և ահեակ ապագայից, լոյս կամ մըթար,
Որոյ վրձիտ երևոյթք ոչ իյամպոց անդ կարեաց
Աղօտասցի երբէք ոչ, և կամ իմռայլ ժամանակաց։

Ժամանակ... երկիւղագին արդեօք իցես քան
ըզբնաւ,
Ում յասպարէզ ներգործութեանցըդ Բընութիւն Թը-
ւի սակաւ.
Իմէն մի քո ոտընիոխս և խաւարի շող իմն հա-
մայն,
Խամրի ծաղիկ, և ներդաշնակ գելու ձայն,
Բայց առ նովաւ իզուր Թերևս
Փորձես ըզմութ և զանշըշուկդ հարկանել Թևս.

Ոչ ինա փայլ նըւազի,
Ցանշէջ լուսոյն յայն հատուած.
Եւ ոչ բարբառ կամ աղի
Իքնար լարեաց զոր Աստուած,
Այլ դու անկցիս, ժամանակ,
Ընդ մեծ բնութեան զոր սպառես.
Եւ յանհուն քոյդ յաւերակ
Ցոլասցի մարդ պարզերես,
Ցորժամ մեծն այն և սքանչելին իբնութեան՝
Մեծ և իծոց անդ փայլեսցի անմահութեան,
Ընդ մէջ կըրկին իսկ կենաց,
ՑԱստուած, դարձեալ և յԱստուած:

ՏԱՂ Մ.

ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Հարաւ շեփոր . . . —Քանջք իմ, լլաւյք,
Յերկնից այդ շունչ փողեցաւ, Հայք,
Որ և իմերդ արդ փարի՛վառաւ,
Եւ բորբոքէ զսիրտ բոցավառաւ :

Հապա յառաջ
Մանկունք իմ քաջ :

Իբրեւ ըզմէջ վաղորդայնի՝
Իդոյն յայդ շունչ՝ մահ հարկանի.
Եւ յետոյ իմէնջ առնելով խոյս,
Հեղաւ Պարսից իգունդս անյոյս՝

Հապա յառաջ
Զօրակունք քաջ :

Հապ՝ ծն յառաջ . . . զէնք ձեր սրրեալ
Ի հաւատոց են լուսափայլ.
Եւ բարկութիւն աստուածազայր
Խուսեցացդ հանգչի իսայր :

Հապա յառաջ
Մարտիկք իմ քաջ :

Ով Հայկազունք, յառաջ, յառաջ,
Խաչս իճակատ, իրանջրս Խաչ,
Զի զնա սանդուխ կալցուք յերկին՝
Պարսի՛լ զազաթք զոտիւք պիտին։

Հնպա յառաջ
Ընկեր իմ քաջ։

Իշարժ քայլիցդ ըսկայարշաւ
Երկիր ինթունդ եւ դող հարաւ,
Գոռան երկինք ընդ ձեզ իմարտ,
Ըշկահեցէք սուր եւ գեղարդ։

Հնպա յառաջ
Հայազունդ քաջ։

Հայրդ մանկունք, ծն անդր յառաջ,
Ոտք իսիառաց ռահս աննահանջ.
Ոչ, չիք ձեզ մահ, այլ յաղթանակք,
Սնա յերկնից հոսին պլսակք։

Հնպա յառաջ
Նահատակք քաջ։

ՏԱՂ ԾԱ.

ԱՌ ՍԻՐՈՂՆ ՔՆԱՐԻՍ

Մ. Ա.

Քոյդ սէր անկեղծ պատարուն
Սրրտիդ պայծառ իսափոր,
Ջեղաւ առ իս պաղպաջուն
Ոսկի ալեօք լուսաւոր:

Ես զերդ ըզթուի սաղարթուն
Ցեզր հովանուտ ծրմակին,
Իսես յանկարծ ջուրց սահուն
Իխինդ առ քև խոնարհիմ:

Դու ջինջ սրրտիդ իբիւրեղ
Ջիմ թէ պատկեր սիրիցես
Տալ անդրադարձ նոր իզեղ,
Այլ այդ՝ իքոյդ է երես:

Ականակիտ քո վիժակ
Թէ և զեռեալ ընդ երէզ՝
Բայց յերկնափայլդ իղիմակ
Հոսի զբուարթ քան 'դ պարտէզ :

Իմ իբր ըզսիրդ մենաւոր
Ի ճեմ յարօտս անտէրունչ՝
Ընդ թև նոճուոյն սրգաւոր
Թափառական փարէր շունչ.

Ֆոյդ թէ յընթացս անդ ցօղուն
Զիւր վարդափայլ բաժակին
Սըրսկեաց ըզհոտ սիրասուն՝
Ո՞ր իմ խնկոցդ է բաժին :

Բայց ըզսիրոյդ քո զայդ ըոյր՝
Սըրտիդ մասունք ոգելից՝
Ցիմոյ ոգւոցս իսիետուր
Ո՜հ, ըզմայլմամբ վերառից .

Եւ սիրեցից զիմ մարմանդ
Ֆան զվարդախիտ բուրաստան ,
Զի ինձ զորով սըրտիդ անդ
Փըթթի զբուարթ քան շուշան :

Զայդ քո ըղձից ծաղկափունջ
Դրասանգ յեռեալ յիմ քընար,
Թելից սորին իմբրմունջ՝
Ելցէ քո բոյր զովարար։

Եւ ցող սիրոյդ շողշողուն՝
Ցոր արդ փայլին բիբք սըրտիդ
Իցոլից նոր այս այգուն՝
Զոգւովս հեղեալ մարգարիտ.

Ո՜հ նոյն իսկայլ վարդազոյն
Եւ սիրալիր ինոյն բոյր
Մինչ յիմ յետին շող այգոյն
Ո՛տայր սըրտիս իհամբոյր։



ՏԱՂԵՐ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՆ



«Գործակից եմք Աստուծոյ.»
Ս. ՊՕՂ.

Աննիւթ զոյին տալ ըզդիմակն էակից,
Զաստուածականըն բոց զոգւոյն արծարծել,
Զվայրավատին ճանանչն յերկին արձակել՝
Արարչական երկանցն է զոլ գործակից:

Սերմն արգաւանդ ծրարեալ յանձին բովանդակ
Ըզվեհական իւրեան ըզբաղդն է հոգին,
Զայդ յոչընչէ՝ բաղեաց անդուստ աջ Վեհին,
Իսկ զապազայ նորին՝ քեզ յանձն ետ, մըշակ.

Քեզ դա ելցէ սաղարթազեղ ծառ վրսեմ,
Քև՝ բուրեսցէ ծաղիկ, զոր՝ Տէր ետ քեզ ծիլ,
Քև՝ ամբարձցի շինուածն՝ ում Տէր եդ ըզվէմ:

Հաւասարորդ ընդ քեզ յայնժամ նըստցի Տէր,
Եւ ինքն ըզփառս անտի առեալ իւր բաժին,
Քեզ՝ ըզծաղկունս նոցին տացէ և ըզսէր :



ՏԱՂ ԾԳ.

—

ԱՌ ՄԱՇՃՕՔ ՔԵՌՆ.



Մինչ ցաւագին հառաչքդ ընդ շուրթ դողդոջուն
Հոգւոյս հատոր, զիմ սիրտ զելուն,
Մինչ զարտասուօք լըցեալ զիմ աչս յառեմ պիշ
Իբիբս անդ քո ուր գոյ հազիւ կենաց նիշ,
Եւ որոնեմ իմահատիպ քո ճակատ
Հետս ինչ զաւուրցն ուրախութեան լուսահատ,
Զորովք անցեալ Թախիծք՝ զերդ հողմն աշնանի՝
Թօթափեցին ծաղկունս ժըմիտս այնքանի . . .

Մինչ ձեռն իմ, ոհ, նեցուկ տըկար և դողդոջ,
Ըզսիրեցեալ գլուխդ ամբառնալ բաւէ ոչ,
Ըզգլուխ՝ յոր վիշտք և ցաւք հարին ծանրացան,
Եւ ըզմահուն արդ բարձ Թողուն յենարան . . .
Հեղձամըղձուկ եղբօրդ ըզձայն աղէ լուր
Մինչ չև խապառ համրի լուռ . . . :

Ո՜հ . . . ո՛հ այն յորժամ ոգիդ քո վակժոյժ
Զերդ յերեսաց սառնամանեաց սիրն անոյշ ,
Անցցէ՝ Ծողեալ զասառեաց ձըմեռն և ըզպաղ,
Ցոր հանդուրժէ ոչ քո ոգիդ սուրբ մատաղ . . .
Ցորժամ իձայն յարիշտակեալ Զբուարթնոյն
Մոռանայցես զերկիր , ըզցաւս և ըզհոյն ,
Առ ո՛ յայնժամ սըզաստարտուռ այս քընար
Զոյր քո՛ ևեթ ժըպիտ Ծըրծռել տայր ըզլար .
Առ ո՛ այս քնար՝ զոր կոչեմք սիրտ , ո՛հ առ ո՛վ ,
Մինչ զերդ սափոր մի փըշրեալ կայ զշիրմաւ քո՛վ...
Զշիրմաւ . . . ո՛հ զայդ տեսից բացեալ տարաժամ ,
Եւ ես եղբայրս Ծէ՛ զքեզ չունիմ , աստ ո՛ւմ կամ . . .

ՏԱՂ ԾԴ.

ՀԱՆՃԱՐՆ

Ա. Ռ Ա. Գ.



Qu'il est beau de voler dans la noble carrière! MUSSET.

Ոհ՝, յանշաւիղ յաստեաց ուղին
Ուր յամենայն կողմանըս հետք աղամողին,
Ուր ընդ յաճախ խոչս յառապար
Փաջազին իսկ ոչ զընան ոտք անսայթաք,
Ուր եւ այերք զոր շուրջ ծրծեմք
Ծանրեալ հակեն զթեւոց ծրդիս,
Ցորում նշոյլք մեզ խոստացեալ լուսաւոր՝
Նուազին յաճախ ըստուերամած,
Եւ ոչ համայն ուրեք թափանց,
Եւ ոչ զամէն պահ ըզգըլխով մեր ցոլանան.

Ոհ՜, աստ մեզ պէտս են առաջնորդք
Պէտք զի ըզծունկս ոք կրթոտեալս զօրացուցէ,
Ոք՝ զի կալեալ ըզցուպ հանդէպ
Իբրեւ երբեմն Իսրայելին առաջնորդ,
Հարկանելի ուղւոյն գնայցէ կարապետել.
Կամ ընդ անուն իզօրավիզն աջակցելով
Եւ կամ իգիրկըս վերամբարձ
Մայրօրինակ զրթասէր,
Ջնորափետուր ձագս ընդ թեւովք
Հանգոյն հաւուն խընամարկու
Անընդել ասպարիզին լիցի վարժող:

Զի ոչ համայն ուրեք ուղին միահետ,
Ոչ նոյն համայն զայթակղութիւնք.
Այլ մերթ անկոխ ապալեր,
Մերթ անապատք անզրաւական,
Թորձանազայր գետոց զբրդանք,
Կամ անջրդի վէմք ապառաժ,
Ալէխրոխտ ծովք անդնդախոր,
Եւ լերանց դիպին մըռայլք ըստուերաձիգ:

Աւանիկ այս են հանգրըւանք աստեաց յղուիս,
Թոռս յաւուրց անտի պանդուխտ Յակոբայ տան
Մերձ ընդ մերձ փոփոխէ ազգ մարդկութեան,

Եւ Մովսիսի ձեռին համայն են մեզ պէտք
Զի Թեւս իմեր անդ կապիցէ զարշապար,
Անթաց յալիս անցանել,
Թուսոյն ըզջան տանել յամայս,
Զերկայնութիւն ուղւոյն լինել լուսատու,
Եւ զապառաժս հարթ իյատակ՝
Թամուլ ծոցոյն ըզհաւատոց ցայտել զերակ։

Ոչ՝ այսպէս, ոչ կեղակարծ
Եւ այն շաւիղ որ քեզ յորդեալ արդ ընդ առաջ.
Ոչ լերանց եւ ամայից անբաւութիւնք
Անջըրպետք իցեն հանդէպ,
Որ զապազայս պարուրելով
Թաչաց տրխուր ուղևորին
Զսըրտին իսէթ ծածանիցեն ցանգ նըժար.
Այլ անխոտոր և երկնընթաց պողոտայ
Լուսատիպ ահա պարզի քեզ յանդիման,
Ճանապարհ կըցորդութեան
Ընդ Անսահմանն և եղական հոգւոց իմէջ։

Զի, պարմանիդ, յինէն զի Թեւս հայցիցես
Եւ ուղեցոյց յայն ձեռընկալ,
Հանճարոյ իցեն ինչ պէտք Թեւք եկամուտ,
Մինչ ինքն համայն Թեթեւաթռիչ

Անառաջնորդ շեշտ իբարձունքս սուրանայ :
Գամ բան ըզգաս դեռաբուսիկ՝
Ձ՝ընճըղկանց Թեւքն են անզօր,
Որ իպաշտպան և ոչ իփառս առին ըզԹռիչ,
Հանճար՝ արծուին է վրսեմ,
Որոյ նախկին իղձ ընդաբոյս՝
Արհամարհել զբստուերանիստ դիւրն ըզխոնարհ,
Եւ զերաԹռիչքն խոյանօք երկնանալ,
Անդուստ՝ բբբացն իհիւռ նախահայեաց
Զարեգն առնուլ չափ նրպատակ,
Եւ զնոլաԹևքս տարածել ամպախաղաց :

Այդ բորբոք որ արդ իլանջ քոյին իծուի
Մեծամեծ տայ բաբախել,
Այդ եռանդքն նախարծարծ
Ըզմահածին ճախր ընդ օդովքքս սլանալ՝
Այդ հանճարոյ խանդք են և Թռիչ,
Որ իբր ըզբոց սրբբամաքուր
Երկնապող ծայրիւք նրբբին
Շեշտ յարփին սուրայ ոյր մասն է համաբուն,
Եւ շրջաւիՀուն իսկ ջեռուցեալ ծանրբ զայեր :

Արծուիդ և բոց, քեզ զՀնչ վարժից լիցին պէտք
Երբ ակքն քո յերկինս իվեր է վրսեմ.

Երբ յանմատոյց և բարձրաբերձ ափափայս
Անժամանակն յաւիտենից
Անդ բոյնդ իցէ քո ծընընդոց
Ուր ևեթ ամիտփին քո վարազաթևք .
Երբ զոր շընչեմք ասա այերք
Թանձրամնած են և անաւրք,
Իսկ քոյդ՝ թեթև և ջինջ յէրան երկնասիւզ
Ըզբարախիւն տացէ քեզ սիրտ .
Երբ բիրք տրւան քեզ լուսահիւռ
Ում՝ ըստմանէս՝ աղօտ թրւի առկայծեալ ,
Զի յանբատուերն անդ պիշ իլոյս կայ քեզ յառել
Ցոր հարեալ և բրլշակնին
Աչք ընդ որ մահ կարապետէ նրսեմ մրթար ,
Եւ ինքն ըզհետ անցցէ համայն իւր ըստուերաւ:

Օն թռիցուք . — մի և եթ շող իճակատում
Անդուստ երբեմն առբերելով իվայրէջ
Մինէականրն տեսանող՝
Ահաբեկեալ պակեան ազինք անդ իզող :

Օն թռիցուք . — զի բնաւ յերեսս
Ասա վարիցիմք պատրբւակաւ ,
Մինչ զառ իմեզ ցոլեալ նրշոյլ՝

Հոգւոց անտի իհայելեաց
Կարիցեմք յակն անդէն և մեք տալ անդրադարձ,
Ըզճառագայթն անջատ իլոյսն անդրէն խառնեալ:

Օն Թռիցուք. — զի բարձրաբերձ այն զազաթունք
Մեզ Փորեբայ են կատարք
Աստուածութեան պատուանդանք.
Անդ մերձազոյնք ևս հանդիպիմք Աստուծոյ,
Եւ դողդոջուն մեր արձագանգք
Զայն մի ևևս յաւելուցուն
Մշտամբռունչ յայն ալելուն:



ՅԱՂՄԵ.

ԱՍՏՂՆ ԵՐԵԿՈՅԻ

Ա.Ռ Մ. Ջ.

Խաղաղական դու ժամուց
Աստղիկ, հրեշտակ լուսաթեւ,
Ով՞ խորանին անարեւ
Ջահ դու պայծառ նախալոյց,
Աստղիկ, դու սէր գիշերաց,
Ո՜հ, դու անուրջք ես վշտաց:

Ջրքնաղ կոյս, որ իճակատ
Տանիս ըզլոյս հիւս իհիւս,
Ապագայից իբր իկիւս
Սիրտ քեզ հայի խանդահրատ,
Երբ մեզ բանաս յանդիման
Ըզգիշերաց սըրսկապան:

Ցայգուէ տիոցս աչք իքոյդ
Ըզմայլէին շնորհս ու գեղ,
Աչք իմ վրճիտ և անմեղ
Անբացք յայլ բանյց իգեղոյդ.
Եւ արդ ոհ բիւրս տեսի ես,
Այլ ոչ գեղ սուրբ իբր ըզքեզ :

Ոչ զոք հանգէտ քեզ պայծառ,
Ոչ սրբտառուչ զոք հանգէտ,
Հաւասար ոչ զոք յաւէտ,
Եւ իբր ըզքեզ յանշէջ վառ,
Ոչ զոք իկրից շունչ կամ մեղծ
Տևող իփայլ 'հուր անեղծ :

Դու վեր քան զամպս և շոգի՝
Որ զամենայն պատեն մեր,
Աչացդ յակինթ լուսայեռ
Աստեաց իստուերք չաղօտի.
'Ի ոչ մեր մրրիկք շանթք և գանգք
Առ քև ունին արձագանգք :

Դու զերդ շուշան լուսազգեաց
Իմարգ խոտոց ծըմակին,
Կամ օրիորդ սիրային

Ճրքեղ՝ իպար գեղանեաց,
Աստղիկ, յաստեղց բոյլս անդ խիտ
Զարդ ես նոցին և ժրպիտ:

Ցարդ ես իքոյդ պրշնում լոյս,
Ցարդ սրխրանայ սիրտս իքեզ,
Սիրտ՝ ոչ մանկան անախտ հեզ,
Աչք՝ որ գիտեն զարտասուս . . .
Բայց դեռ ըզքեզ ես սիրեմ
Դեռ առ բրբոքդ երազեմ:

Առ շող կանխեմ ես քոյին,
Թէպէտ ոչ ես ինոյն վայր,
Ոչ՛ ես ընդ իմ քաղցրիկ մայր
Ցաղօթս իքո նրշուլին.
Եւ դաստքս յերկին դողդոջուն՝
Ոչ ես ի ծղիս են նորուն:

Սիրեմ ըզքեզ դեռ սրտիւ
Որ իբր ըզբոց մի ծեծեւ
Ցերկին ուղղէ ցանգ ըզծեւ,
Ցերկին՝ զոյր դրամբ լուսայնիւ
Կանգնիս յերկիր դու խօսնակ
Բաստիցն իկայս հրաւիրակ:

Ցորժամ ցաւոց գիս բեռինք
Ընկճեն, և սիրտ իմ կայ լուռ
Իբր անապատ մի տրխուր,
Եւ որ գիտէն որ գիս չիք,
Ձիք բազմածուփ որ ոգւոյս
Միւք մի շընչէ և կամ յոյս . . .

Ցորժամ ըզքայլս իմ կրթոտ
Շարժեմ յերկիր որ ոչ իմ,
Եւ մենաւոր երերիմ,
Ցամայս որ չեն ինձ ծանօթ,
Եւ չիք որ տայն առ իս աջ,
Կամ ասէ «Քաջ լեր . . . յառաջ»:

Բայց դեռ քեզ բիբքս իխնդիր,
Սիրտս իհայց քոյդ է լուսոյ,
Շող դու նմին լեր յուսոյ,
Ձերկնից սիրոյն խօսեսջիր . . .
'Ի իխորս հոգւոյս որ ծըփայ՝
Ձանդորր ոհ քո ծաւալեայ:

ՏԱՂ ԾՔ.

ԱՌ ՎԻՔԹՈՐ ՀԻՒԿՈՅ



Ա.

Եռապըսակ քում ճակատուն՝
Սիրոյ, Փառաց և Հանճարոյ սրբատուն,
Թող ինձ, Պլուէտ, սրբտիս իխանդ
Հայ բարբառով ձօնել ողջոյն սրբտեռանդ:
Որ քերթողաց դարուս իճահ
Պըսակազարդ փառօք բազմիս գերագահ,
Մի քեզ Թլուի ծանր իմ լեզու
Որ Նախաստեղծ է շրրթանց ձօն երկնատու,
Ցոյց քերթուքիւն առեալ ըզվանգ,
Ցաղին այերս ետ նախընծայ արձագանգ,
Առաջնատրոփ երբ սիրտ մարդոյ
Բնագաւառին զանգէր Հայոցս իմոյ:

Ո՜հ, թէ բամբիռն արդ հայաթել
Ծածկի իմէնջ զերդ Տապանակն յԻսրայէլ,
Այլ դեռ շընչէ սիւգն Եդեմեան,
Դեռ իմ պէս սիրտք՝ ձայնիդ իլուր ըզթինդ տան:
Ո՛վ, թէ թըրթռուն իքնար քոյին
Դրախտին առ դուրս մատունքդ ի թիռ խայտային՝
Իսըրտառուչ դաշնակիդ լուր
Արգահատէր և սէրովբէն բոցասուր:
Ղեւտացիդ դու մարդկութեան՝
Եդեմատենչ սըրտից բուրվառք քեզ տըւան,
Յոր զաստուածեանն արկեալ սուրբ հուր,
Էին յաթոռ բարդես զըղձից խունկ մաքուր,
Եւ վեհավայր զերաժըշտաց
Հարեալ ըզմատն հնչես նախերգս եթերաց:
Երազասլաց հոգւոյդ իբոց
Մերթ զերեսօք հոլաթևեալ զանցելոց,
Մերթ շեշտ իծոց ապազային
Թափանց բըբօք սուր խոյացեալ բան զարծուին,
Պատգամ վըսեմ մեզ առբերես
Ընծայելով հոգւոյն զերեակ դէմս իքեզ.
Թախիծ, Տարփող և Յուսալից
Յանցեալսն, յարդիս և յապագայս անդ երկնից:
Դու զաշխարհի տաս ձայն յերկին

Ցոր ըզմայլեալ յակճիռ աշխարհ կայ ինքնին .
Անգէտ ուստի ոգիդ կամ ի ,
Երկնաւոր զոք պաշտէ իձայնդ , ով Հիւկոյ :
Ո՞ ինըսեմ ձոր արտասուաց
Հանճարդ աստղիկ փայլէ յուսոյն լուսազգեաց ,
Որ դողդոջուն մերոց ըղձից
Զաներկևանըն ցուցանէ կէտ զերկնից :
Դու յալէկոծ երկբայութեան
Ո զհաւատով բազմակոհակ ամբառնան ,
Հողմանըւազն ես աշտարակ
Ցոր անվրտանգ ուղղէ ըզդեակ իւր նաւակ ,
Եւ մարդկութեան սեռի Ցըշուառ
Կենաց օձան տայ խրախուսիչ քո բարբառ ,
Իմահացուն ածեալ ճակատ
Ցանմահութեան փառաց պըսակ լուսապատ:

Արարչագործն երբ վեհ Ոգին
Զիւրն իքեզ տիպ դրոշմէր շըքեղ պատկերին ,
« Օն Ե՛ր , ասաց , ահա եղար
Մահկանացուաց երրեակ փայլից իմ տիպար .
Հանճար վըսեմ, սիրտ լուսահոս ,
Ոգի ստեղծող յեց իքընար քաղցրահոս .
Ե՛ր , իհովիտն Էջ իցաւոց

Զոր ակօսենքն հեծութիւնք մշտախոց.
Ուր յարտասուաց ցօղ աղտաղտին
Հունձք որայից և անդաստանք ոռոգին:
Ե՛րթ ուր նոճին լուռ մահական
Եւ սրգաւոր ուռին են լոկ իսկական,
Ուր վառ իվառ վարդն եւ ծաղիկ
Եւ հեշտութիւնք են իքաղել վաղանցիկ:
Ե՛րթ, իբարձուէն հայեաց ոգւոյդ
Զունայնութեանց շուրջ ըզքև սին երևոյթ,
Ա՛րկ ըզնոքօք քո զաչս հրալից
Դու, որ երկնից քան երկրի կաս մօտակից,
Արծուի խաբ ազատ լերանց
Թառիս վայրիկ թեւս ամփոփեալ երկնասլաց:» —

Այս վեհ կոչումն է քո, քերդող,
Մարդոյ 'ւ երկնից ընդ բընութեան գոլ զօդող,
Որ յիջանելդ յայս մեր աշխարհ
Երանութեանն երկնայնոյ ցոլ քեզ եհար,
Իւ թելք քնարիդ քո բոցանան
Ընդ երկնալար մբրցեալ երգոց հրաբերան:
Քեզ ասպարէզ լայն յաւիտեանք
Թորոց ալիս անդ սաւառնին քո խոյանք.
Եւ մինչ խնդրեմք ըզքեզ յայս ծիր

Ցերկնից իխորս կաս դու Էին իխնդիր .
Եւ վայրաբերդ յայսրէն գալուստ ,
Բոց լուսավառ արկեալ զոգւովդ իյերկնուստ ,
Ո՜հ, որպէս սին քեզ երևին
Փառք , մեծութիւն , պերճանք ոգւոյ մարդկային .
Եւ սուր ակամբ Ցարիանց իխոր
Զունայնութեան չափես զանդունդսըն պրդտոր,
Խոնարհին աչք մեր ակնածու՝
Մինչ որոտաս դու քընարիւդ ամպաչու .
Իսկ երբ առեալ զանձամբդ ըզքոզ,
Մօտիս մեզ զերդ Սինէականըն տեսօղ
Եւ ըզմարդոյն մեզ անտրխեղծ
Զարմանասքանչ բերես ըզտիպ լուսաստեղծ ,
Փեւ ճոխացեալ պանծամք իմեզ
Հուզապատիւ բնութենակից զոլ ընդ քեզ .
Եւ զի առեալ երբեմն և մեք
Հառօրեայն մեր խորան պանդուխտ ընդ երեկ ,
Զբեմք անդարձ իվեր յերկինս
Լաստուածութեան հարկանել հիմն իլերինս :

⁂

Բ.

Կամ յորժամ ըզնաւն հանեալ իցամաք
Թողումք ըզթի և ըզղեակ,
Եւ զխարիսխ յուսոյն բարձեալ մեր թիկանց
Հեշտ ակնարկեմք իբարձանց,
Զերդ յիւրն անդ կապանս զոր ելիք գերին,
Ցափն ալեծուփ մեր վերջին,
Մինչ յանճառն իլոյս անմուտ արևուն
Աչք մեր յանկարծ պատարուն,
Ելացին նշմարել ոչ ևս ինչ յաշխարհ
Ոյր լոյսն՝ ըստուեր է խաւար,
Երբ մեզ նորա փառք թըւին շիթք ցողոյն
Որ ցընդի յելս անդ արփւոյն,
Երբ սիրտն՝ յաստուածեան վըտակ կենդանի
Սլացեալ կարապ գեղանի,
Ոչ ևս տենչասցի յայն տըղմուտ մօրիս
Ո զթևս պըղծեն լուսալիս,
Եւ զմսայլմանց յակունս մըշտընջենաբուխ
Ըմպէ զանանց հեշտից ուխ.
Ցորժամ լըսելիք արձակեալ իբաց
Մահկանացու կապանաց,
Եւ սիրտք մեր իլուր նախկին ձայն տացեն
Հընչմանց լարից ոգեղէն,

Ցորժամ իԼեՑեան ալիսն երջանիկ
Աշխարհ զարձցի ինձ իչիք ,
Մի միայն անտի բարձից յիշատակ
Զերդ Նոյի զշիւղն աղաւնեակ ,
Ով Հիւկոյ , ըզքո նըւազս անուշից
Որ աստ Ցըւէր զանգ երկնից ,
Ոչ ես այլ յայնժամ եղէց ես երկմիտ
Ըզձայնդ զուարՑնոց զոլ ժըմիտ ,
Եւ Ցէ քընարիդ Ոգի լուսաբոց
Փոյր հրաՑեւեան էր Ոգւոց
Որ ըզբրովբէից երգս երկնայարդար
Ճըշընչէր քոյդ անդ իլար ·
Ցայնժամ , քեզ յայն ժամ յաւէժ կենակից
Զաստեաց՝ պասուքս անդ հարից ,
Ցեցեալ զիմ ճակատ իքնարդ յաւիտեան
Ոյր արփք լիցին պատուանդան ,
Եւ աչք իմ անդուլ իքեզ սիրահար
Զոր ցուցանեան հարից լար ,
Երկակի մարզեալ ոգւով քո վըսեմ
Ցերգ սիրելւոյն մասնակցեմ ,
Իբր ըզՍոխակին լերինք , ձորք , աւանք
Տալով ձայնիդ արձագանք :

·՝·

Գ.

Զուարթնոցն, ահ, զի վեհ է վերերգութիւն.
Խառնեսցուք և մեք իպարբս նոցուն:
Յորժամ իբարբառ երեքսբրբենին
Դըղբրդին երկինք բևեռք սասանին
Գընտոյս վիթխարի տատանին հիմունք,
Հալին որպէս մոմ լերինք և բարձունք,
Լուսին և արև իբրև խունկ ծըխին,
Յաստեղց բոցավառ ցոլմունք ճարճատին.
Բնութիւն զիւրսն ողջոյն հանէ իհանդէս
Հաստչին օրհնաբանս իդաշնակ պէսպէս.
Շիրմաղղորդ և մեք իձայն երկնափող
Թըռչիմք նորաթև թօթափել ըզհող.

Անդ և մեր կընտընդոց
Զուգեսցի անմարմնոց,
Սիրատարփ իսէր սուրբ
Թալկացեալք ուղխից հուրբ,
Մարմնաթել ըզսրտի
Յարմարեալ տասնաղի,
Անծանօթ հրեղինաց՝
Տամք գեղգեղ նըւագաց.

Անդ, այո, անդ ով Հիւկոյ, հրաշանայցես.
Հոգեշարժ նուագացդ իլուր վերնոցն հանդէս
Յակենիս իզմայլման
Տացեն ծափաձայն:

Զեղև ոք որ բան ըզբեզ խորագրնին,
Ըզմարդոյն Յարգմանեսցէ սիրտ իքնարին,
Ոչ՞ և յերկնից պար
Յաղթեսցէ քոյդ լար:

Կաթոգին աստ ցանկալուոյդ ինձ անծանօթ
Ձերդ երկիր պասքեալ ցողոյ յամարան տօթ
Անձկայ քոյդ տեսլեան
Մուսայս Հայկական.

Այլ երդուեալ իքնարդ՝ յեթերս անդ բոցանշոյլ
Իմի նուագ ձայնիդ ըզքեզ բիւրուց իհոյլ
Ծանեայց ով Հիւկոյ,
Եւ կապեցայց քեւ անբաժան իհուր ոգւոյ:

1858



ՅԱՂՄԷ.

Ի ՏԱՊԱՆ ԻՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ

ՈՂԲ ՆԱԽԱՐԱՐԱՑ

Առ տապանաւդ արձանացեալ, մեծդ Իսահակ,
Իխոր սրրտէ զոչեմք յարտօսր յորդավրտակ.
Հայր Հայաստանեայց, ընդէր նընջիցես,
Իսկ մինչեւ իսպառ ըզմեզ անտեսես.
Հայեաց տառապեալ յորդիս քո անզայր
Ով որդեսէր հայր:

Աստ իբ ըլուրս իյանոտից քոց Թաւալեալ
Հայաստանեայց հեծեծէ բաղդն աշխարհակալ,
Վերադիտողիդ առ գաւազանաւ
Արքենին բեկեալ մական կենսազրաւ,
Անկեալ կան տրխուր սուսեր Ցըրդատայ
Եւ աղեղն Հայկայ:

Փոյդ աստուածավառ շընչոյդ յետին իտուրևառ
Վերջ շընչեցին եւ հայրենիք մեր ոգեսպառ.
Թարեւուդ պայծառ յամիսիել նըշոյլ
Հայոց վաղամեռ շիջան փառաց հոյլ.
Մասեաց սեաւ իքող պատեցաւ ճակատ,
Թարտասուս անհատ:

Թալս դըժոխոց բըռնակապեալ աղէտք և հուր՝
Թահեղ քո տես պատկառէին յորդել յահուր.
Այլ մինչ դու Թողեալ ըզմեզ եւ գնացեր.
Հուր և սուր հորգան ետուն յաշխարհ մեր.
Զերդ յԱրարատեան սարից ահաւոր
Ժայռք ոստնուն իգլոր,

Վա՛հ, իդըժոխս, կըռանեցան շըղթայք մեր այս,
Մըշտակաշկանդ իդոյն պէտնդել զՀայաստանեայս.
Ազատ պարանոցք իկոր ծանրացան,
Կոշկոճին յերկաթ բազուկք Հայկական,
Եւ յողբ մըշտահեծ ահեղ գերութեան
Սիրտք մեր հիւծեցան:

Ով հայր հայրենեաց, ակնարկեա զամմի հաշտ ակամբ,
Ժանգահար ձեռս վերամբարձնամբ քեզ տատանմամբ.
Արտասուք որդւոց ըզսիրտ քո լուծցեն,
Եւ վշտաց մեր բոցք ըզսէրդ արծարծեն.
Զըզեսցի առ մեզ աջ քո լուսաշուք,
Եւ կենդանասցուք . . .

Ե՛րբ ըզտապանիդ վէմ կափարիչ տբեալ Թաւալ,
Աւետ մեծ Հայոց երանեսցես, Տէր, ժամանեալ.
Եւ ըզԳրիգորին վերհանեալ ճոկան,
Փըչեալ շունչ կենաց յԱրշակեան մական,
Իմի հօտ բերցես զորդիս շըրջապահ
Թարքունական գահ :

ՅԱԴԾԸ.

ԱՌ ԴԱՇՏՍ ԱՐՏԱՋՈՒ

Ո՞ Արտաշեանք, ո՛վ դուք հովիտք սքիսրալի,
Ո՛վ մեծապանծ մեր յիշատակ հայրենի,
Ո՞ր սիրտ ըզձեզ յիշեաց անտրոփ՝ անպասուք,
Ո՞ր Հայ յանուն ձեր ոչ էարկ արտասուք...

Այդ դաշտավայր՝ ոռոգեալ սուրբ յարենէ՝
Անձեռակերտ տաճար Էին սրբբեալ է.
Ամպաճեմեալ ծառք՝ սիւնք նորա են բարձունք,
Երկինք՝ գըմբէթ, եւ ջահ կախին աստեղունք:

Իսեղանիդ շընչէ իծուխ դեռ արիւն,
Ցօշեալ անդամք դեռ եւս փայլեն արութիւն,
Զոհք՝ ոչ իսուր մահկանացուին վիրաւոր՝
Այլ հաւատոց սրբով Ցրուեան իկեանս նոր :

Ո՛վ վեհ բազին, ո՛վ պատարագք կենսական..
Իհոտ անոյշ շընչեցէք, սո՛ւրբ Վարդանանք.
Ե՛րբ իձէնջ Երբ ոստուցեալ կայծ կենսազգեաց,
Տայ յարութիւն մեռելատիպ Հայրենեաց :

ՅԱՂ. ԾԹ.

ՀԱՌԱՋԱՆՔ



«Տէր, դու զամենայն գիտես»
Յովհ. ԻԱ.

Այո՛, գիտես դու զամենայն, Տէր իմ Տէր,
Գիտես զոգին իմ և ըզսիրտ իյերեր . . .
Քեզ՝ ում երկինք ծածուկ և խորշ մի չունին՝
Ունիցի սիրտ Թշուառին :

Սիրտ Թշուառին՝ յոր իբր իխորս անյատակ
Հեղեղք վշտաց հեղան կոհակ առ կոհակ .
Զիք ուստեք չիք նմա սփոփումն յմայսքան վէր,
Եւ չըգիտես, Տէր իմ Տէր :

Եւ չըգիտես զի մինչ յայսքան կոծիմ ցաւ՝
Այլք ինեշտից յօրանան խինդըս ՔաՀաւ . . .
Վայելք համայն այցեն երդից նոցին միշտ ,
Իսկ ինձ զովող՝ միայն վիշտ :

Սիրտք նոցա յար խոփոփանաց զըրգեալ Քեւ,
Երջանկութիւն՝ իդրունս իւրեանց յարատեւ ,
Եւ աչք նոցա մըշտաժըպիտ՝ ոչ ծանեան
Բայց քաղցր ըզցօղ հեշտութեան :

Իսկ ես ինոյն Քէ և տեսեալ լոյս յաշխարհ ,
Այլ նա ինձ մասն ևեՀ հանեալ է զաշխար .
Զիք ինձ և ոչ մի հանգըստի տըւեալ դեհ ,
Այլ եմ յամէն վայր նըժդեհ . . .

Սիրտ ինձ վասն այն տըւեալ է Տէր զի կրիցեմ . . .
Վասն այն շրՀունք՝ զի հառաչմամբ հեծիցեմ .
Վասն այն աչկունք՝ զի յարտասուս սարսռալի
Լըցցի , հեղցէ և լըցցի . . .

Թէ այս սըրտի չըզոյր յուսալ իւր ընկեր ,
Ըզգալ նմա այսքան տըւաւ ոհ ընդէր . . .
Ընդէր շրՀանց այսքան խարշումն իպատուք ,
Ա՜յսքան աչացն արտասուք . . .

Դու որ իծով մեծ բանի շիթ գոյ՝ գիտես,
Միայն գիմ դառն արկեալ հեղեղ չքթբեաս . . .
Եւ ում Թռչնոց լըսելի են մէն մի ձայն,
Իմ հեծութիւնք չեն միայն :

Աչ քո գիտէ տալ տօթակէզ անդոց ջուր .
Ընդէր և ոչ շիթ մի ցողոյ յոգւոյս հուր .
Ծագես զարփի յետ գիշերաց մըխիթար,
Ինձ տաս միայն ըզխաւար . . .

Որ ճընճըղկին՝ բոյն, և սըրտի ետուր սիրտ,
Հիմ զոք չըտաս զի զնըժդեհիս սըրբէ քիրտ . . .
Ո՜հ, զէթ նեցուկ տուր հէգ զըլխոյ պատանւոյս
Ըզ Խաչիդ ծառ կեանք և յոյս :



ՅԱՂ Դ.

ՀՄԱՅԵԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԳԱՐՁԱՒՈՐ ԻՀՈՌՈՄՈՑ ԱՇԽԱՐՀԷՆ

Համառօտեցան բան անձկայրեացք պանդխտու-
Ահա Հայաստան . . . [Թեան . . .
Ողջոյն հայրենիք , ողջոյն օղոց քոց քաղցրութեան .
Ողջոյն լերանց, գետոց ողջոյն, և քո սուրբ հողոյն
Հայաստան , ողջոյն :

Քան յուխից վիժակ տոչորեալ շուրթըն ծարաւի ,
Քան անձկոտ փեսայ իգիրգ ծըղիս հարսին ծաւի ,
Քան իգինուց շաչ՝ նահատակն իդաշտ փորոտայ ,
Թեւաբերելով առ քեզ սըրտիւ գամ իբացեայ
Հայաստան , ըղձիւք նախընծայ :

Զի քոյդ արդ ոչ սիրելութիւն յիս լոկ մարմնական,
Ոչ զի նախնեաց հանգըստարան ես և իմ օրրան,
Այլ զի յերկնից պատուիս վայրէջս արդ վըսեմագոյն,
Զի արութիւն ձեռն իձեռին ընդ վեհ սրբութիւն
Ինձ հրաւէր ազգեն կենսագոյն :

Հայրենեաց իմ որդիք, ընդ իս զի պիշ հայիք դուք,
Զի բեկելով սըրտի կախին ձեր յօնք յարտասուք.
Ինձ եթէ ոչ ընկերիցեն Ցոյն սուր տէգ և ձի,
Զ Աստուած ձեզ առբերեմ պարիսպ քաջալեր մարտի,
Ձեզ այլ զինչ երկրաւոր պիտի :

Թէ բիւզանդեան ոչխիտ յերկին դրօշքվառ փողփողեն
Թէ ոչ Մասիք յոյն ծեքանաց արձագանգ կրկնեն,
Ոչ՞ կորովասիրտ Հայք արշաւեն իսուր և զէն,
Ոչ՞ հայկեան շեփորք իդաշտ մարտի հուր փորուտայցեն
Մասանեանց սևազնդին դէմ :

Ելէք քաջազգի հարց իմ ծնունդք, դուոյթ առէք մարտի,
Մի դաշտ ձեր սուրբ յարիւն վարձկան երբէք արատի,
Գօս իսկ յերակունս մի ևեթ շիթ թէ պըղպըջէր՝
Հայրենեաց դա, յոյր իծոցոյ ընկալեալ է մեր,
Նըմին պահանջիմք նըւէր :

Մամիկոնեան տեսէք ծածանի վառ խաչազէն,
Մուշեղեանց և Վասակայ սիւքք ըզնովաւ վազեն.
Դա այդ է զոր իՁիրաւ տեսէք ծալ իծալ,
Ցելից դա ցըմուտս յԱղուանք իՀոնս յաղթողափայլ,
ՑԱւարայր իվարդ պըսակեալ:

Արիք, ընդ մեզ Թեւակցեցին յանմահից խորան
Գրիգոր, Ներսէս, և պըսակազգեստ Կարմիր Վարդան.
Կարապետեն իհանդիպոյ զահ մեզ վերամարտ
Կապել բըթել զպարսիկ սուսեր և զնետ, սաղաւարտ
Կորակոր անձանց դատապարտ:

Օն՛ հանգանակեմք զոր իյԱրտազ քաջաց սուսերք,
Կըրկին իդա կարշնեղ բազուկք շնչիցեն ձերք,
Մի որ զնոքօք ժանգահարի Պարսիկ արիւն,
Այլ մերձ ընդ մերձ հնապա մըխեսցին յաւիշկ ինոյն
Ցոսկերաց վատաց սարսափիւն:

Ամաչեսցէ շիկնեալ կըրակ յերեսաց Խաչին
Իխաւար մածեալ յարեանց հեղեղ երկըրպագչին.
Ո՛ Հայկազունք, ԱՒարայրեան խնդրեն զոհ ոգիք...
Երդուեմ թէ ոչ իմեր սուսեր մաշեալ, ուրք Պարսիկք,
Պաշտելիդ իհուր ծախեսջիք:

Հնապա, հաւատոց ըզնուր յաջում, ահեկաւն ըզսուր,
Աչք ձեր շողատցին յատրուշանացն իրոց տրխուր.
Եւ մինչ սուսերք կայտառեն իզլուխս իսիրտ Թափան-
Մեք իվատաց ճրչել բընչել յուսաբեկ կաղկանձ [ցանց՝
Պարզեսցուք ըզձայն օրհնութեանց :

Պընդեսցին, ո՛ քաջք իմ, ձեր լարք հաստոյր աղեղանց,
Մահ սեաւ ըզթեան յերեքսայրի փրքին ձեր կապեաց.
Ո՛չ նայիք, ձեզ մատնանիշ արիք մեր յերկնից...
Հարէք պինդ. ուր մէգ՝ այդ նշանակ մոխրապաշտից.
Թռիցեն տէգք, դռոյթ տարապ նետից :

Մի՛ սուսերք ձեր, ա՛րք զօրութեան, հանգչին իպատեան,
Մի՛ շանթաձիգ ձեր կապարճից կարկամի բերան.
Մինչ չև լիուլի վրիժուց Թափեալ հուր զայրագին
Դիւապաշտից շեշտ իկառափ : Թէ գնամք իսկ յերկին՝
Բայց և անդ ոխք մեր մի՛ շիջցին :

Զերդ Մասեաց բատուերք յերեկորին յերկարեալ պահ
Ներսեմ խոնարհի արիւնարբու Սասանեանց ջահ.
Անցցեն փառքն անյուշ իբր իյեզերց՝ ալիք անդարձ.
Եւ ձեր ճաճանչից յաղթեալ զխաւարքն բընաբարձ՝
Զբաղդիդ մէտ տարցեն երկնամբարձ :

Օն՛իմ ճերմակ, տնքուր Կատիշք և Մատեան է գունդ.
Ո՛ բաջք, իգիւտ սրանամ փառացերկնաւոր ծընունդ.
Ուր մահունք մրրիկ, ապշոպք՝ զիս անդ խնդրեցէք.
Իսկ երբ ըզշողիւն սուսերիս ոչ տեսանիցէք՝
Ցերկինս եմ, զիս անդ գիտացէք :

Այսպէս ես իվրէժ հաւատոց սուրբ և հայրենեան
Զքոյդ իսկ խառնեալ՝ զհետ փուՑացայց, բաջաց քաջ
Վարդան.
Հրամայեսկն եմ ես հարազատ քեզ յաւերժական,
Մարմնով յօդուածոյ՝ սակայն հոգւով մի քև համայն.
Հանդուրժես զի քէն զիրկ գնամ :

Առօրեայ փառաց՝ քեզ համաշունչ զուգահաղորդ՝
Մի յանանցն աղէ անկցի կըրճիմ ընդ մեզ միջնորդ.
Իծնունդ մեզ մի արգանդ, լիցի նոյն մահուն ուղի.
ՑԱրտազ, Պարխար, տուր զոր հաճիս երաշխի տեղի,
Քեզ մընամ անդ հանդիպելի :



ՏԱՂ ԿԱ.

ԱՍՏՂՆ ԲԵՒԵՌԱԿԱՆ

ԱՌԱ. Պ. Մ.

Ա՛ստղ, որ ի ծով անդ կապուտակ
Ուր լոյս փրփուրն է և ալեակ,
Բևեռայինդ իցուրտ ամայս
Մեկուսանաս անշարժդ իկայս,
Ձերդ նաւ իծով հիւսիսային
Ոյր լանջք իսառն յանկարծ պատին:

Խարիսխ արկեալ Թըւիս և դու,
Այլ Երբ՝ յիշէ ոչ մահացու.
Եւ որ գիտէն ոք չՔք բընաւ
Շաբաթուդ Երբ իցէ զբրաւ,
Ցոր կողմն ըզչուոյն իւր զառագաստ
Պարզեալ գոգէ արդեօք քո լաստ։

Ա՛ստղ, ողջունեմ այսօր ըզքեզ .
Լուսոյդ ողջոյն զիմ տամ և ես ,
Որ ըզբիւրոց հանգունատիպ
Ցայսքան դարուց ձրգեն ըզբիբ .
Կէտ , ուր սըրտիցըն սիրելեաց
Գնան հաւաքին իղձք անձկայրեաց :

Ա՛ստղ, ինայեացս անդ քո անդոյր
Որ՞ չըգիտեմք է զաղտ հրապոյր .
Ըզգիտեմք զինչ քո լրուծիւն
Բարբառիցէ ափոփանս ոգւոյն,
Զի 'ցաւս իւր անդ 'ւ ակընկալիս՝
Սևեռէ զիւրն քոյդ յակնարկիս :

Զի ոչ արփւոյն հուր կենսատուր,
Լուսնին փայլ ոչ հեշտատրիսուր ,
Շող ոչ վրսեմ է քեզ Հայկին ,
Կամ դէմք պայծառ Արուսեկին .
Եւ հիասքանչ ոչ զերդ վարսամ՝
Ուստի բնութիւն խընդրէ պատգամ :

Զանց դեռ գիշեր մի 'քէն վերէպ,
Ըզքեզ դիտեմ յար մեզ հանդէպ.
Որ ոչ զօղեալ իսկ տաս վաստակ՝
Ի խուան՝ լուսոյդ լինել խընդրակ.
Այլ բիբք Թէ և շրանան իսկ ոչ՝
Սակայն ըզլոյսդ հայցեն զողոջ:

Ա՛ստղ, աղօտ քոյդ պայծառութիւն
Խորհուրդ իմն յաչս անդ է մարդոյն.
Թէ աստղ ես, հիմ նորին իծիր
Եւ դու երբէք ոչ գաս ի հիր.
Զուարթուն, այլ զի ըզթեւս հրավառ
Ոչ Թօթափես ընդ դարս հազար:

Թէ՝ վէմն երկնից ես զահոյից,
Թէ՝ Անմահին ես հետք ոտից,
Թոր ժամանակք չածեն մբռայլ,
Թորժամ Նա զոտն իքեզ արկեալ
Եկաց զերկնից զոգել կամար,
Եւ զիլ զբնտիցն ետ լուսավառ:

Թէ՝ պահապան արդեօք ոգի
Իցես կարգեալ դու աշխարհի.
Ա՞կն որ ըզմեր դիտէ շարժմունս,
Եւ յամենայն իրաց ծփմունս,
Իխինդ, իցաւ, խէթ և յերկիւղ,
Ձերթ փայտ յալեաց արկեալ իլիւղ:

Այո՛, իցես, իցես ինչ դու,
Ոչ լոյսդ ընդ վայր մեզ այցելու.
Ոչ զուր ըզնոյն ունիս միշտ վայր,
Ոչ այս ազդմունք իմեզ ընդվայր,
Ոչ զուր ըզքեզ դարք այսքանիք,
Եւ կարդասցեն դեռ ապառնիք:

Ցորժամ իդոյզն ինչ լաստափայտ
Ընդ մահ կեանքս գայթ իգայթ
Փախչին ափունք հինր նաւազին
Եւ կողկողի ընդ սիրուհին,
Հայի՝ և շող քո մըշտագութ
Հորդէ զուղին յալիս և խութ.

Յորժամ իբիրտն և յապաժոյժ
Պանդուխտն ընդ ռահ կորոյս և զոյժ,
Ի՛ ոչ ևս տունջեան ակն ունի՝ լոյս,
Յեց իմախաղ ննջէ իլոյս
Զի դու ցայգոյն ելցես իծոց
Ով՛ բարեկամըդ լըքելոց։

Յորժամ վըշտաց իվիշտ անծայր
Զերդ կուր ժայռից հարեալ իժայռ,
Ծըփի ոգին, և զանիրաւ
Ընդ մի համար կարծէ՝նդ իրաւ,
Որ զի յաճախ այն աստ իփառս՝
Եւ սա կոծի անտեռ յաշխարս.

Յորժամ զերդ ծառ պըտղինապանձ
Զոր այս մրրիկ հար ոստաբանց,
Սիրտ իսիրոյն կապտի զարդուց
Եւ դանդաչէ յայնքան մահուց,
Յայնքան արկեալ հոծ արտասուս
Զանմահութեան կորուսեալ լոյս . . .

Ա՛ստղ, յայն գիշեր թէ գամ մի դուն
Ծագես՝ սրանայլմը ուայլ նորուն ,
Ի՝ իկեանս յուսոյն գառնայ բողբոջ,
Ձերդ իջըրոյն յանկարծ խոխոջ
Ծարաւահիւծ խայտան շըրթունք ,
Ի՝ անցեալ յիշին ոչ նեղութիւնք :



ՏԱՂ ԾԲ.

—

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

«Թամա ծագեաց մեզ լոյս».
ՇԱՐ.



Փայլատակէր արփի զվերջին իւր նըշոյլ,
Բնութիւն անդ լուռ, երկին յոսկի վառէր ձոյլ.
Ընդ արևելս արձանացեալ Հայոց Դէտ
Ձեռն իծընօտ յամաց յառէր Թիւս անհետ:

Մասեաց ծայրից մինչ ի Գանգէս և Վոլգայ
Հայէր տըխուր ընդ Հայկեան բաղդ փախըստեայ.
Բիւրք պարզեցան ժամանակին Թերթք իծալ,
Հայոց նըսեհ՝ կայր յեղյեղուկ առկայծեալ,

«Ցերբ, Տէր,—հեծեաց Ոգին,—իծուփ Հայաստան...
Ցերբ վըտարեալ որդիք նորա անկայան . . .
Ո՞ւր Թորգոմայն խարբսխի բաղդ անսասան... »

Շիջաւ հազագն, և արտասուք հոսէին :
Իսկ Տէր իգուԹ յիւր դաստակերտ սիրելին,
Գոչեաց, «Օ՛ն Հայք յէջմիածին յուսացին»:

ՅԱՂԴ ԴԴ.

ԵՐԳ ԱՔՍՈՐԵԼՈՅՆ

ԱՌ ՇԱՀԱԲԱՍԱՒ

Ողջամբ մընայք ... —Ո՜հ, ինձ յետին հասեալ ժամ
Եւ զիս իքէն բաժանեն, քաղցր Հայաստան.
Հէք, կարծէի թէ իծոցոյդ մայրական
Բաժանեսցէ մահ միայն:

Ո՜հ, չև մահուն դեռ ևս հասեալ առ իս մուծ՝
Ահա արդէն սուսերազէն ձեռք անզուծ
Կորզեն զորդիդ իքոց զբրկաց, Հայրենիք,
Արկեալ յիս ծանրը սարիք:

Բայց և իծանր այդ իշղթայս արդ ըստրուկ՝
Ես կարկառեմ առ քեզ դողդոջ զիմ բազուկ,
Առ քեզ վերջին զոչեմ անյոյս կականաւ,
Հայրենիք, մընայք բարեաւ:

Մընայք բարեաւ ով սրբազան իմ տաճարք,
Ոչ՝ ես յիմ ձայն ողորտացին ձեր կամարք.
Ոչ՝ ես յեղբարց իմ սրբատառուչ ալէլուք
Իմ խառնեցին արտասուք:

Մընայք բարեաւ շէնք և աւերք Հայրենեաց,
Ոչ՝ ես ըզձեզ տեսցեն իմ աչք անձկայրեաց.
Ես յանապատս անկեալ գերի սինլըքոր
Լացից յանձուկ ձեր տոչոր:

Մընայք բարեաւ ով գերեզմանք իմ նախնեաց,
Վերջին համբոյր է այս հողոյդ՝ ու ոսկերաց.
Ոչ՝ ես յուսով ըսպասեցից սրբատգին
Թէ՝ նոր ձեր՝ ու ոսկերքս հանգչիցին:

Ոսկերք իմ ո՛ գիտէ յոր դաշտ յոր երէգ
Անկցին տապաստ, անպատրաստ, տոթակէզ,
Եւ չիցէ ոչ մի աղօթող առ նոքօք,
Ոչ եղբարց գութ կամ բողոք:

Եղբարք և քոյրք սիրուն, բարեաւ ո՛ի մընայք.
Գերի տանին զիս բռնութեան վատ շղթայք,
Այլ թէ ցթևեռս իսկ խուժադուժ վարիցեն՝
Ըզսէր խրզել ոչ բաւեն:

Ո՜հ, անբաժան իմ էնջ իմ իղձք և հեզ սիրտ,
Միշտ ըզցաւոցդ յիշեցիս գաւն հեղեալ քիրտ.
Եւ ձեզ եղբարք իմ յուշ եղբայր ձեր պանդուխտ,
Մի մոռացի նորուն ուխտ:

Մի մոռացիք տալ ցաւագին զիւր անուն
Ցորժամ յակումբ նըստիք եղբարք զբաւական,
Ո՛ զիտէ յայն ժամ ուր կոծիմ հեզ միայն...
Ցուշ շղթայից իմոց ձայն.....

Ցուշ արարէք իմ Հայրենեաց զիւր որդի,
Գընամ յաքսոր, զի ըզնա յոյժ սիրեցի,
Գընամ բայց սիրտ Ցողում ատէն անմեկին,
Մինչև իշունչ իմ յետին:

Գընամ անյոյս իղարձ, այլ սիրտս՝ աննըկուն
Ո՛չ երբէք ոչ խոնարհեացի Ցըշնամւոյն,
Ո՛չ մի յարտօսրբր բերկրեացի իմ աչաց
Ո՛չ իհառաչ մի շըրթանց:

Այո՛, շըրթունքս որ դողդոջեն արդ առ ձեզ
Երիթասցին բըռնաւորացն առ երես.
Եւ աչքս՝ իհուր բորբոքելով վրիժառու՝
Դոյզ ազդեսցէ անարկու:

Եւ այս տրխուր ձայն առ եղբարդ իմեկեկ,
Որոտացի նոցա ըզցայգ և ցերեկ.
Եւ մաղթեցէ զերկնից շանթիս հրատեզաց
Իգլուխս Հայոց Թըշնամեաց:

Եւ մինչ ինձ մահ զայ վաղ կամ յամր ազատիչ
Բըռնաւորաց մեր իձեռացն աւերիչ,
Վերջին իմ ձայն՝ Հայաստանն քեզ տացէ հեծք,
Եւ Թըշնամեաց քոց՝ անէծք:

ՏԱՂԱՆԴ.

ՀԱՅԱՍՏԱՆ



Ա.

Հայաստան, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուն հալեցան.
Մինչև ցերբ ես իքէն պանդուխտ,
Սըրտիս իմ Երբ լըցցի ուխտ:
Արդեօք աչքս անձկալից
Երբեմն ըզքեզ տեսցեն.
Աչքս այս արտասուալից
Երբէք դադարեսցեն.
Շուրթն իմ իհոդդ կենսաւոր
Տացէ զհամբոյրն ուխտաւոր.
Արդեօք զլուխս վըշտակոծ
Հանգիցէ քոյդ իծոց:

Հայաստան, սէր իմ Հայաստան,
Ոգիքս իտենչդ հալեցան.
Մինչև ցերբ ես իքէն պանդուխտ,
Սըրտիս իմ Երբ լըցցի ուխտ:

Բ.

Հայաստան, իմ պճրճ Հայաստան,
Ով երկիր նուիրական.
Հընոց կենաց և որորան,
Հաշտարար երկնից խորան.
Իքո սուրբ հովանիս
Ո՛ զնըժդեհ տանէր զիս.
Ո՛ իստուերդ Երազմոյն
Ըզնախնեաց հեղգէ քուն,
Անմահութեանց վեհաբուն
Ծըծել անդ զոդ և զաւիւն,
Եւ զաստեացըս վըշտաց
Գըտանել կատարած:

Հայաստան, քանզըր իմ Հայաստան,
Ոգիքս յանունդ հալեցան.
Մինչև ցերբ ես իքէն պանդուխտ,
Սըրտիս իմ երբ լցցի ուխտ:

Գ.

Հայաստան, սիրուն Հայաստան,
Ցուսոյ խաբիսխ մարդկութեան.
Դու իմ լոկ ակնկալեաց վայր,
Ցոր աչք իմ ձրգին յամայր.
Ո՛ զմին զէթ տայր լնուլ
Ջիմս ըզձից իքեզ հոյլ.
Ո՛ զփափաքս յարատեւ
Իբր ըզսիւք մի թեթեւ
Հասուցանէր մինչ առ քեզ,
Եւ զայս ողջոյն սրրտակէզ,
Եւ զհառաչս ոգւոյս բիւր
Զոր ընդ բլուր տմայր խփիւռ :

Հայաստան, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս իտենչդ հալեցան,
Մինչև ցերբ ես ի քէն պանդուխտ,
Սրրտիս իմ երբ լրցի ուխտ :

Դ.

Հայաստան, իմ վեհ Հայաստան,
Երանութեան օթարան.
Ո՛տայր զաւուրս իմ ցաւալիս
Փոխել ոհ յերանելիս,
Ոչ փառօք փայլելով
Վաղանցուկ ոչ ոսկւով,
Այլ զի զքեզ տեսանել
Սուրբ ըզսարսդ ողջունել.
Զաւերակօք քով փարել
Եւ զհարցս անդուստ ձայն լսել.
Եւ զնոցին հետս անանց
Համբուրել զետնամած:

Հայաստան, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանուն հալեցան.
Մինչև ցերբ ես իքէն պանդուխտ,
Սրտիս իմ երբ լցցի ուխտ:

Ե.

Հայաստան, անուշյշ Հայաստան,
Դու զոգիս լընուս համայն.
Դու խրախոյս, փառք իմ և վիշտ՝
Ցոր սիրտ իմ Ցըռանի միշտ.
Ես պատիւ, զինչս և զերկ,
Խանդ, ըզշունչ և սին զերգ՝
Իբագինդ արգաղիր
Կախեցից լիաձիր.
Մի լոկ խնդրեալ փոխարէն՝
Զի ըզքեզ աչք իմ տեսցեն.
Զի մի՛ ցմահ անձկալից
Զերդ սերկեան գոչեցից.

Հայաստան, իմ քաղցր Հայաստան,
Ոգիքս յանունդ հալեցան.
Մինչև ցերբ ես իքէն պանդուխտ,
Սըրտիս իմ Ճրբ լըցցի ուխտ:

ՏԱՂ ՆԵ.

ՈԳԻ ՏԽՈՒՐ

ԱՌ Վ. Ա. Մ.

Զայն զոր իբոյն իւր մենաւոր
Մրմընջէ սարեակ՝
Կեղերջական է, և անզօր
Սըրտի աղաղակ.

Հեծութիւնք տըխուր
Դուզնաքեայ իլուր,
Ում ոչ շըքեղ վանգք
Ցօժարեն իգանգք.

Այլ սակայն սուիչն այն իվըշտի
Ըզդիւր նըմին բերէ հեշտի :—

Իսկ մինչ ըզթուիչս առեալ հեզիկ
Խաղաղագին յօդոց իսիկ,
Վարսադիտակ յոստ ուռենւոյն՝
Զոր ջուրք թանան արծաթագոյն,
Հանգուցանէ ըզթեւս զբուարթ
Շուրջ իծաղիկ փրթթինազարդ,
Եւ քաղցրութեամբ իլիր ծոցիկ
Թեռանդն առեալ ականողիք՝
Իսահ ալեացըն լուսավառ
Զուգաւորէ մեղմիկ բարբառ,

Ո՛հ, նոյն նըման սուիչ
Նոյն և անդ երգիչ,
Նոյն տըխրահընչեակ
Արձակի դաշնակ,

Այլ շուրջ յոստոցըն սաղարթուն
Եւ իծաղկանց թերթից փայլուն,
Իջուրց դիմացըն պաղպաջուն
Ոստնու մըրմունջ նորա թըրթռուն,
Եւ զովաստուեր ծըմակ հովտին
Անշուք յաւաչս անդ թըռչնեկին
Տայ արձագանգս ախորժագոյն,
Մինչ ունկն իլուր յայն ճըռուողիւն

Բացուստ կարծէ վարդից իբոյր
Սոխակին սոյլ գեղապարոյր :

Ո՜հ, դոյզն և իմ քընարիս հունչ
Եւ թելից թըրթիռ.
Մելամաղձիկ եւեթ իշունչ
Ըզնովաւ յայթիռ՝
Անորիշ իմն և թախծագին
Մընչէ յառանձին :

Զնովաւ վայրահակ
Խոնարհեալ ոգիս
Յանձկայրեաց դաշնակ
Ըզգայուն սրրտիս,

Յաղեկէզ կըրից
Ճենճեր ծըխանի
Խանդաղատալից
Զմայլմամբ գեղանի :

Իբրեւ ըզշուշան
Իվըտակ վըճիտ,
Ըզդէմք կուսական
Եւ զանոյշ ժըպիտ՝

Ջուրցն իփայլ բիւրեղ
Խոնարհեալ հեզիկ
Իզմայլմանցն իտեղ
Պըշնու գեղեցիկ :

Ո՜հ, իբր արդ դոյզն իմ բաբախիւն
Տարածիցի յախորժ զանգիւն.
Ուստի զմայլմանց իմ սըրտակէզ
Ծուխ ծաւալի յանկարծ իդէզ.
— Քանզի իսըրտիդ
Քաղցրանիստ հովիտ
Տայ զիւրն արդ ըզվանգ,
Եւ ծործորդ՝ ըզգանգ.
— Քանզի քո սիրոյն
Սիւք Ցեթեւազոյն
Շըշընջեալ զինեւ
Ցիւրն ամբառնայ Ցեւ.

Ա՜նդ, անդ եւեթ լըսու լինի
Քեզ իմ ձայն ո՛ սըրտիս սիրելի,
Մինչ այդ՝ արձագանգք են քո սուրբ սըրտի:
Ա՜նդ, անդ եւեթ խընկեալ ընդոյր՝
Ախորժ զայցէ սըրտիս ծուխ տըխուր,
Մինչդեռ բաղցր իքոյդ հոտոտիս դու բոյր :

ՏԱՂ ԴՔ.

ԱՌ ԽՐՃԻԹՆ

ՌԱՋՈՑՆԳ ՊԱՆԴԽՏԻՆ

Ողջամբ մընասջիր, ով օթեան ծառափրթիթ,
Ո՛հ, տրխրազգեաց ըզքեզ Թողում, սիրելի խըրճիթ.
Թէպէտև անշուք է քոյդ տեսիլ օտար աչաց,
Այլ ինձ բընաւից զոս ցանկալի դու անմոռաց,
Ո՛վ դու իմ հիւղ սիրազգեաց :

Քոյդ ամօթլեած իզարմանա ածէ պարկեշտութիւն.
Ըզբարձունս Թողեալ ունիս ըզվայր ընտրեալ ցածուն.
Ոչ ծովադէմ կարկառելով յալին փրփրադէզ,
Հազիւ իյելն ողջունելով յարփուոյն ոսկեգէզ,
Զև Թօթափեալ շանթակէզ :

Ոչ լայնաճոխ ընդ մուտս ըզլոյս ժողովես քեզ հիւր,
Ոչ սըրտատենչ զովացողիկ առ քեզ գայ զեփիւռ.
Շուրջանակի զքև բարձրացեալ ամրափակ պատնէշ,
Ծածկես զըլուխ զերդ սաղարթուք վարդիկ գեղաղէշ,
Եւ կամ մանիշակ պարկեշտ :

Ինձ դու զիարդ զառօրէիցս ընդունայնութիւն
Լըռին շըրթամբ յանդիմանէիր քով անխօսուն,
Յերկնից ևեթ տեսիլ ներեալ դոյզն ընդ պատուհան,
Սիրոյ արժանի ցուցեալ խարիսխ զերկին միայն.
Աստիք՝ հովանի ունայն :

Արդ ի՞բր առ իքէն բաժանեցայց, խըրճիթ սիրուն,
Ի՞բրու մոռանալ զառ իս ցուցեալ մըտերմութիւն.
Ո՜հ, ինձ որմունք քո պարկեշտափայլ, աթոռ, սեղան
Յիշատակօք սիրոյ սըրբեալ են նըւիրական,
Բազմատենչալիք համայն :

Քանիցըս դու տեսեր իխինդ զիս բերկրապատար
Այտիւք վարդահոյլ փրթթեալ իժպիտ սիրահրավառ,
Եւ քանիցն սքօղեալ իմուն զիմ ականողիս,
Ըզտըխրութեան հոսեցուցանել պըղտոր ալիս
Սըրտատոչոր իլալիս :

Իքեզ տեսեալ սիրոյն զիմ հետս յուզիւր յիս զորով,
Իբարեբաստ մըտօք յաւուրան այն ահ Թըռչելով,
Ցոր զիրկընդխառնեալ ամոլք կրկին սիրապըսակ,
Ցօղ խնդազեղ յաղբերց սըրտի զմիմեամբ հոսէաք
Ջերթ առաւօտեան առուակ :

Անցին, ահ, այն աւուրք խընդի ցօղք ցամաքեցան,
Եւ ամառնակէզ որպէս ըզտունկ ծարաւիմ յայն,
Առ վըտակօք յիշատակաց քոց սիրայորդոր
Դեզերէր սիրտս հարուլ զպատուք իւր սըրտատոչոր,
Անցելոյն յալիս իջաւոր :

Բայց արդ հրաժարիմ իսահմանաց քոց տարադէմ
Քան ուղևոր իհայրենեաց յարտօսր ջերմաջերմ,
Վա՛հ, վերջին զայս յետադարձիկ առ քեզ երերուն
Բարաւորիդ քո ձօնելով համբոյր դողդոջուն
Ո՛հ իմ խրճիթ սիրասուն :



ՏԱՂԵՐ.

ԱՌ ԼՈՒՍԻՆ

ԱՌ Լ. Ս. Գ.

Միայնութեանց աւանիկ ժամ, ով Լուսին,
Աւանիկ պահ զոր դու սիրես գիշերին.
Ժամ է վարդին, ժամ սոխակին, ժամ խիւղ,
Եւ քո լուսոյդ տըխրազդեցիկ լըռասէր՝
Անշըշունջ գիշեր:

Գիշեր՝ որ քեզ հաւատարիմ և տարփող՝
Ինոյն ցանգ ժամ առ քոյդ յուսով կանխէ շող,
Եւ տրտմագին պատէ ըզդէմս իւր խուզ՝
Թէ անտեսես երբէք նմին այցելու,
Ցառնել երկնաչու:

Նոյն և ընդ էս համայնասփիւռ Թախծութիւն՝
Թէ ազահես , Լուսին , զդիմիդ բերկրութիւն .
Ջերդ կոյս պըճնեալ յամբըծութեաննանդ ծաղկունս՝
Որ ուըշտիցէ ըզշնորհ բըբացն իւր սիրուն
Տարփից պարմանուոյն :

Այո՛ բնութեան դու սէր հանուրց ես Լուսին .
Իլոյս քո՝ սիւզք թեթևազոյնս ոստոստին .
Լեռնակուտակ փշրին կոհակք ընդ ոտիւք ,
Եւ հեշտանան լիճք, դաշտօրէք և ծըմակք ,
Եւ նըսեմ պուրակք :

Ասեն թէ արփին հեղու ծաղկանց ըզպչրանս .
Բայց մայրենի դո՛ւ ես որ տաս ըզգըգուանս .
Դու որ իշաղդ արկեալ նոցին և զգեղդ հեզ,
Նազիլ , ճոճիլ և հրապուրել իբր ըզքեզ՝
Ընդ այգն արձակես :

Քո միայն շող , Լուսին , անջեր և բընքոյշ
Կարէ զնըւազսն ազդել ախորժ և անոյշ ,
Մինչ իբըբացն իքո նըշոյլս արծարծել
Սիրատըխուր գեղցէ զշնչիկն իգեղոն
Սոխակ՝ քոյդ Մեմնոն :

Քանի ախորժ դիտել ծաւալ ըզմարգաւ
Ըզքեզ ինինջ, մերթ ընդ առուին քաջարշաւ.
Մերթ ցողալիր հանգուցանել զաչս իթուի,
Եւ մերթ զերթ կոյս օրիորդ յիւր լոգարան
Լիւղել յՈվկէան :

Կամ այլ երբեք յերկնադէզ սարս անդ կառեալ
Դըշխոյակերպ բազմել իբարձ փրփրափայլ,
Անդուստ իքոյդ վերամբառնալ սրսկական,
Պըսակ իզարդ ածեալ վարսիցդ ոսկեհոյլ
Զաստեղացըն բոյլ :

Ըզքո լուսով՝ մենութիւն ոչ է տըխուր,
Եւ անապատք՝ ոչ ևս ամայք են թափուր.
Կակուղ թըւի ոսկերաց հող մամռապատ
Որ իքոյին գըրգի ճաճանչ, ով Լուսին,
Մըխիթար շիրմին :

Մինչ ինըշոյլսդ առաջնորդեալ ուղիաճեմ
Զերկարաձիգ նոճեաց շըքով անդաճեմ,
Անդ՝ ուր իքուն կան այնքան սիրտք անխըլիրտ,
Եւ իմ ևեթ հէք հըսկէ սիրտ երերուն
Զերթ կանթեղ մահուն.

Ո՜հ հեշտացո՛ , Լուսին , ըզվայր զայն անլոյս ,
Մի զլուսալիր շողդ ազահել ճակատուս՝
Զորով Թախիծք սեաւ, խոհք ու ցնորք Թևածեն.
Մեղկեան զսարսուռ ցուրտ որ զոգւոյս յուսահատ
Մահու յանապատ :

Թորժամ կարդամ , և զիմ ևեթ լըսեմ զանգ ,
Հեծեմ , և չիք որ անդրադարձ հեծէ բանք .
Լամ , 'ւ արտասուաց չեն և այն դուն ըսփոփանք
Զի մըտերմին ժողովիցին գէթ իգիրկ
Այն ցողք սիրալիրք . . .

Մի ինձ դու կաս անկարեկիր, ո՛վ Լուսին.
Ասա. ըզգան զայն ցող ոսկերք իշիրմին . . .
'Ի իլբռուԹեան երկրիս՝ յերկնից անդ բարձունս
Զիք որ ձայնիս պատասխանէ աղեկէզ ,
«Դեռ սիրեմ ըզքեզ » :

ՏԱՂԱՆՔ.

ՔՆԱՐ ՊԱՆԴԽՏԻՆ



Ա՛յսպէս իմ քընար, քընար պանդխտին,
Իբող ըզգըլուխ ծածկեալ սրգային,
Հեծես ցանգ տըրտում, ինթախիծ և վիշտ . . .
Քո թելք տամկասցին, ոհ, յարտասուս միշտ:

Ա՛յսպէս դու սրրտի ընկեր անմեկին
Հայրենակորոյս թըշուառ պանդխտին,
Անթարգման ցաւոց նորուն սրգակից,
Եւ տաս արձագանգ նըմին կարեկից:

Քընար, դու հիրին շընորհ երկնային
Տըւար յերկրայնոցըս միակ բաժին.
Դու իւր անկապուտ գանձ և ըսփոփանք,
Դու ըգնըժդեհին անուշես ըզկեանք:

841

Ո՜հ, թէ դու չէիր, զիարդ մէն միայն
Նա կարէր սահել ընդ աշխարհ ունայն.
Ո՞ւստ իլբքեալ սիրտն այն վառէր խրախոյս,
Զիարդ արծարծէր յոգի նորուն յոյս:

Դու նորուն ցաւոց ըզգացող և դէտ,
Ըզդաշտ և հովիտ լրցեր սրգաւէտ,
Ետուր զիւր ողջոյնս յԱրուսեակ, յԱրփին,
Եւ ընդ տրխրաժմիտ լացեր կոյս Լուսին:

Ըզքեզ ընդ անուն հարեալ, ով քընար,
Գրնաց ն՝ արտալած ընդ աստեղբք օտար,
Քեւ ըզՀայրենեացն ողբաց ըզկորուստ,
Եւ ըզյիշատակս սրրտի իհեռուստ:

Ա՜հ, զիարդ ըզքեզ ոչ սիրել, քընար,
Որ մինչ այլք ամէն լրքին զիս յաշխարհ՝
Դու լոկ մասնակից բաղդին իմ տրխուր,
Եւ փրշրեալ սրրտի մրխիթար ետուր:

Զայն քո՝ թէպէտ ոչ հրզօր ոչ վրսեմ,
Շուք ոչ քերթողաց իքեզ երկնաճեմ,
Այլ ինձ սիրելի խոնարհ քո մրրմունջ,
Եւ ոգւոյս իճահ թելրդ են մեղմահունչ:

Եւ արդ ճն բընաբ, բընար պանդխտին,
Ե՛րթ դու առ եղբարս հաղորդս իմ բաղդին,
Ե՛րթ և սրբատառուչ իձայն բազմավէր
Հայրենեաց իյուշ տուր նոցա հրաւէր:

Ե՛րթ շարժել իգուն ըզսիրտս ապառում,
Ե՛րթ զոլ ողբակից պանդըխտին տրբտում.
Ե՛րթ, և խնդումեան իտօնս Հայկազանց
Թել մի և քեզէն խառնել սիրախանձ:

Թէ զարդիւնս տեսցես ազգասէր ձեռաց՝
Բարձրացո՛ ըզձայն ինքերբող փառաց,
Եւ թէ իղձս իսիրտ՝ հայրենեաց յօգուտ՝
Խրախոյս ազդեսջիր իշունչ եռանդնուտ:

Զոյս սիրեն ըզՀայս՝ սիրեա դու կըրկին,
Եւ ողոբաւոր լեր առ Թըշնամին,
Պատմեա զմեր աղէտս, ցոյց ըզՀայաստան . . .
Լուծցին և վէմ սիրտք յերաշխէպս այնքան:

Իսկ թէ չըգիտէ ոք զորդիս Հայկայ,
Կամ մեռեալ իսպառ թէ կարծէ զնոսայ,
Ցոյց զի դեռ յերակս Հայոց վառի հուր,
Եւ թէ՝ ըսպասեմք երկնացոյց աւուր . . .

Աւուր՝ յոր Էին Աղեղն հաշտութեան
Դարձեալ ի Մասեաց փայլի յարտեւան,
Եւ Հրեշտակն Հայոց իփոդ երկնաւունչ
Ցոգիս Թորգոմեանց ազդիցէ նոր շունչ . . . .

Ո՜հ, արդեօք զաւուրն այն երանաւէտ
Տեսից և ես զայդ ծագեալ լուսաւէտ,
Եւ սիրտ վըշտահար յաւետեաց յայն Թինդ
Թափեսցէ ըզսուգ յանտըրտում իսինդ.

Թէ՝ արդեօք յայնժամ տապանին իմոյդ
Սիրտ իմ անդեղեւ, շիջեալ աչաց փայլ,
Էրտեալ իղձք հրաւառ և ուխտք իմ ամէն
Ընդ գերեզմանին ցուրտ վիմաւ նընջեն . . . .

Բայց դու մի լըռեր, մի նընջեր քընար,
Դու զիմ հընչեցո միշտ զուխտ և բարբառ.
Կանց հրսկել առ դուրս իմ գերեզմանին,
Եւ երգեսն վասն իսնքընար պանդըխտին։

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ
ՄԻԱԲԱՆԻՆ
«ՏԱՄԱՏԵԱՆ» ՄԱՏԵՆԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ - ՀԻՄՆԵՍԼ 1942